



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

1 (65)

ԵՐԵՎԱՆ

2016

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

1 (65), 2016

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախառն լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ.
(Մոսկվա, ՌԴ)

Ալեքսանդր Կորնիլով

Նիժնի Նովգորոդի Ն.Բ. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր
(Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արամ Սաֆարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Արթուր Աթանեսյան

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

Բաբկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր (Մոսկվա, ՌԴ)

Հրանուշ Հակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դաբալ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

Մամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Մելրան Օհանյան

ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ

Մերգեյ Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար,

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 1 (65), 2016թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն
<i>Գլխավոր խմբագիր</i> Գագիկ Հարությունյան	Գագիկ Հարությունյան Բազմակենտրոն համակարգի որոշ առանձնահատկություններ 5
<i>Գլխավոր խմբագրի տեղակալներ</i> Վահագն Ազյան Վարդան Աթոյան	Արման Նավասարդյան Փոքր պետությունները հակաահաբեկչական կռալիցիաների եռապատկերում 19
<i>Պատասխանատու խմբագիր</i> Խոնարհիկ Քարառլյանյան	Վահրամ Տեր-Մաթևոսյան Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում 33
<i>Պատասխանատու քարտուղար</i> Լուսինե Բադրամյան	Մամվել Մանուկյան Հայաստանի երիտասարդությունը և քաղաքական գործընթացները 58
Աննա Ժամակոչյան Արեստակես Սիմավորյան Էդուարդ Դանիելյան Վահրամ Հովյան	Ռոբերտ Ղևոնդյան Էթնիկ լոբբինգն ԱՄՆ-ում. էթնիկ խմբերի շահերը ԱՄՆ քաղաքական օրակարգի ձևավորման առանցքում ... 69
	Տիգրան Ղանալանյան Հայերի արտագաղթը Կիպրոսից (1955-1970-ական թթ.) 80
	Արմեն Ղալեչյան Տեղեկատվական գործողությունների նշանակության և արդյունավետության գնահատման մեխանիզմների կարևորությունը արդի զինված ուժերում 94
	Ալիդա Անաստասյան Հեռուստատեսային գովազդը և դեռահասի արժեհամակարգը 104
	Տաթևիկ Ղազարյան Յանցային պատրաստվածության տարածաշրջանային ինդեքսը 113
	Հուշագիր հեղինակին 129

**ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(2015-ի ամփոփման և 2016-ի կանխատեսումների փորձ)**

Գազիկ Հարությունյան*

Բանալի բառեր՝ միաբևեռ աշխարհի կազմալուծում, բազմակենտրոն համակարգ, ինքնավարության պոտենցիալ, դեգլոբալիզացիա, ինտեգրացիոն նախագծեր, «Իսլամական պետություն», աշխարհաքաղաքական անհամատեղելիություն:

ԱՄՆ Հետախուզության ազգային խորհրդի (NIC) 2003թ. հրապարակած «Գլոբալ միտումներ 2020» (*"Global Trends 2020"*) զեկույցի Ռուսաստանին վերաբերող բաժնում նշվում էր, թե «անհնար է, որպեսզի այդ երկիրը վերադառնա Արևմուտքի հետ ռազմական և գաղափարախոսական հակամարտության՝ անգամ վիրտուալ ոլորտում»¹: Նկատենք, որ այդ տարիներին հրապարակվեցին նաև ավելի իրատեսական կանխատեսումներ [1]: Սակայն, անկախ տարաբնույթ մոտեցումներից, այսօր կարելի է արձանագրել, որ 2015-ին միաբևեռ աշխարհակարգը վերջնականորեն կազմալուծվեց և ձևավորվեց բավական հստակ բազմակենտրոն համակարգ: Այդ գործընթացն առաջին հերթին պայմանավորված էր Ռուսաստանի վերադարձով «մեծ քաղաքականություն» և Չինաստանի մուտքով գլոբալ աշխարհատնտեսություն, ինչն ուղեկցվում է չինական առանձնահատկություններով պայմանավորված ռազմավարությամբ:

«Ինքնիշխանությունների շքերթ»

Արդի բազմակենտրոն աշխարհակարգի տրամաբանությունը պրոյեկտվում է նաև տարածաշրջանային մասշտաբի երկրների վրա: Այդ տեսանկյունից բնորոշ է իրադրությունը Մեծ Մերձավոր Արևելքում, որտեղ ոչ միայն Իրանը,

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

¹ "Global Trends 2020", www.cia.gov/nic/PDF_GIF_2020_Support/2004_04_25_papers/eurasia_summary.pdf, *Сергей Гриняев, Михаил Ковтуненко*, Будущее России по оценкам Национального совета по разведке США, Основные ориентиры прогноза «Глобальные тенденции 2020», <http://agentura.ru/dossier/russia/people/grinyaev/2020/>

որն արդեն երկար ժամանակ քաղաքական ինքնուրույնության օրինակ է հանդիսանում, այլև Թուրքիան, Սաուդյան Արաբիան և Իսրայելը սկսել են վարել բավական ինքնավար քաղաքականություն: Այն միշտ չէ, որ համաձայնեցված է ԱՄՆ-ի հետ, ինչը նախկինում դժվար էր պատկերացնել: Ինքնավարության պոտենցիալ է կուտակվում նաև եվրոպական երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում և Չեխիայում: Վերջինիս նախագահ Միլոշ Ջեմանն իր մոտեցումներով երբեմն հիշեցնում է 1968թ. «Պրահայի գարնան» առաջնորդ Ալեքսանդր Դուբչեկին:

Հատկանշական է, որ այսօր անգամ փոքր երկրները փորձում են ինքնուրույն կեցվածք ընդունել, և դրա օրինակ կարող են լինել Ադրբեջանի կողմից «մարդու իրավունքների» համատեքստում ԱՄՆ-ին ներկայացված մեղադրանքները: Այս ամենը հիշեցնում է ԽՍՀՄ փլուզումից հետո սկսված «ինքնիշխանությունների շքերթը»:

Վերոնշյալ գործընթացները կարելի է մեկնաբանել որպես «ազգային պետության» ինստիտուտի վերականգնման և Վեստֆալյան համակարգին վերադառնալու փորձ: Միևնույն ժամանակ, նման միտումը չի վերացրել «արտաքին ղեկավարման» տակ գտնվող և ատրիբուտային բնույթի թվացյալ անկախություն ունեցող երկրների խնդիրը: Ավելին, ստեղծված իրավիճակում աճել է մեծ տերությունների գայթակղությունը՝ «ձեռք բերել» նման կարգավիճակի պետություններ (դա տեսնում ենք, օրինակ, Ուկրաինայի պարագայում): Նման ռազմավարությանն են ուղղված նաև տնտեսական և ռազմաքաղաքական բնույթի ինտեգրացիոն նախագծերը: Այս ամենի համատեքստում կարելի է ամրագրել, որ գլոբալ հարթությունում հաճախ խիստ հակադիր միտումների համատեղությունը բազմակենտրոն աշխարհի գլխավոր բնութագրիչներից մեկն է հանդիսանում:

Բացարձակ գերակայող ուժի կենտրոնի բացակայությունը հանգեցրել է նաև այսպես կոչված «անդրազգային պետության» կազմավորմանը, ինչպիսին է «Իսլամական պետությունը» (ԻՊ), որի աշխարհաքաղաքական դերակատարումն այսօր դժվար է թերագնահատել: Լրացուցիչ աճել են նաև անդրազգային տնտեսական-ֆինանսական-տեղեկատվական, հասարակական-քաղաքական կառույցների և անգամ այս կամ այն հատկանիշներով միավորված ոչ պաշտոնական խմբերի (օրինակ՝ միջազգային բյուրոկրատիայի կամ միասեռականների շարժման ակտիվիստների) կազմակերպչական հնարա-

վորությունները: Նման կառույցները սեփական, կորպորատիվ պատկերացումներ ունեն գլոբալ քաղաքականության և կառավարման վերաբերյալ, և այսօր դրանց մի մասը զգալի աշխարհաքաղաքական դերակատարում է ձեռք բերել: Նման կառույցները ոչ միայն մրցակցում են ազգային պետությունների հետ, այլև, ըստ որոշ փորձագետների՝ իրենց ձեռքն են վերցրել նույնիսկ խոշոր պետությունների արտաքին կառավարումը՝ չկրելով որևէ պատասխանատվություն այդ երկրների բնակչության հանդեպ [2]:

Գաղափարախոսական այլընտրանք

Միաբևեռ աշխարհի կազմավորումն ընթանում է նաև գաղափարախոսական հարթությունում: Դա պայմանավորված է, մասնավորապես, նրանով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո նեոլիբերալ քաղաքական-տնտեսական համակարգը մոնոպոլ կարգավիճակ էր ձեռք բերել: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս ԽՍՀՄ փորձը, նման կարգավիճակն արգելակում է ցանկացած գաղափարախոսության զարգացումը և, ի վերջո, հանգեցնում է գաղափարա-բարոյական վերասերման և դրանից բխող՝ կառավարման արդյունավետության անկման [3]: Ներկայումս նեոլիբերալ համակարգը սկսել է զիջել դիրքերը: Այդ գործընթացը տեղի է ունենում երկու ուղղությամբ:

Արտաքին ոլորտում դա պայմանավորված է Չինաստանի և արդեն Ռուսաստանի գործոններով, որոնք, կարևորելով սեփական արժեհամակարգի առանձնահատկությունները, ձևավորում են բազմազգաղափարախոսական համակարգ, ինչն էլ թույլ է տալիս նրանց մրցունակ լինել գլոբալ հարթությունում [4]: Դրան զուգահեռ՝ աճում է նաև իսլամական երկրների գաղափարական տարանջատումը, որի հիպերթոնֆիկ արտահայտությունն է ԻՊ-ը:

Խնդիրներ են առաջացել նաև արևմտյան հասարակություններում, որտեղ տոտալիտար հատկանիշներ ձեռք բերած նեոլիբերալիզմն առաջացրել է այլախոհական շարժում, ինչը մասամբ հիշեցնում է ԽՍՀՄ նմանատիպ շարժումը [5]: Թերևս խորհրդանշական է, որ Միացյալ Նահանգներում նախագահական ընտրություններում մասնակցում է սոցիալիստ Բերնի Սանդերսը, իսկ «սոցիալիզմ» բառը մտել է ակտիվ տեղեկատվական շրջանառության մեջ¹: Հարկ է նաև նկատել, որ նեոլիբերալիզմի գերակայության հե-

¹ «Социализм – самое популярное слово по запросам «MERRIAM-WEBSTER», <http://regnum.ru/news/society/2042413.html>

տևանքով առաջացած հոգևոր-բարոյական վակուումը նպաստում է այն բանին, որպեսզի արևմտյան որոշ երկրների բնակիչները հարեն ԻՊ-ին կամ նմանատիպ կազմակերպություններին: Այս ամենն ուղեկցվում է տնտեսական բևեռացմամբ, այսպես կոչված «միջին խավի» դերակատարման նվազմամբ և նրա վիճակի վատթարացմամբ¹:

Այսպիսով, բազմակենտրոն համակարգը ենթադրում է ոչ միայն աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական, այլև գաղափարախոսական կոշտ մրցակցություն: Կան բոլոր նախադրյալները ենթադրելու, որ նշված գործոններով պայմանավորված գործընթացները 2016թ. ակտիվանալու են, ինչը նպաստելու է բազմակենտրոն համակարգի բյուրեղացմանը: Նման զարգացումները միննույն ժամանակ պարտադրելու են գլոբալ դերակատարներին՝ ակտիվացնել միմյանց միջև ընթացող երկխոսությունները և առկա բազմակողմանի հարաբերությունները, սակայն միանգամայն այլ, քան միաբևեռ համակարգում, կաննոններով: Սակայն ներկայումս այդ հարաբերությունները դեռևս հեռու են հավասարակշռված լինելուց, ինչը բնորոշ էր Առաջին սառը պատերազմի այսպես կոչված «պարպման» (*разрядка*) ժամանակաշրջանին, այսինքն՝ լարվածության աճի միտումը պահպանվելու է: Դա պայմանավորված է նաև մեկ այլ գործընթացով՝ «դեգլոբալիզացիայով», որը երբեմն անվանում են նաև «ֆրագմենտացիա»:

Դեգլոբալիզացիա

Ինչպես հայտնի է, գլոբալիզացիայի (հետազոտողներն այն երբեմն արդարացիորեն անվանում են *վեստերնիզացիա* [6]) հիմնական գործիքներից են ԵՄ-ը, ՆԱՏՕ-ն, Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը, Համաշխարհային առևտրական կազմակերպությունը և գործող ու միմյանց փոխլրացնող բազմաթիվ այլ համահունչ կառույցներ: Ներկայիս իրողություններում կարևորություն են ստանում վերոնշյալների հետ այս կամ այն չափով մրցակցող կառույցները՝ Շանհայի համագործակցության կազմակերպությունը, ԲԲԻԿՄ-ը, ԵՏՄ-ն, Ենթակառուցվածքային ներդրումների Ասիական բանկը և դրանց համատեքստում գործող այլ կառույցներ: Այդ կազմակերպու-

¹ «Состояние половины населения Земли сравнялось с накоплениями 62-х богатей», <http://lenta.ru/news/2016/01/18/62men>, «Курс на вымирание: Американский средний класс медленно, но верно сокращается», <http://lenta.ru/articles/2016/01/18/middleclass/>.

թյունները կարելի է ընդունել որպես բազմակենտրոն աշխարհակարգի գործիքներ, նրանց գործառույթները ենթադրում են նաև որոշակի դիմակայություն և հավասարակշռում են Արևմուտքի հովանու տակ գտնվող կառույցների գործունեությունը: Այս և նախորդ ենթազույգումներում նշված գործոնների համախումբը, պատժամիջոցների համատարած կիրառումը և, ընդհանրապես, «համաաշխարհային տնտեսական պատերազմը» խոչընդոտում են գլոբալիզացիայի (այս հասկացության ընդունված պատկերացումների շրջանակում) գործընթացին կամ, առնվազն, սահմանափակում են նրա գործառույթները:

Զարգացման նման հնարավորությունը դիտարկվել է դեռևս 2010թ. ԱՄՆ Ազգային հետախուզության խորհրդի (NIC) և ԵՄ Անվտանգության խնդիրների հետազոտության ինստիտուտի համատեղ կանխատեսումներում¹: Այդ հետազոտությունում «ֆրագմենտացիան» և գլոբալիզացիոն գործընթացների դանդաղումը ներկայացվել էին որպես «ամենավատ սցենար» և կրում էին «Խաղի (քաղաքական) ռեալությունը. հակամարտությունը գերազանցում է համագործակցությանը» խորագիրը: Մակայն այդ «վատ» կանխատեսումները թվում են խիստ լավատեսական, երբ դրանք համեմատում ես ներկա իրողությունների հետ: Ներկայի իրողությունները դեգլոբալիզացիայի կամ «ֆրագմենտացիայի» համատեքստում, ըստ ամենայնի, կարելի է ընդունել որպես բազմակենտրոն համակարգի հիմնական առանձնահատկություններից մեկը:

Վերոնշյալ հանգամանքի վկայությունն են տարբեր քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական չափանիշներ ունեցող «ազդեցության տարածման այն նախագծերը», որոնք ձգտում են իրագործել գլոբալ դերակատարները, և առաջատարն այս խնդրում Միացյալ Նահանգներն է:

Միացյալ Նահանգներ. «ակտիվ պաշտպանություն»

ԱՄՆ-ը շարունակում է մնալ առաջատար գլոբալ հարթությունում, սակայն արդեն «առաջինը հավասարների մեջ» կարգավիճակով: Այս նոր իրողությունը միանգամայն ադեկվատ է ընկալվում ամերիկյան վերլուծաբանական հանրությունում և, որոշակի վերապահումներով՝ քաղաքական ընտրանու կողմից:

¹ Global Governance 2025: At a Critical Juncture. National Intelligence Council, European Union Institute for Security Studies, September 2010, http://www.iss.europa.eu/uploads/media/Global__Governance_2025.pdf.

Ընդհանուր առմամբ, 2015-ի ԱՄՆ ռազմավարությունը կարելի է բնորոշել որպես «ակտիվ պաշտպանություն»: Այդ տերությունը կարողացավ լավագույնս օգտվել իր իսկ մշակած ֆինանսական մեխանիզմներից, և ինչպես գլոբալ ռազմաքաղաքական լարվածությունը, այնպես էլ «համաշխարհային տնտեսական պատերազմը» միայն նպաստեցին ԱՄՆ տնտեսական ամրապնդմանը (չնայած պարտքերի և դոլարի հետ կապված հիմնարար բնույթի հայտնի ռիսկերին): Իրենց բազմավեկտոր և գլոբալ քաղաքականության համատեքստում ամերիկացիները ձգտում են իրագործել մի քանի խոշոր քաղաքական-տնտեսական նախագծեր: Համառոտ դիտարկենք դրանցից մի քանիսը.

- Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում իր ազդեցությունն ամրապնդելու նպատակով 2015-ին ԱՄՆ-ը «Տրանսխաղաղօվկիանոսյան գործընկերություն» (*TTII*) անվանումը կրող համաձայնագիր կնքեց տարածաշրջանի մի շարք երկրների հետ (որոնք ապահովում են համաշխարհային արտահանման 25%-ը) ազատ առևտրի գոտի ստեղծելու վերաբերյալ: Այս գործընկերությունում բացակայում է ՉԺՀ-ն, որի ազդեցությունն էապես աճել էր «Հարավարևելյան երկրների ասոցիացիայի» (*ACEAH*) և «Ասիա-խաղաղօվկիանոսյան համագործակցության» (*ATAC*) ձևաչափերում: Ամերիկյան նախաձեռնությունը կոչված է հավասարակշռել ստեղծված իրադրությունը:
- ԵՄ-ի նկատմամբ վերահսկողությունը հնարավորինս պահպանելու նպատակով շարունակվել են բանակցությունները «Տրանսատլանտյան առևտրային ներդրումային գործընկերություն» (*TTIII*) կոչվող ազատ առևտրի գոտի ստեղծելու ուղղությամբ: Բավական է նշել, որ այս ձևաչափում ներգրավված երկրների ՀՆԱ-ն կազմում է համաշխարհայինի 40%-ը, իսկ ապրանքաշրջանառությունը՝ 30%-ը: Նախագծի (որը միանշանակ չի ընկալվում եվրոպական հանրության կողմից) խնդիրն է նաև կանխարգելել չինական և ռուսական գործոնների ազդեցության աճը ԵՄ-ում: Պատահական չէ, որ ԱՄՆ հատուկ ծառայությունները մտահոգված են «ռուսական ազդեցության գործակալների» գործունեությամբ ԵՄ-ում¹: Մասնավորապես ԵՄ-Ուկրաինա-ՌԴ հարաբերությունների համատեքստը և «Մինսկի ձևաչափի» գործունեությունը միշտ չէ, որ համընկ-

¹ <http://ru.exrus.eu/Agentura-Putina-na-Zapade-Chast-3-Kremlevskiye-agenty-vliyaniya-v-Yevrope-id557c4238ae20158d507936e5>

նում է սեփական ազգային շահերի վերաբերյալ ամերիկյան պատկերացումների հետ: Կարելի է ամրագրել, որ այսօր ԵՄ-ում ամերիկյան բացարձակ գերակայության մասին խոսելը փոքր-ինչ ժամանակավրեպ է:

- Ամերիկյան աշխարհամասում ԱՄՆ-ը վերականգնեց հարաբերությունները Կուբայի հետ, կարողացավ հասնել նրան, որ Վենեսուելայի խորհրդարանական ընտրություններում հաղթեց ընդդիմությունը, և ընդհանրապես ամրապնդեց դիրքերը Լատինական Ամերիկայում: Միննույն ժամանակ, «նորացված Մոնրոյի դոկտրինի» իրականացմամբ նույնպես նկատվում են «ակտիվ պաշտպանության» տարրեր. նախկինում ԱՄՆ-ը կարող էր, օրինակ, իրեն թույլ տալ «չմանրանալ» Կուբայի խնդրում և պահպանել «ստատուս քվոն»:
- Ամենամեծ խնդիրները ԱՄՆ-ի համար առկա են Մեծ Մերձավոր Արևելքում, որտեղ իրադրությունը զգալի չափով դուրս է եկել ամերիկյան վերահսկողությունից, և այդ տարածաշրջանում էապես աճել է Ռուսաստանի, Իրանի և Չինաստանի դերակատարումը:

Առկա միտումների պահպանման պարագայում ԱՄՆ հարաբերություններն աշխարհաքաղաքական խոշոր դերակատարների հետ կարող են մոտենալ դինամիկ հավասարակշռության: Հաշվի առնելով այն ավանդույթը, որ նախընտրական տարում ԱՄՆ ղեկավարությունը խուսափում է կտրուկ փոփոխություններից, կարելի է ենթադրել, որ այդ տերության հիմնական ջանքերը 2016-ին ուղղված կլինեն տնտեսական ոլորտին, որտեղ նրանք շատ արդյունավետ են գործում: Տեսանելի ապագայում Միացյալ Նահանգները կպահպանի առաջատարությունը, և այդ իրողության գրավականն է նրա տեխնոլոգիական (լայն մեկնաբանելով այս հասկացությունը) առավելությունը մրցակիցների հանդեպ [5]:

***Ռուսաստան. կիսապատերազմական կարգավիճակ և
«աշխարհաքաղաքական անհամատեղելիություն»***

Եթե փորձենք բնութագրել այս տերության 2015-ի կարգավիճակը, ապա կասկած չի հարուցում, որ այն առավելագույնս մոտ է պատերազմականին և՛ ռազմական, և՛ տնտեսական տեսանկյունից: Փորձենք համառոտ ներկայացնել ՌԴ հիմնական գործողությունները և խնդիրները.

- Որպես 2015-ի ամենանշանակալի իրադարձություն պետք է համարել Սիրիայում *ԻՊ-ի* դեմ ՌԴ օդուժի կիրառումը: Ռուսական ավիացիայի հարվածները և Սիրիայի ու Իրանի ցամաքային ուժերի՝ դրանց ուղեկցող գործողությունները նկատելիորեն փոխեցին ռազմաքաղաքական իրադրությունը ոչ միայն Սիրիայում, այլև ողջ տարածաշրջանում: Այս հանգամանքը պարտադրեց ԱՄՆ-ին ակտիվացնել *ԻՊ-ի* դեմ ուղղված քաղաքականությունը, որին հետո միացավ Ֆրանսիան, սակայն այլ դրդապատճառներով: Ըստ ամենայնի, ՌԴ ջանքերը կարող են 2016-ին զգալի նվազեցնել իսլամիստների ազդեցությունը, սակայն հաշվի առնելով *ԻՊ* կազմակերպչական ցանցային բնույթը, կարելի է ենթադրել, որ դա չի նվազեցնելու ահաբեկչական գործողությունների հետ կապված ռիսկերն այլ երկրներում: Այս ամենի կապակցությամբ նկատենք նաև, որ բացի Հյուսիսային Կովկասից, ՌԴ-ն *ԻՊ-ի* հետ կապված խնդիրներունի նաև Միջին Ասիայում, որտեղ նկատելիորեն աճել է ծայրահեղականների գործունեությունը՝ կապված, մասնավորապես, աֆղանական զարգացումների հետ:
- Որպես ՌԴ սիրիական ռազմավարության գրեթե անխուսափելի հետևանք՝ սկզբունքորեն սրվեցին Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունները, և այդպիսով վերականգնվեց այդ պետությունների մոտ 250-ամյա (առաջին ռուս-թուրքական պատերազմը տեղի է ունեցել 1768-1774թթ.), եթե կարելի է այսպես ձևակերպել՝ «աշխարհաքաղաքական անհամատեղելիությունը»: Այն ընդհատվել էր ընդամենը երկու ոչ այնքան երկար ժամանակահատվածներում՝ 1917թ. (բոլշևիկյան) և 1991թ. (ազատական) հեղափոխություններին հաջորդած տարիներին, երբ խախտվել էր Ռուսաստանի բնականոն զարգացման «կողը»:
- Որպես մեկ այլ ձեռքբերում կարելի է գրանցել այն իրողությունը, որ 2015-ին ՌԴ-ն կարողացավ խուսափել Դոնբասում և Լուգանսկում լայնամասշտաբ ռազմական գործողությունների ծավալումից, և այդպիսով մասամբ չիրականացան ուկրաինական զարգացումների հետ կապված «վատագույն սցենարները»: Այս հաջողությունը նույնպես պայմանավորված էր ռազմական գործողություններով, որոնք բավական հմուտ իրականացվեցին «Նովոռոսիայում» մինչև հրադադարը: Միևնույն ժա-

մանակ, «Մինսկյան քառյակի» հաստատած ժամանակավոր հրադարարը զգալիորեն պայմանավորված էր ինչպես ԵՄ հիմնավոր անհանգստություններով՝ կապված ուկրաինական անկառավարելի զարգացումների հետ, այնպես էլ ռուսական կողմի ճկունությամբ: Նկատենք, որ «ուկրաինական» քաղաքականությունը Ռուսաստանի «ներսում» պարբերաբար ենթարկվում է քննադատությունների ինչպես ազատական, այնպես էլ ազգայնական քաղաքական ուժերի կողմից: Սակայն պետք է ընդունել, որ ստեղծված իրավիճակում Մոսկվան առայժմ կատարում է, թերևս, միակ հնարավոր ճշգրիտ քայլերը:

- Ռուսաստանի համար ամենահիվանդագին խնդիրները գտնվում են տնտեսական ոլորտում՝ կապված պատժամիջոցների և դրանց մաս կազմող էներգակիրների գների անկման հետ: Վիճակը շտկելու նպատակով մշակվել են տնտեսության առողջացման և ընդհանրապես ինքնաբավ տնտեսական համակարգ ձևավորելու հայեցակարգեր, որոնց որոշ դրույթներ արդեն իրականացվում են: Սակայն նման նախագծերի վերջնական իրականացումը ժամանակ է պահանջում: Տնտեսական իրողությունները մասամբ մեղմվում են արտակարգ իրավիճակներում ռուսական հանրության խարիզմատիկ առաջնորդի առկայության պարագայում, համերաշխություն և մոբիլիզացվելու կարողություն ցուցաբերելու շնորհիվ: Սակայն կենսամակարդակի անկման հետ կապված հարցերը ժամանակի հետ իրենց հրատապությունը չեն կորցնելու, և տնտեսական հիմնախնդիրները Ռուսաստանի համար 2016թ. գլխավորն են լինելու: Տնտեսական գործոնը չի նպաստում նաև ինտեգրացիոն գործընթացներին, հատկապես ԵՏՄ ձևաչափում, որտեղ ՌԴ-ի նկատմամբ պահանջները երբեմն գերազանցում են վերջինիս հնարավորությունները:

Բոլոր դեպքերում պետք է ընդունել, որ Ռուսաստանը վերադարձել է գլոբալ աշխարհաքաղաքական հարթություն և այդ տեսանկյունից ամրապնդել է իր դիրքերը: Կարելի է փաստել, որ «Առաջին սառը պատերազմում» կրած ծանր պարտությունից հետո ՌԴ-ն, չնայած կոմպրադոր տնտեսական-ֆինանսական էլիտայի հետ կապված խնդիրներին, վերականգնել է լիարժեք ինքնուրույնությունը: Առկա են նաև նախանշաններն այն միտման, որ այդ

երկիրը հետևելու է ոչ միայն «Երկրորդ» (ԽՍՀՄ), այլև «Առաջին կայսրության» քաղաքական ավանդույթներին: Համաձայն որոշ ռուս աշխարհաքաղաքագետների՝ այսօր Ռուսաստանը կրկին ձգտելու է իրագործել իր առաքելությունը, որը ենթադրում է հավասարակշռել և կայունացնել համաշխարհային կատակլիզմները: Իսկ դրա համար անհրաժեշտ է հնարավորինս համախմբել հետխորհրդային երկրները և արգելել «քառս ստեղծող» տեխնոլոգիաների տարածումը եվրասիական մայրցամաքում [7]:

Չինաստան. դասական աշխարհատնտեսության վերադարձ

Այս տերությունը, ինչպես և ԱՄՆ-ը, չնայած 2015-ին առաջացած որոշ տնտեսական խնդիրներին, առաջնային ուշադրությունը դարձնում է աշխարհատնտեսությանը: «Մետաքսի ճանապարհ» գլոբալ նախագիծը (որի իրականացման համար ստեղծվել \$40 մլրդ ակտիվ ունեցող հիմնադրամ) ավելի քան հավակնոտ է: Սակայն մեծ է հավանականությունը, որ չինական հետևողական, այսպես կոչված «փոքր քայլերի» ռազմավարությունը թույլ կտա իրականացնել այդ ծրագիրը: Տնտեսական ոլորտում Չինաստանը ռեալ մրցակցում է ԱՄՆ-ի հետ, և դրա վկայությունն է, մասնավորապես, Ենթակառուցվածքային ներդրումների Ասիական բանկի (ABN) ձևավորումը \$100 մլրդ կապիտալով, որտեղ ներկայացված չեն ամերիկացիները:

Այդ ամենին զուգահեռ՝ չինական իշխանությունները սկսել են ուշադրություն դարձնել ռազմական ոլորտին: Դա, մասնավորապես, պայմանավորված է Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ԱՄՆ ՋՈւ ակտիվացման, Հարավչինական ծովում Սպրատլի արխիպելագի (որի նկատմամբ հավանություններ ունեն Վիետնամը, Ֆիլիպինները, Բրունեյը և Մալայզիան) և նման բնույթի այլ խնդիրների շուրջ ծագած լարվածությամբ: Հատկանշական է նաև այն ուշադրությունը, որ չինացիները հատկացնում են Արկտիկային վերաբերող խնդիրներին: Կարևոր իրադարձություն կարելի է համարել Չինաստանի կողմից Ջիբութիում ռազմակայան ստեղծելու նախադեպը: Այդ համատեքստում հատկանշական են 2016-ի առաջին օրերին հայտարարված զինված ուժերի՝ սկզբունքային բնույթի բարեփոխումները:

Արտաքին քաղաքական ոլորտում որպես խնդիր կարելի է համարել 2016-ի սկզբին Թայվանում կայացած ընտրությունները, որում հաղթեցին այդ կղզու անկախության կողմնակիցները:

Պետք է ամրագրել, որ նախագահ Սի Յզիպինի ռազմավարությունը և՛ ներքին, և՛ արտաքին ոլորտներում շատ ավելի ակտիվ է, քան իր նախորդներինը: Պետք է ենթադրել, որ 2016-ին գլոբալ առաջատար տերություն դառնալու Չինաստանի հավակնություններն ավելի ակնհայտ բնույթ կկրեն: Կարելի է ասել, որ այդ տերությունը, հաշվի առնելով «Մետաքսի ճանապարհ» նախագիծը և, մասնավորապես, Մեծ Մերձավոր Արևելքում իրագործվող ներդրումային խոշոր ծրագրերը, բազմակենտրոն աշխարհում ներդնում է աշխարհատնտեսության փոքր-ինչ մոռացված դասական կանոնները:

Եվրոպական միություն. համակարգային ճգնաժամ

Եվրոպային վերաբերող խնդիրներում առաջնայինը փախստականներով պայմանավորված ճգնաժամն է, որը կարող է, որոշ սցենարներում, փլուզել ԵՄ համակարգը: Այս երևույթը լուրջ մարտահրավեր է և վտանգի տակ է դնում Եվրոպայի ապագան [6]: Պատահական չէ, որ հեղինակավոր Միջազգային հարաբերությունների ամերիկյան խորհուրդը համարում է, որ միգրանտների հոսքով պայմանավորված սոցիալական խնդիրների աճը, ահաբեկչական գործողությունները, փախստականների հանդեպ կատարվող բռնությունները կարող են հանգեցնել «քաղաքական անկայունության Եվրոպայում», և դա գնահատում է որպես «առաջնային նշանակություն ունեցող սպառնալիք»¹: Ի լրումն, կան նաև ավելի հեռավոր ապագային վերաբերող սցենարներ, որոնք չեն ավելացնում եվրոպացիների լավատեսությունը: Օրինակ, բրիտանացիների հետազոտությունների համաձայն՝ 2050թ. Մեծ Բրիտանիայի բնակչության 55%-ը լինելու է ոչ քրիստոնյա²: Նմանատիպ կանխատեսումներ կան նաև Ֆրանսիայի և եվրոպական այլ երկրների վերաբերյալ:

Ակնհայտ է, որ վերոնշյալ մարտահրավերների համախումբը, ինչպես դա հետևում է Ֆրանսիայում կայացած վերջին ընտրություններից, արդեն տեսանելի ապագայում հանգեցնելու է ԵՄ երկրների ազգային և աջ ուժերի դերակատարման մեծացմանը: Դա, իր հերթին, նպաստելու է, որպեսզի եվրոպական երկրները ձգտեն ավելի ինքնուրույն լինել ինչպես արտաքին քաղաքականությունում, այնպես էլ ԵՄ շրջանակներում: Եթե առանձնաց-

¹ Preventive Priorities Survey: 2016. http://www.cfr.org/conflict-assessment/preventive-priorities-survey-2016/p37364?cid=ex-Atlantic-Uri_piece-preventive_priorities_survey-20151217.

² A Portrait of Modern Britain, <http://www.policyexchange.org.uk/publications/category/item/a-portrait-of-modern-britain>

ներք ԵՄ-ում յուրահատուկ կարգավիճակով հանդես եկող Մեծ Բրիտանիան, ապա աշխարհաքաղաքական հարթությունում նման միտումն արտահայտվում է առայժմ Ֆրանսիայի պարագայում: Վերջինիս կարգավիճակը տարբերվում է Գերմանիայից, որը, տնտեսապես ավելի հզոր լինելով, ունի դեռևս Երկրորդ համաշխարհայինից հետո ամրագրված հստակ պարտավորություններ ԱՄՆ-ի հանդեպ և գտնվում է ամերիկյան ուշադրության կիզակետում: Իսկ Ֆրանսիան, այդ պատերազմում ունենալով փոքր-ինչ հարաբերական, սակայն, ի վերջո, հաղթողի կարգավիճակ, լինելով ՄԱԿ Անվտանգության խորհրդի անդամ և տիրապետելով միջուկային զենքի, հնարավորությունների սահմանում ավելի անկաշկանդ է իր արտաքին քաղաքականության դրսևորումներում:

Կարելի է կանխատեսել, որ ԵՄ այսպես կոչված «փափուկ ուժի» վրա հենված գլոբալ հավակնությունները պետք է որ նկատելիորեն նվազեն, և այդ միության հիմնական ջանքերն ուղղված են լինելու ներքին խնդիրների լուծմանը: Այս հանգամանքը պայմանավորված է ոչ միայն փախստականների գործոնով: Այսօր ԵՄ-ին իրենց պայմաններն է ձգտում թելադրել Մեծ Բրիտանիան, ինչ-որ չափով՝ անգամ Լեհաստանը, որը որոշ մեկնաբաններ անվանում են «ԱՄՆ 5-րդ շարայում» Եվրոպայում: ԵՄ ընդհանրական հավակնությունների ցուցանիշ կարելի է համարել նաև նախկին խանդավառության նկատելի նվազումն Ուկրաինայի հանդեպ: Այս հանգամանքն, ի վերջո, կարող է նպաստել, որոշակի սահմաններում, ԵՄ-ՌԴ հարաբերությունների կարգավորմանը:

Հայաստան. Գլոբալ հարթությունում ընթացող զարգացումները, անշուշտ, այս կամ այն չափով անդրադարձել և անդրադառնալու են նաև Հայաստանի վրա: Տարածաշրջանային իրավիճակի համատեքստում ՀՀ արտաքին քաղաքական ջանքերը նպաստել են մեր դիրքերի կայունացմանը և ամրապնդմանը: Դրան նպաստում է նաև ՌԴ-Թուրքիա հարաբերությունների սրացումը, ինչն Ադրբեջանին դրել է բավական երկիմաստ վիճակի մեջ: «Մեկ ազգ, երկու պետություն» կարգավիճակը ստիպում է Բաքվին, հատկապես Դավութօղլուի՝ Բաքու կատարած այցից հետո, որոշակի քայլեր կատարել ՌԴ-ի դեմ (հիշենք Ռուսաստանի ադրբեջանական համայնքի հայտարարությունը Թուրքիայի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ): Նման դիրքորոշումը չի կարող հաշվի չառնվել Մոսկվայում, ինչն էլ իր (գուցե և ոչ

շատ նկատելի) հետևանքներն է թողնելու Բաքու–Մոսկվա հարաբերությունների վրա: Սա որոշակի առավելություններ է տալիս ՀՀ-ին, մասնավորապես ԼՂՀ խնդիրների հետ կապված ոլորտում:

ՀՀ հիմնարար խնդիրները, որոնք երբեմն չեն նպաստում ադեկվատ արձագանքելու նոր ձևավորվող աշխարհակարգի մարտահրավերներին, գլխավորապես գտնվում են ներքին դաշտում: Այդ համատեքստում որպես «կրիտիկական ոլորտներ» պետք է դիտարկվեն միմյանց հետ սերտորեն շաղկապված հետևյալ բնագավառները՝ տնտեսություն–տեխնոլոգիաներ–ժողովրդագրություն–տեղեկատվական և գաղափարախոսական միջավայր և այս համախմբից բխող կառավարման որակի խնդիրները:

Հունվար, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Գագիկ Թեր-Արտյունյան*, «Холодная Война – 2», Голос Армении, 04.12.2003, *Գագիկ Թեր-Արտյունյան*, «Многополярная и асимметричная Холодная война», Вестник Академии Военных наук, М., #4(21), с. 23, 2007.
2. *Колин Крауч*, «Постдемократия», М., Изд-во Государственного университета-Высшая школа экономики, 2010; *Михаил Делягин*, «Мнение», «Версия», #49(524), 2015.
3. *Иммануил Валлерстайн*, «После либерализма» /Под ред. Б.Ю. Кагарлицкого/, Едиториал УРСС, 2003.
4. *Գագիկ Արտյունյան*, «Распад «системы» и формирование будущего», Ер., «Нораванк», 2011; *Колин Крауч*, «Странная не-смерть неолиберализма», М., Изд-во «Дело», 2013.
5. *Գագիկ Արտյունյան*, «Экстремизм как вызов глобальной безопасности», М., Философские науки, #12, с. 27, 2015, *Գագիկ Արտյունյան*, «Рост экстремизма и фактор «интеллектуального паритета»», 21-й ВЕК, 3(36), с. 5, 2015.
6. *Александр Панарин*, «Искушение глобализмом», М., Русский национальный фонд, 2000.
7. *Александр Ломанов*, «Общий показатель нации», Россия в глобальной политике, #3, с. 138, 2015, *Кортунов С.В.*, «Национальная идентичность: постижение смысла», М., Аспект Пресс, 2009.

ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գագիկ Հարությունյան

Ամփոփագիր

Միաբևեռ աշխարհակարգի վերջնական տրոհումը և ձևավորվող ռազմաքաղաքական ու գաղափարախոսական բազմակենտրոն համակարգն իրենց կանոններն են թելադրում ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային դերակատարներին: «Դեգլոբա-

լիզազիայի» գործընթացների համատեքստում ԱՄՆ-ը ձգտում է «ակտիվ պաշտպանության» ռազմավարությամբ պահպանել առաջատարի կարգավիճակը: ՌԴ ռազմաքաղաքական և Չինաստանի տնտեսական քայլերը խորհրդանշում են դասական աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության վերադարձը գլոբալ հարթություն: Հիմնական աշխարհաքաղաքական դերակատարների հարաբերությունները, ընդհանուր լարվածության աճմանը զուգահեռ, պարունակում են դինամիկ հավասարակշռության տարրեր, և այդ հանգամանքն ամրապնդվելու միտում ունի:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ МУЛЬТИПОЛЯРНОГО МИРА

Գագիկ Արությունյան

Резюме

Окончательный распад однополярного мира и формирующаяся многополярная политическая и идеологическая системы диктуют свои правила как глобальным, так и региональным акторам. В контексте процессов «деглобализации» США стремятся за счет стратегии «активной защиты» сохранить свой статус лидера. Военно-политические шаги РФ и экономические ходы Китая в каком-то смысле символизируют возвращение классической геополитики и геоэкономики на глобальную арену. Наряду с увеличением напряженности во взаимоотношениях основных геополитических акторов, они несут в себе элементы динамичного равновесия, и это обстоятельство имеет потенциал усиления.

SOME PECULIARITIES OF THE MULTIPOLAR SYSTEM

Gagik Harutyunyan

Resume

The final fragmentation of the monopolar world system and the forming of military, political and ideological multipolar system dictate their rules to both global and regional actors. In the context of “de-globalization” the USA make an attempt to maintain their supremacy through “active defense”. The geopolitical steps undertaken by Russia and economic ones by China symbolize the return of classical geopolitics and geo-economy to the global arena. The relations between the main geopolitical actors, along with the growing tensions contain also elements of dynamic equilibrium, and this condition tends to strengthen.

ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐԻ ԵՌԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Արման Նավասարդյան՝

Բանայի բառեր՝ պատերազմական վեց օջախ Մերձավոր Արևելքում, Իրան-Սաուդյան Արաբիա կոնֆլիկտ, ՀՀ չեզոք դիրքորոշման նպատակահարմարություն, խուսափում հզոր պետության էքզիստենցիալ թշնամանքից, Իսլամաբադի ուղղությամբ հայկական դիվանագիտության ճեղքման հնարավորություն:

2001թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում կատարված աննախադեպ ահաբեկչությունն ազդարարեց, որ համաշխարհային քաղաքական թատերաբեմ է իջնում մահացու վտանգ պարունակող նոր խաղացող՝ իսլամական ծայրահեղականությունը: Այն շատ արագ ընդունեց տրանսազգային, ունիվերսալ բնույթ, ստեղծեց ահաբեկչական ինտերնացիոնալ և դարձավ համաշխարհային քաղաքականության ոչ պետական կոլեկտիվ սուբյեկտ: 1648թ. ստորագրված Վեստֆալյան համաձայնագրից հետո հայտնվեց իսլամական քվազիպետություն (*ISIS*, *ԻԼԻՊ*, *ԴԱԵՇ*), որն առաջին անգամ միջազգային հարաբերություններում սկսեց վիճարկել պետությունների լեգիտիմությունը պատերազմ և խաղաղություն հայտարարելու գործում:

Բնականաբար, հակաահաբեկչական համատեղ գործողություններ ծավալելու անհրաժեշտության հետ առաջինը բախվեցին մեծ տերությունները, որոնց դեմ էլ ուղղված էր ահաբեկչության և էքստրեմիզմի սուր սլաքը: Այդ հետո էր, որ փոքր պետությունները մեծ երկրների կողքին ներգրավվեցին ահաբեկչության ջրապտույտի մեջ, որը նրանց մոտեցրեց այս կամ այն ռազմաքաղաքական բլոկներին կամ հեռացրեց նրանցից:

Նման գործընթացները հատկապես ցայտուն կերպով են դրսևորվում ճգնաժամային տարածաշրջաններում, օրինակ՝ Մերձավոր Արևելքում: Այստեղ ընթացող պատերազմական գործողությունները փոքր պետություններին հարկադրում են հարել տարբեր կոալիցիաների:

* Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, Արտակարգ և լիազոր դեսպան:

Միջազգային ահաբեկչության առաջնեկի՝ «Իրաքի և Լևանտի իսլամական պետության» (ԴԱԵՇ, ISIS, ԻԼԻՊ, «Իսլամական պետություն») դեմ հակա-ահաբեկչական կռավիցիա 2014թ. առաջինը ստեղծեց ԱՄՆ-ը՝ ընդգրկելով դրա մեջ ՆԱՏՕ, Արաբական պետությունների լիգայի և Եվրամիության առանձին անդամների:

«Այն կարծիքը կա, որ Միացյալ Նահանգների ստեղծած կռավիցիային մասնակցում է մոտ 40 երկիր, սակայն դաշնակիցների քանակի հաշվարկներում մշտապես առկա են նկարագրական եզրերը՝ «մոտ», «մոտավորապես», «ավելի պակաս» կամ «առավել քան», ինչպես նաև նշվում են կլորացված թվեր՝ և՛ 65, և՛ 70: Խնդիրն այն է, որ հաշվել անդամների քանակը՝ գործնականում անհնար է, քանի որ նրանց ներդրումն ընդհանուր գործում խիստ տարբերվում է»¹:

Իրոք, ռազմական գործողություններին մասնակցող պետությունների հնարավորությունները, ռազմատեխնիկական և մարդկային ներուժը միանգամայն ասիմետրիկ են: Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ավստրալիայի, Կանադայի կողքին կռավիցիայում ընդգրկված են Իսրայելը, Իռլանդիան, Էստոնիան, Շվեդիան, Շվեյցարիան, Սլովակիան, Ալբանիան, Լյուքսեմբուրգը: Նշված պետությունները մասնակցում են ռազմական գործողություններին ֆինանսական, հետախուզական և նյութատեխնիկական առումով՝ յուրաքանչյուրն իր հնարավորությունների սահմաններում: Իսկ մյուս փոքր պետություններին, որոնք հրաժարվում են գործողություններին նման մասնակցությունից, Վաշինգտոնը հատկացնում է քաղաքական-պրոպագանդիստական դերակատարություն: Այդ առաքելությանը մասնակցում են Վրաստանը, Լատվիան, Լիտվան, Լիբանանը, Մակեդոնիան, Մոլդովան, Օմանը, Սերբիան, Սլովենիան, Խորվաթիան, Չեռնոգորիան, Ֆինլանդիան և Թայվանը:

Առանձին նշանակություն է ստանում արաբական երկրների մասնակցությունն ամերիկյան հակաահաբեկչական կռավիցիային՝ անկախ նրանց օգտակար գործողության գործակցի չափից: Օրինակ՝ Սաուդյան Արաբիայի ներդրումն ընդհանուր պայքարում շատ ավելին է, քան Բահրեյնինը՝ նկատի ունենալով նրանց հնարավորությունների չափն ու ծավալը: Արաբական մաս-

¹ <http://vz.ru/world/2015/10/29/775193.html>

նակցությունը կոալիցիային Միացյալ Նահանգների համար ունի ոչ այնքան գործնական, որքան ցուցադրական և հոգեբանական նշանակություն. ապացուցել համաշխարհային հանրությանը արաբական աշխարհի միասնությունը և համերաշխությունն Ամերիկայի, այլ ոչ թե Ռուսաստանի կամ Իրանի հետ: Լայնորեն շահարկվում է նաև այն հանգամանքը, որ արաբները երբեք չեն մասնակցում Իրաքի տարածքի ոմբակոծմանը, այլ գործում են Սիրիայի ուղղությամբ, ինչն Ասադի հեռացման հարցում նրանց քաղաքական կամքի միասնականության ապացույցն է¹:

Մեծ Մերձավոր Արևելքի մի շարք փոքր պետությունների (Կատար, Բահրեյն, Օման, ԱՄԷ), ինչպես նաև մեծ տերությունների (Մաուրյան Արաբիա, Թուրքիա)՝ ամերիկյան կոալիցիայում գտնվելը կրում է խիստ հակասական բնույթ և գալիս է ապացուցելու քաղաքականության մեջ կրկնակի ստանդարտների առկայության անժխտելի փաստը: Նրանք կարծես թե մի կողմից կռվում են իսլամիստների դեմ, իսկ մյուս կողմից՝ ֆինանսական և ռազմատեխնիկական աջակցություն են ցուցաբերում «Իսլամական պետություն» և «Ջաբհաթ ան-Նուսրա» ծայրահեղական ահաբեկչական կազմակերպություններին²:

Քաղաքական և դիվանագիտական կրկնակի խաղի առաջամարտիկն այստեղ Անկարան է: Փոքր պետությունների համար, որոնք մանևրում են ահաբեկչության դեմ պայքարում, Թուրքիան լավ ուսուցիչ է, նրանց համար յուրահատուկ ինդուլգենցիա ապահովողը:

Թուրքիայի կրավորական կեցվածքը «Իսլամական պետության» նկատմամբ վաղուց դադարել է գաղտնիք լինելուց: «Տարածաշրջանային նոր քվադրպետական կազմավորման շուրջ ստեղծված քաղաքական իրադրությունը խոսում է այն մասին, որ չնայած Թուրքիայի անդամակցությանը ՆԱՏՕ-ին, պաշտոնական Անկարան պաշտպանում է սեփական շահերը և պատրաստ չէ նեցուկ կանգնել Սիրիայում և Իրաքում ԱՄՆ և Արաբական լիգայի պետությունների ռազմական գործողություններին»³:

Արդյունքում՝ «ահաբեկչության և էքստրեմիզմի դեմ պայքարի» լայնորեն փառաբանված ամերիկյան կամպանիան դառնում է ամուլ, կրում է անարդյունավետ և անհեռանկար բնույթ:

¹ Նույն տեղում:

² <http://news.bigmir.net/world/953605-Asad-obvinil-v-podderjke-IGIL-Tyrciu-Katar-i-Saydovskyu-AraviugaGordon>

³ <http://riss.ru/analitics/6701/>

Անժխտելի է մյուս՝ Ռուսաստանի գլխավորած կոալիցիայի (ՌԴ, Իրան, Սիրիա, Իրաք) նշանակությունն ահաբեկչության դեմ մղվող պայքարում: Ասել, թե Սիրիայում Մոսկվայի հայտնվելը խիստ բեկումնային եղավ ԴԱԵՇ ոչնչացման գործում, չափազանցություն կլիներ: Սակայն անհնար է ժխտել, որ 2015թ. սեպտեմբերից ռուսական տիեզերական և ռազմաօդային տեխնիկայի՝ պատերազմի թատերաբեմ մտնելը նկատելիորեն փոխեց ուժերի հարաբերակցությունը Մերձավոր Արևելքում, կոտրեց ԴԱԵՇ անհաղթելիության առասպելը, ապացուցեց, որ քաղաքակիրթ մարդկության հաջողությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարում նրա գործողությունների համատեղության մեջ է: Այդուհանդերձ, Ռուսաստանի կազմած կոալիցիային, բացի նշված պետություններից, ոչ մի այլ պետություն՝ մեծ, միջին, թե փոքր, մասնակցություն չունեցավ: Անարձագանք մնաց ՄԱԿ ամբիոնից Պուտինի հնչեցրած կոչը՝ ստեղծել հակահիտլերյան տիպի կոալիցիա ահաբեկչության և էքստրեմիզմի դեմ: Իսկ թե ինչպիսին եղան Ռուսաստանի՝ իրեն «ռազմավարական գործընկեր» հորջորջած Թուրքիայի հետ հարաբերությունները ԴԱԵՇ-ի դեմ պայքարում՝ բացատրության կարիք չունեն: Դա կրկին գալիս է ապացուցելու, որ չնայած մարդկության գլխին կախված վտանգին՝ յուրաքանչյուր պետություն առաջնորդվում է քաղաքական և եսակենտրոն շահերով: Իսկ փոքր պետությունները մնում են անարժեք խաղաթուղթ մեծ տերությունների խաղերում:

Սակայն Ռուսաստանի պատերազմը Սիրիայում նրա համար գերկարևոր է մեկ այլ՝ աշխարհաքաղաքական տեսանկյունից: «Վերադարձը» տարածաշրջան օդ ու ջրի պես կարևոր է բազմաբևեռ նոր աշխարհակարգի համար նրա պայքարում:

2015թ. վերջին օրերի մերձավորարևելյան քառսային իրադրության սենսացիան Սաուդյան Արաբիայի հայտարարությունն էր այն մասին, որ թագավորությունը ստեղծում է հակաահաբեկչական կոալիցիա՝ կազմված Մերձավոր Արևելքի, Ասիայի և Աֆրիկայի 34 երկրների զինված ուժերից: Քաղաքական պարադոքսն այն է, որ Սաուդյան Արաբիան, լինելով Միացյալ Նահանգների գլխավորած կոալիցիայի հիմնական անդամներից մեկը, որոշել է համախմբել միջին ու փոքր պետություններին «Իսլամական պետության» դեմ պայքարելու համար, երբ ինքը, Թուրքիայի կողքին, հանդիսանում է այդ քվադր-

պետության ստեղծողներից, քաջալերողներից և ջատագովներից մեկը: Բացի այդ, առաջին հայացքից քաղաքական տրամաբանության սահմաններից դուրս է Էր Ռիադի որոշումը՝ պայքարել ԴԱԵՇ-ի դեմ, եթե հաշվի առնենք, որ երկուսն էլ, փաստորեն, ձգտում են տապալել Բաշար Ասադի իշխանությունը: Բացի այդ, եթե Սաուդյան Արաբիան իրոք կռվի ԴԱԵՇ-ի դեմ, կատացվի, որ նրա հետ նույն դիրքերից ուս ուսի կռվում է իր երդվյալ թշնամի Իրանը: Սա արդեն ֆանտազիայի ժանրից է: Քաղաքականությունից հեռու կանգնած մարդու համար անգամ ուրվագծվում է մի պարզ ճշմարտություն. Սաուդյան Արաբիան համախմբում է մեծ ու փոքր տերություններին՝ ահաբեկչության անվան տակ Իրանին «սրբազան պատերազմ» հայտարարելու նպատակով:

Մեր կարծիքով, Սաուդյան Արաբիայի կռալիցիա ստեղծելը պայմանավորված է աշխարհաքաղաքական մի շարք գործոններով: Իրանի քաղաքական և տնտեսական մեկուսացման մոտալուտ ավարտը, Միացյալ Նահանգների դրական կեցվածքը Թեհրանի նկատմամբ և, ընդհակառակը, «սառը» վերաբերմունքն Էր Ռիադի հանդեպ և, վերջապես, Ռուսաստանի «հանկարծակի» հայտնվելը Մերձավոր Արևելքում՝ հզորագույն զենքով հանդերձ, այս ամենը Սաուդյան Արաբիայի համար քաղաքական շոկ է, մարզինալացման ահազանգ, որոնք դրդում են նրան ակտիվ գործողությունների:

Կարելի է ավելացնել ևս մի քանի դրդապատճառներ. 1. ներքաղաքական կլանային սուր պայքարը թագավորության ներսում, 2. «Իսլամական պետության»՝ ԴԱԵՇ-ի զավթողական նկրտումները Մեդինայի և Մեքքայի նկատմամբ՝ որպես ապագա խալիֆաթի սրբավայրերի (իրականում, իսլամիստները ձգտում են տիրել թագավորության նավթին), ահաբեկիչների շարքերում Էր Ռիադի դեմ կռվող 2,5 հազար սաուդյան արաբները¹, ինչը չի կարող չվախեցնել Սաուդյան Արաբիայի իշխանություններին, 3. Սաուդյան Արաբիան ձգտում է երկրորդ պլան մղել տարածաշրջանում իր գլխավոր հակառակորդ Իրանին և Ռուսաստանին և Սիրիայի ապագա իշխանության ձևավորման գործընթացում լինել մեծ տերությունների շարքում, 4. Իրանի ակտիվ մասնակցությամբ հուրի ապստամբների գործողությունները Եմենում լուրջ սպառնալիք են Սաուդյան Արաբիայի և նրա արբանյակ փոքր պետությունների համար: Դրան գումարած՝ մեկ ուրիշ փոքր պետությունում՝

¹ <http://inosmi.ru/military/20160103/234980754.html>

Բահրեյնում տիրող պայթյունվտանգ վիճակն Էր Ռիադին դրդում է Եգիպտոսի, Թուրքիայի և Օոցի պետությունների հետ տարածաշրջանի երկրների հարավային հատվածը պահել իր և իր հիմնական դաշնակիցների ազդեցության տակ:

Ուշադրության արժանի է այն տեղեկատվությունը, որ ստեղծվող կոալիցիային մասնակցելու ցանկություն են ցուցաբերել Ադրբեջանը, Ղազախստանը և Տաջիկստանը, որի նախագահ Էմոմալի Ռախմոնը պատրաստվում էր հունվարին այցելել Սաուդյան Արաբիա¹: Իսկ թե ինչպես է պատկերացնում Բաքուն իր հետագա կապերն Իրանի հետ Սաուդյան Արաբիայի կոալիցիային հարելու դեպքում՝ դժվար է հասկանալ, եթե նկատի ունենանք նրա՝ առանց այդ էլ ոչ հասարակ հարաբերությունները Թեհրանի հետ:

Զմոռանանք, որ Սաուդյան Արաբիան մինչ այդ արդեն կազմել էր արաբական երկրների մեկ այլ կոալիցիա Եմենում հուֆիական զինված շարժման (Անսար Ալախ) դեմ կովելու համար, որն, ունենալով Իրանի լայն աջակցությունը, հասել էր լուրջ հաջողությունների և գրավելով Ադեն (Հարավային Եմեն) քաղաքը՝ սպառնում էր Էր Ռիադին: Շիա հուֆիներին դիմակայելու համար, որոնց հետ ռազմական բախումների 9 ամսվա ընթացքում երկու կողմից զոհերի թիվը կազմում է 6 հազար մարդ, սաուդները կազմեցին արաբական երկրների այդ կոալիցիան՝ կրկին մեծ մասամբ բաղկացած փոքր երկրներից՝ Քուվեյթ, Կատար, Մարոկո, Բահրեյն: ՄԱԿ ջանքերով կովող կողմերի միջև Ժնևում դեկտեմբերի կեսերին ձեռք բերվեց զինադադար: Այն տևեց ընդամենը երկու շաբաթ: Այսօր ռազմական գործողություններն ընթանում են նոր թափով:

2016թ. առաջին օրերին Սաուդյան Արաբիայում մահապատժի ենթարկվեցին շիա հանրաձանոթ քարոզիչ Նիմր ան-Նիմրին և 47 շիա հավատացյալ՝ ահաբեկչության մեղադրանքով: Հունվարի 3-ին Թեհրանում ցուցարարները հարձակվեցին Սաուդյան Արաբիայի դեսպանության վրա (զոհեր չեղան), սակայն Էր Ռիադը խզեց դիվանագիտական հարաբերությունները և հետ կանչեց իր դիվանագետներին:

Այսպիսով, Մերձավոր Արևելքը ներկայումս դարձել է երկրագնդի ամենապայթյունավտանգ և անկայուն տարածաշրջաններից մեկը, որտեղ ծավալվում է վեց զինված կոնֆլիկտ՝ իսրայելա-պաղեստինյան, քաղաքա-

¹ <http://ria.ru/analytics/20151223/1347511508.html#ixzz3wMFSr4Ju>

ցիական պատերազմներ Լիբիայում, Սիրիայում, Իրաքում և պատերազմական գործողություններ «Իսլամական պետության» հետ: (Ձոների թիվը ճշտված չէ: Միայն Սիրիայում *Humans Rights Watch* կազմակերպության տվյալներով 2015թ. գոհվել է 320 հազար մարդ)¹: Լարվածության վերջին օջախը՝ իրանա-սաուդյան հակամարտությունը, նոր պտույտներ է հաղորդում սուննի-շիա հակամարտության թափանիվին՝ սպառնալով կործանարար հետևանքներ ունենալ միջազգային հարաբերությունների համար Մերձավոր Արևելքից հեռու տարածաշրջաններում:

Իրանա-սաուդյան հակամարտության վտանգին հատուկ անդրադարձել է ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, երբ ասել է. «Կարևոր է, որ անհաշտվողականությունը ԻԻՀ և Սաուդյան Արաբիայի հարաբերություններում չխորացնի գոյություն ունեցող շատ խոր ճեղքվածքն իսլամական աշխարհում՝ սուննիների միջև, որոնք ասոցացվում են Սաուդյան Արաբիայի հետ, և շիաներ միջև, որոնց առաջնորդներն աշխարհում ընկալվում են Իրանի հետ»²:

Այն, որ փոքր պետություններն այս կամ այն չափով մասնակցություն են ցուցաբերում մերձավորարևելյան քաղաքական կատակլիզմներին՝ ընդօրինակելով իրենց «ավագ» գործընկերների դիվանագիտական վարքագիծը, ապացուցված իրողություն է: Թեհրանի հետ Էր Ռիադի դիվանագիտական հարաբերությունների խզման հաջորդ օրն իսկ Բահրեյնը, Քուվեյթը, Ջիբուտին, Սուդանը, Թունիսը հետ կանչեցին իրենց դեսպաններին Թեհրանից: Առանց սխալվելու մեծ հավանականության կարելի է ասել, որ Իրան-Սաուդյան Արաբիա հարաբերությունների լարվածության հետագա խորացման դեպքում տարածաշրջանի փոքր պետությունները, գրեթե առանց բացառության, կհետևեն ավագ գործընկերոջ՝ Էր Ռիադի օրինակին, որն ավելի կարի պայթյունավտանգ իրավիճակն արաբական աշխարհում:

Հետաքրքրական է նշել, որ «արաբական գարնանը» հաջորդած իրադարձությունների վերլուծությունը և ներկա միջազգային հարաբերությունների դինամիկան Մերձավոր Արևելքում ապացուցում են, որ պետությունների՝ բացարձակ դոմինանտ դառնալու միտումը տարածաշրջանում աստիճանա-

¹ <http://inosmi.ru/military/20160103/234980754.html>

² *Лавров С.В.*, Раскол между суннитами и шиитами нельзя замести под ковер, // http://www.ng.ru/world/2013-11-20/8_raskol.html

բար մարում է: Թուրքիան, օրինակ, անհաջող փորձերից հետո հրաժարվում է իր մեծապետական ամբիցիաներից, ԱՄՆ-ը կարծես իրեն փոխարինող է փնտրում կառավարման ղեկը նրան փոխանցելու համար, Ռուսաստանը մի շարք օբյեկտիվ պատճառներով չի կարող դառնալ ղեկավար ուժ արաբական աշխարհում: Ասպարեզում մնում է Իրանը, որը ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ հարաբերությունների կարգավորումից հետո կարող է դուրս գալ մեկուսացման ճահճից, սակայն տարածաշրջանում նրա ճանաչված գերտերություն դառնալը, մեր կարծիքով, զուրկ է ռեալ հնարավորություններից, որոնց հիմքում ընկած են կրոնական, էթնիկական, ազգային, քաղաքատնտեսական և մի շարք այլ գործոններ:

Այսօր Մերձավոր Արևելքը հիշեցնում է բազմանդամ մեծ ընտանիք, որտեղ ամեն մեկը զբաղված է իր սեփական կարճաժամկետ խնդիրներով, օպորտունիզմով և միմյանց հակադրվելու քաղաքականությամբ՝ այն պարտադրելով իր ազդեցության տակ գտնվող փոքր պետություններին: Տարածաշրջանը եղել է այդպիսին և այդպիսին էլ կմնա գուշակելի ապագայում:

Իսկ Իրանը և Սաուդյան Արաբիան՝ Արաբ վերլուծաբանների կարծիքով՝ «Իրանի և Սաուդյան Արաբիայի համար երկփեղկված Մերձավոր Արևելքում իրականությունն այն է լինելու, որ ճակատագրի հեզնանքով նրանք առավել շատ խնդիրներ են ունենալու այն տարածքներում, որտեղ ավելի մեծ ազդեցություն ունեն: Չարիքի այս խաղում Մերձավոր Արևելքի՝ սառը պատերազմի մեջ գտնվող այդ երկու տերություններն ամեն ինչ անելու են միջնորդ ուժերի և ապակայունացման միջոցով միմյանց անհանգստացնելու համար, ինչի հետևանքով մարդիկ են տուժելու»¹:

Խնդիրն այն է, որ Մերձավոր Արևելքը կարծես թե մի քայլ հետ է մնացել աշխարհաքաղաքական գործընթացներից, որտեղ տնտեսական, տեխնոլոգիական և մշակութային արժեքներն ավելի շուտ են որոշում հարաբերությունները, քան պատերազմներն ու զենքի ուժը:

«Անխոս, տարածաշրջանի գերխնդիրն աշխարհաքաղաքականությունը չէ, այնտեղի բնակիչներն, առանց բացառության, մնում են իրենց առաջնորդների ազահության, կոռուպցիայի և հալյուցիանացիաների գերին»²:

¹ <http://www.aljazeera.com/indepth/opinion/2015/03/greater-reality-iran-saudi-arabia-150330051616953.htmlrce>

²Նույն տեղում:

Իսկ ինչպե՞ս ենք պատկերացնում Հայաստանի Հանրապետության դերը և տեղը Մեծ Մերձավոր Արևելքի հակամուսուլմանական-հակաահաբեկչական երեք կռաւիցիաներում: Ելնելով, թեկուզ, քրիստոնեական և եվրոպական արժեքներին մեր պատկանելությունից, ազգային, դեմոկրատական և ընտանեկան ավանդույթներից, պատմության դասերից և էթնոհոգեբանական հատկանիշներից՝ մենք տրամաբանորեն պետք է որ լինենք հակաահաբեկչական այս կամ այն կռաւիցիայի շարքում: Սակայն քննարկենք երեք կռաւիցիաներում Հայաստանի լինելու կամ չլինելու քաղաքական նպատակահարմարությունը:

Ամերիկյան կռաւիցիա: Հայաստանը 1994-ից հաջողությամբ ինստիտուցիոնալ կերպով համագործակցում է Հյուսիսատլանտյան դաշինքի հետ, երբ մենք միացանք ՆԱՏՕ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին (ասել կուզի՝ մենք համագործակցում ենք Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ ռազմաքաղաքական ոլորտում):

Հայաստանը մասնակցում է ՆԱՏՕ խաղաղապահ առաքելություններին Կոսովոյում և Աֆղանստանում: Ակտիվ համագործակցություն է զարգանում նաև հրապարակային դիվանագիտությունում: Արտաքին գործերի նախարարությունը ՆԱՏՕ Հրապարակային դիվանագիտության դեպարտամենտի հետ ամեն տարի Հայաստանի այլ նախարարությունների և ոչկառավարական կազմակերպությունների հետ կազմակերպում է ՆԱՏՕ շաբաթ Հայաստանում. անցկացվում են տեղեկատվական և ակադեմիական բնույթի բազմաթիվ միջոցառումներ: Երևանում գործում է ՆԱՏՕ Տեղեկատվական կենտրոնը:

Այս ամենն ապացուցում է արտաքին քաղաքականության դիֆերենցված և կոմպլեմենտար կուրսի, Ռուսաստանի և Միացյալ Նահանգների, ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի միջև հավասարակշռություն պահելու ՀՀ ունակությունը: Լինելով ԱՊՀ շրջանակներում Ռուսաստանի ամենամոտ ռազմավարական գործընկերը և ունենալով Մոսկվայի հետ մի շարք կարևոր պայմանագրեր, ինչպես նաև իր տարածքում ռուսական ռազմակայան՝ Հայաստանն, այդուհանդերձ, կարողացավ զարգացնել համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ: Սա ներկա միջազգային հարաբերություններում և հատկապես տարածաշրջանի քառսային քաղաքական իրավիճակում, մեր կարծիքով, կարելի է, համարել փոքր պետության դիվանագիտական հաջողություն:

Սակայն դա դեռ չի նշանակում, թե Հայաստանը նույն հաջողությամբ կարող է մասնակցել ԱՄՆ հակաահաբեկչական կռաւիցիային: Ճիշտ է՝ Հայաստանի ղեկավարությունը միջազգային բարձր ամբիոններից քննադատում է «Իսլամական պետության» ահաբեկչական գործողությունները, արտաքին գործերի նախարարը Դամասկոսում հանդիպում է Բաշար Ասադի հետ, սակայն, մյուս կողմից, իսլամիստների դեմ ռազմական գործողություններին անմիջական մասնակցությունը հղի է որոշակի անկանխատեսելի վտանգներով Մերձավոր Արևելքի հայահոծ համայնքների և սիրիահայության մնացորդների համար: Բացի այդ, ռուսական կռաւիցիայի առկայության դեպքում հայկական զինուժի մասնակցությունն ամերիկացիների ռազմական գործողություններին կարող է միանշանակ չգնահատվել Մոսկվայի կողմից և ունենալ անցանկալի հետևանքներ հայկական կողմի համար:

Ռուսական կռաւիցիա: Եթե ռուսական կռաւիցիային մասնակցեր ՀԱՊԿ-ը, ապա Հայաստանի ներկայությունն այնտեղ կլիներ բնական, անգամ անխուսափելի: Բայց երբ իսլամիստներին հարվածում են միայն ռուսական տիեզերական և ռազմաօդային ուժերը և բացակայում են ցամաքային գործողությունները, հայերի մասնակցությունը ցանկալի չէ: Ի դեպ, անկախ այն բանից, թե ինչ քաղաքական դիրքորոշում կունենան Հայաստանը և հայ համայնքները, կմասնակցեն նրանք այս կամ այն կռաւիցիային, թե ոչ՝ դա բացարձակապես չի փոխի նրանց նկատմամբ ԴԱԵՇ վերաբերմունքը: Այն իր անմարդկային, բարբարոսական մեթոդները կիրառում է անխտիր բոլոր ազգերի և կրոնների հանդեպ, անկախ նրանց գործողություններից և քաղաքական պատկանելությունից:

Սաուդյան Արաբիայի կռաւիցիա: Մեր խորին համոզմամբ, Հայաստանի Հանրապետության՝ Սաուդյան Արաբիայի գլխավորած հակաահաբեկչական կռաւիցիային մասնակցության հարցն անգամ քննարկման ենթակա չէ:

Այս նոր իրադրությունում Հայաստանի քայլերը ճիշտ հաշվարկելու համար դիտարկենք տարածաշրջանի խոշոր խաղացողների գործողությունները:

Դրանց, մի կողմից, մասնակցում է մեր կարևոր գործընկեր և հարևան Իրանը, որը մեր մյուս ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի հետ պայքարում է ահաբեկչության և մարտնչող սուննիզմի դեմ՝ պաշտպանելով նաև Հայաստանի աշխարհաքաղաքական անվտանգությունը (բացառված չէ,

որ Մոսկվա-Թեհրան առանցքն ապագայում ավելի ամրապնդվի հակաթուրքական բովանդակությամբ՝ ներառելով նաև ՀՀ դիվանագիտական գործառույթները):

Մյուս կողմից՝ մենք գործ ունենք Սաուդյան Արաբիայի հետ, որը վահաբական, ծայրահեղ իսլամիստական գաղափարախոսության երկիր է: Սաուդյան Արաբիան ՄԱԿ անդամ այն չորս երկրներից է, որը հրաժարվում է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատճառով: Մյուս երեք երկրներն են Ադրբեյջանը, Թուրքիան և Պակիստանը¹: Այդ երկրները բոլոր հակահայկական և հակաղարաբաղյան փաստաթղթերի համահեղինակներն են բոլոր հնարավոր միջազգային կազմակերպություններում:

Բացի այդ, էր Ռիադը, չնայած խաղաղասիրական հռետորաբանությամբ, միջազգային ահաբեկչության հիմնական ֆինանսավորողներից է և Մերձավոր Արևելքում, Միջին Արևելքում անկայունություն սերմանողներից մեկը: Սաուդյան Արաբիան քաջալերում է Ռուսաստանի իսլամական ընդհատակի քայքայիչ գործունեությունը, խաղում է նավթի գների վրա՝ նրա տնտեսությանը և բյուջեին հարվածելու նպատակով: Կարծես թե այսքանը պետք է բավարար լիներ, որպեսզի Ռուսաստանը ներկա կոնֆլիկտում միանշանակ բռներ Իրանի կողմը կամ խառնվեր Եմենի դեպքերին՝ սաուդներին վնասելու համար: Սակայն «Մոսկվան պահում է ընդգծված չեզոքություն՝ սպասելով, որ այդ երկու երկրները երկար և ձգվող սառը պատերազմում հյուծեն մեկմեկու: Եվ դա կլինի ճիշտ դիրքորոշում, քանի որ միայն այդ դեպքում Կրեմլը կշահի»²:

Մոսկվան այստեղ ունի խորքային պլաններ: Ռուսերի հարաբերակցությունը ցույց է տալիս, որ «տաք» պատերազմի սանձազերծման դեպքում թագավորությունը կփվի արտաքին բազմաթիվ թշնամիների առկայության, ինչպես նաև ներքին խնդիրների պատճառով: Մինչդեռ, Ռուսաստանն այսքան էլ շահագրգռված չէ Սաուդյան Արաբիայի արագ պարտությամբ և Իրանի չափից դուրս հզորացմամբ, քանի որ Թեհրանի հետ մրցակցային խնդիրներ ունի Միջին Ասիայում, Կովկասում, անգամ Սիրիայում:

¹ <http://www.aniarc.am/2016/01/04/saudi-arabia-breaks-ties-with-iran/>

² iranskom-spore/ <http://www.foreignpolicy.ru/analyses/pozitsiya-rossii-v-saudovsko>

Որոշ վերլուծաբաններ ավելի հեռուն են նայում: Նրանց կարծիքով, եթե Կրեմլը շարունակեր սերտ հարաբերությունները Թուրքիայի հետ, ապա նա կօգտագործեր Անկարան՝ Թեհրանի հետագա զարգացումն արգելակելու համար, իսկ ինքը կմանևրեր Թուրքիայի և Իրանի միջև: Սակայն այդ հարաբերությունները չկան, հետևաբար՝ չկա նաև մանևրային տարածք: Թեհրանի և Էր Ռիադի կոնֆլիկտի շարունակության դեպքում այդ հնարավորությունը հայտնվում է: Ավելին, Սաուդյան Արաբիան և նրա դաշնակիցները շահագրգռված կլինեն Ռուսաստանի հետ սերտ հարաբերություններով, որպեսզի ապահովեն նրա նվազագույն չեզոքությունը: Իրանն իր հերթին շահագրգռված կլինի իր և ռուսական դիրքորոշումների մոտեցմամբ: Տարածաշրջանի երկու ամենահզոր տերությունների հետաքրքրությունը Ռուսաստանի նկատմամբ կոյուրացնի նրա վերադարձը Մերձավոր Արևելք¹:

Փորձենք կանխատեսել Հայաստանի օպտիմալ դիվանագիտական քայլերը վերոշարադրյալ իրադարձությունների կապակցությամբ: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է.

1. Որդեգրել չեզոք դիրքորոշում Իրան-Սաուդյան Արաբիա ընթացող հակամարտության խնդրում: Հակառակ որոշումը կարող է ոչ միայն վերջնականապես փակել Սաուդյան Արաբիայի հետ դիվանագիտական հարաբերությունների ճանապարհը, այլև, հանձին նրա, Թուրքիայից և Ադրբեջանից զատ ձեռք բերել ևս մեկ էքզիստենցիալ թշնամի:
2. Չմասնակցել Մերձավոր Արևելքի հակադաշնական կոալիցիաներին:
3. Ձեռնարկել միջնորդական քայլեր Թեհրանի և Էր Ռիադի միջև կոնֆլիկտի կարգավորման ուղղությամբ: Իրանական կողմի հետ օգտագործել դասական դիվանագիտական խողովակները, սաուդյան կողմի հետ, դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում՝ կիրառել հասարակական դիվանագիտական միջոցներ (Հայաստանի և սփյուռքի հայտնի քաղաքական և հասարակական դեմքեր, գիտության և արվեստի անվանի գործիչներ, մաքոքային այցելություններ և այլն):
4. Իրանական կողմի հետ հանդիպումների ընթացքում նշել Ադրբեջան-Սաուդյան Արաբիա հարաբերությունների զարգացման միտումները և դրանց հնարավոր բացասական հետևանքներն իրանական շահերի

¹Նույն տեղում:

համար: Ուշադրություն հրավիրել սառույան նորաստեղծ կոալիցիային ադրբեջանական մասնակցության վրա:

5. Սառույան կողմի հետ հնարավոր շփումների դեպքում հատուկ անդրադառնալ Ադրբեջանի հոգևորականության խիստ բացասական վերաբերմունքին Էր Ռիադի՝ Եմենում իրագործվող ռազմական գործողությունների նկատմամբ:
6. Պակիստանը, լինելով Սառույան Արաբիայի հիմնական ռազմական գործընկերներից մեկը, պասիվ կեցվածք է դրսևորում Թեհրան-Էր Ռիադ ներկա կոնֆլիկտում: Բացի այդ, չնայած բազմաթիվ հավաստիացումներին՝ Իսլամաբադն այդպես էլ նեցուկ չի կանգնում սառույան ռազմական գործողություններին Եմենում: Օգտվելով այդ իրավիճակից՝ փորձել հասնել դիվանագիտական ճեղքման Իսլամաբադի ուղղությամբ: Խնդրի դրական լուծմանը կարող են նպաստել Պակիստանի գերազանց հարաբերություններն Իրանի և Չինաստանի հետ, որոնց հետ Հայաստանը նույնպես հաջողությամբ զարգացնում է բազմակողմ համագործակցություն:

Հունվար, 2016թ.

**ՓՈՔԲ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ
ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐԻ ԵՌԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

Արման Նավասարդյան

Ամփոփագիր

Համաշխարհային քաղաքականությունում ի հայտ է եկել իսլամական քվազիպետություն՝ ԴԱԵՇ-ը, որը Վեստֆալյան համաձայնագրից հետո առաջին անգամ միջազգային հարաբերություններում վիճարկում է պետությունների լեգիտիմությունը պատերազմ և խաղաղություն հայտարարելու գործում: Ներկայում Մեծ Մերձավոր Արևելքում միտում է պատերազմական վեց օջախ՝ իսրայելա-պաղեստինյան, ռազմական գործողություններ Իրաքում, Սիրիայում, Եմենում «Իսլամական պետության» հետ, Իրանի և Սառույան Արաբիայի միջև: Վերջինը, որը ծագեց տարեսկզբին, սպառնում է խորացնել պայթյունավտանգ իրավիճակը տարածաշրջանում և տարածվել դրա սահմաններից անդին՝ հրահրելով կրոնական պատերազմ սուննիականության և շիականության միջև: ՀՀ-ն պետք է չեզոքություն պահի ստեղծված քառսային իրավիճակում և չհարի «Իսլամական պետության» դեմ գործող երեք կոալիցիաներից որևէ մեկին: Չունենալով դիվանագիտական հարաբերություններ Սառույան Արաբիայի և Պակիստանի հետ՝ Հայաստանը պետք է փորձի դիվա-

նազիտական ճեղքում իրագործել Բալանարադի ուղղությամբ՝ օգտվելով այդ երկու պետությունների միջև նկատվող հակասություններից:

МАЛЫЕ ГОСУДАРСТВА НА ФОНЕ АНТИТЕРРОРИСТИЧЕСКИХ КОАЛИЦИЙ

Арман Навасардян

Резюме

В мировой политике появилось исламское квазигосударство – ДАИШ, которое впервые с момента заключения Вестфальского договора оспаривает легитимность государств в вопросах объявления войны и мира. В настоящее время на Большом Ближнем Востоке тлеют шесть военных очагов – палестино-израильское противостояние, боевые действия в Ираке, Сирии, Йемене, война с «Исламским государством», конфликт между Ираном и Саудовской Аравией. Последний, разгоревшись в начале этого года, грозит усугубить и без того взрывоопасную ситуацию в регионе и распространиться за его пределы, вылившись в религиозную войну между суннизмом и шиизмом. В создавшемся хаосе Республике Армения следует соблюдать нейтралитет и не примыкать ни к одной из трех антиигиловских коалиций. Армения, не имеющая дипломатических отношений с Саудовской Аравией и Пакистаном, должна попытаться осуществить дипломатический прорыв на исламабадском направлении, воспользовавшись противоречиями между этими двумя государствами.

SMALL COUNTRIES IN THE THREEFOLD PATTERN OF THE ANTI-TERROR COALITIONS

Arman Navasardyan

Resume

An Islamic quasi-state called Daesh has recently emerged in world politics. For the first time after Westphalian agreement in international affairs it disputes countries' legitimacy in announcing war or peace. Now there are six flash points in Middle East: Israeli-Palestinian conflict, military actions with the Daesh in Iraq, Syria, Yemen and the conflict between Iran and Saudi Arabia. The latter burst out in early 2016, threatening to aggravate the explosive situation in the region and expand it beyond its borders, causing a war of religions between Sunnis and Shias. Republic of Armenia should remain neutral in such kind of chaotic situation and avoid supporting any of three anti-Daesh coalitions. Having no diplomatic ties with Saudi Arabia and Pakistan, Armenia should attempt a diplomatic breakthrough towards Islamabad, making use of the antagonism observed between these two countries.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վահրամ Տեր-Մաթևոսյան՝

Բանալի բառեր՝ Վրաստան-Թուրքիա հարաբերությունների զարգացման դինամիկա, սուր հարցադրումներ, թուրքական «փափուկ ուժը» Վրաստանում, հակաթուրքական տրամադրություններ, թուրք-վրացական հակասություններ Աջարիայում:

Ներածություն

2014թ. մայիսի 6-ին Թբիլիսիում անցկացվեց Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի նախագահների զագաթաժողովը, որի ընթացքում քննարկվեցին եռակողմ համագործակցության առանցքային հարցեր: Այդ իրադարձությունը պատեհ առիթ ծառայեց, որպեսզի Վրաստանի քաղաքական և հանրային քննարկումներում վերսկսվեն թուրք-վրացական հարաբերությունների ներկա առանձնահատկություններին և ապագա միտումներին նվիրված խնդիրների արծարծումները: Հնչեցին տարաբնույթ կարծիքներ թե՛ իշխանության, թե՛ ընդդիմադիր և արտախորհրդարանական ուժերի կողմից, որոնց համադրումը ցույց է տալիս, որ թուրք-վրացական հարաբերություններում արձանագրված ձեռքբերումների կողքին առկա են մի շարք սուր հարցադրումներ:

Հոդվածի նպատակն է վերլուծել թուրք-վրացական հարաբերությունների զարգացման դինամիկան, հիմնական առանձնահատկությունները հատկապես 2012-2013թթ. իշխանափոխությունից հետո, այդ գործընթացի վերաբերյալ հասարակական-քաղաքական ընկալումները: Հոդվածում քննարկվում են մի շարք հարցեր, որոնք վերաբերում են թուրք-վրացական քաղաքական և տնտեսական հարաբերությունները պայմանավորող գործոններին, Վրաստանում «թուրքական փափուկ ուժի» կիրառման առանձնահատկություններին և դրանց նկատմամբ վրացական իշխանությունների և հասարակության ընկալումներին: Աջարիայի օրինակով անդրադարձ է կատարվում նաև վրաց-թուրքական հարաբերություններում առկա հակասություններին:

¹Պատմական գիտությունների թեկնածու:

Ներկայացված են 2014թ. գարնանը Վրաստանում կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

***Թուրքիայի քաղաքական առաջնահերթությունները Վրաստանում.
փոխհամայրող գերակայություններ***

Հարավային Կովկասի երկրների նկատմամբ Թուրքիայի քաղաքականության վերաբերյալ առկա ուսումնասիրությունները պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբերի: Մի խումբ ուսումնասիրողների կարծիքով՝ Հվ. Կովկասում Թուրքիան մշակել և իրականացնում է հստակ և համընդգրկուն տարածաշրջանային քաղաքականություն, որի արդյունքում նրան հաջողվել է դառնալ տարածաշրջանային գործոն՝ շատ դրվագներում շրջանցելով անգամ Ռուսաստանին: Մյուս խումբ ուսումնասիրողների կարծիքով՝ Հվ. Կովկասի յուրաքանչյուր երկրի նկատմամբ Թուրքիայի ունեցած քաղաքական ուղեգիծն է որոշում համընդհանուր աշխարհաքաղաքական առաջնահերթությունները, հետևաբար՝ անտեղի է խոսել մեկ համընդհանուր հարավկովկասյան քաղաքականության և Թուրքիայի տարածաշրջանային գործոն լինելու մասին: Մասնավորապես, Ֆիլադելֆիայի Արտաքին հետազոտությունների ինստիտուտի վերլուծաբան Մայքլ Սեսիրեի պնդմամբ՝ Թուրքիան արդեն դարձել է կովկասյան տերություն, և Կովկասում գործում է «Թուրքիայի Կովկասյան համակարգը», որտեղ Թուրքիան ընկալվում է որպես «առևտրային գերիշխանություն ունեցող երկիր»: Նրա կարծիքով՝ Ադրբեյջանի և Վրաստանի հետ եռակողմ համագործակցությամբ մարտահրավեր է նետվել տարածաշրջանի՝ որպես Ռուսաստանի կողմից կառավարվող տարածքի նկատմամբ համընդհանուր համոզմունքին [1, p. 111]: Քաղրը Հաս համալսարանի պրոֆեսոր Միթաթ Չելիքփալայի [2, p. 27-28] և Քարնեգի հիմնադրամի վերլուծաբան Բայրամ Բաջիի [3, p. 49] կարծիքով՝ Թուրքիայի համար Վրաստանը կարևորվում է նախևառաջ դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա ամենակարճ և կայուն միջանցքային ուղի ծառայելու պատճառով, իսկ Վրաստանի ներգրավումը Կասպյան էներգետիկ ռեսուրսների տարանցիկ ծրագրերում և Թուրքիայի ներդրումները վրացական տնտեսության մեջ երկու երկրների տնտեսություններն անդառնալիորեն փոխկախվածության մեջ են դրել: Այսպիսով, վերլուծաբանների մեծ մասը համակարծիք է, որ Թուրքիայի քաղաքական գերակայությունները Վրաստանում գերազանցա-

պես պայմանավորված են Կասպյան և կենտրոնասիական էներգետիկ պաշարների՝ դեպի Եվրոպա արտահանման գործընթացում Վրաստանին հատկացված առանցքային դերով: Այլ խոսքերով, Թուրքիայի և Ադրբեջանի աշխարհաքաղաքական գերծրագրերի հաջող ընթացքն ուղիղ համեմատական է կանխատեսելի և կայուն Վրաստանի գոյությանը:

Վրաստանում Թուրքիայի հետապնդած շահերի վերաբերյալ գնահատականներում առկա են նաև տնտեսական նպատակահարմարությամբ պայմանավորված շեշտադրումները: Ըստ այդ գնահատականների՝ Թուրքիայի քաղաքականությունը Վրաստանում հարկ է պայմանավորել Վրաստանի իշխանությունների վարած բաց ու ընդգրկուն տնտեսական քաղաքականությամբ: Այլ խոսքերով, Վրաստանին և Թուրքիային միավորում է աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված տնտեսական համադրելիության տեսլականը: Այդ գնահատականների համաձայն՝ Ռուսաստանի քաղաքականությունը Վրաստանին այլընտրանք չի թողել, և Վրաստանն ստիպված էր սերտացնել հարաբերությունները Թուրքիայի հետ, որն ընկալվում էր եվրոպական և արևմտյան ուղղությամբ տարվող քաղաքականության ամենամոտ և ամենահարմար կամուրջը: Բ. Բալզին, կրկնելով Սաակաշվիլու՝ մի առիթով արած համեմատությունը¹, պնդում է, որ Վրաստանի համար Թուրքիան պատուհան է դեպի Եվրոպա, որի շնորհիվ Վրաստանը կարող է դուրս գալ կովկասյան անկլավից [3]: Մեսիրն իր հոդվածում նաև պնդում է, որ Հվ.Կովկասում Թուրքիայի հետապնդած գերակա շահը և առանցքային նպատակը Թուրքիայի տնտեսական աճին ու կայունությանը նպաստող էներգետիկ քաղաքականության իրականացումն է [1, p. 115-116]: Այդ մոտեցման դեպքում բազմաթիվ գործոններ ու հանգամանքներ պարզապես անտեսվում են, և արդյունքում՝ Վրաստանում Թուրքիայի վարած քաղաքականության մասին դատողությունները ոչ ամբողջական են ներկայացվում: Միևնույն ժամանակ, Մեսիրեն իրավացի է՝ նշելով, որ թուրք-վրացական երկկողմ հարաբերությունների էությունը հասկանալու համար հարկավոր է դրանք քննարկել եռակողմ ձևաչափի (Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան) համատեքստում, որը հնարավորություն կտա գիտակցել, որ թուրք-վրացական հարաբերությունները, մեծ մասամբ, թուրք-ադրբեջանական հարաբերու-

¹ “Saakaşvili Gürcistan’ın Yeni Elçilik Binasını Açtı”, Chveneburi, at <http://www.chveneburi.net/tr/default.asp?bpgpid=1370&pg=1>

թյունների ճյուղավորումն են [1, p. 119, 123]: Այսպիսով, վերլուծաբանների ճնշող մեծամասնությունը, քննարկելով Թուրքիայի քաղաքականությունը Վրաստանում, անհրաժեշտ ուշադրություն չի դարձնում թուրք-վրացական երկկողմ հարաբերությունների վրա ազդող, սակայն առաջին հայացքից երկրորդական թվացող գործոններին, որոնք կներկայացվեն ստորև:

Մինչդեռ Վրաստանի քաղաքական ընտրանու՝ Թուրքիայի նկատմամբ ձևավորած մոտեցումների հիմքում ընկած են նաև մի շարք բարդ ու համակարգային գործոններ, որոնց ամբողջական ուսումնասիրության դեպքում հնարավոր է համապարփակ պատկերացում ստանալ Վրաստանում Թուրքիայի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային դերակատարման ու դրա հետևանքների վերաբերյալ: Թուրքիայի նկատմամբ քաղաքականության մշակման և իրականացման հարցերում Վրաստանի թե՛ նախկին, թե՛ ներկա ղեկավարության մոտեցումները պայմանավորված են աշխարհաքաղաքական, տնտեսական, ենթակառուցվածքային և պարզապես պրակտիկ մի շարք գործոններով:

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին թուրք-վրացական երկկողմ հարաբերությունների իր ժամանակահատվածն անվանել է «ոսկե դար» [4, p. 21]: Վրաստանի նախագահի ընդգծված վերաբերմունքը Թուրքիայի, նրա քաղաքական համակարգի և ղեկավարության, մշակույթի, անգամ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր առաջնորդի նկատմամբ դրսևորվել է ամենատարբեր առիթներով¹: Խոսելով Վրաստանում և տարածաշրջանում Թուրքիայի հետապնդած շահերի վերաբերյալ՝ Սաակաշվիլին նշում է, որ «*Թուրքիան հատկապես շահագրգռված է անվտանգության գոտու ստեղծման գաղափարով, որի մեջ կներառվեն խաղաղ և բարեկամ պետությունները: «Հարևանների հետ զրո խնդիրներ» հայտնի քաղաքականության առումով Վրաստանը գուցե ամենահաջողված օրինակն է»* [4, p. 19]: Այս միտքն իր նախագահության տարիներին նա բազմիցս է նշել և, թերևս, այդ առումով կրկնել թուրքական քաղաքական վերնախավի նույնաբովանդակ բնութագրումները: Օրինակ, Ահմեթ Դավութօղլուն դեռևս 2008թ. նշել էր. «*Թուրքիայի հարևանների հետ զրո խնդիրները» հաջողությամբ իրականացվել է վերջին չորս տարիների ընթացքում, և տարածաշրջանում Թուրքիայի*

¹ Saakashvili Speaks of Importance of Close Ties with Turkey, *Civil Georgia*, 14 March 2006, <http://www.civil.ge/eng/article.php?id=12061>

հաջողության «ամենաապշեցուցիչ օրինակը» Վրաստանի (և Սիրիայի) հետ հարաբերություններն են» [5, p. 80]: Թուրք վերլուծաբան Գյոքսելի կարծիքով ևս «Եվրոպայի արևելքում Թուրքիան և Վրաստանը ներկայացնում են ինտեգրացիայի նմուշաձև» [6, p. 2]:

Վրաստանի նախկին արտգործնախարար և Ազգային անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Էկա Տկեշելաշվիլին հարցազրույցի ընթացքում նշել է, որ «Վրաստանում Թուրքիայի քաղաքականության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ է հստակեցնել Վրաստանի հետապնդած շահը, և երկու շահերի {Թուրքիայի և Վրաստանի- ՏՄ} համադրման դեպքում միայն կարող ենք ամբողջացնել կողմերի քաղաքականությունը»: Նա նաև ձևակերպել է Վրաստանի հետապնդած շահը, այն է՝ օգտագործելով Վրաստանի աշխարհագրական դիրքը տարածաշրջանում՝ դառնալ «տնտեսական հար» և այդ ընթացքում օգտագործել լիբերալ տնտեսության գաղափարախոսության հիմնատարները [7]:

Թե՛ 2005թ. ընդունված Վրաստանի Ազգային անվտանգության հայեցակարգում¹, թե՛ 2011թ. վերանայված տարբերակում² (երկու փաստաթուղթն էլ ընդունվել է Սաակաշվիլու օրոք) Թուրքիային և նրա հետ համագործակցությանը հատկացված էր կարևոր տեղ, մինչև նույն ժամանակ առկա են շեշտադրումների որոշ տարբերություններ: Օրինակ՝ 2005թ. փաստաթղթում Թուրքիան առանձնացված էր որպես «ռազմավարական գործընկեր», «առաջատար տարածաշրջանային գործընկեր», «կարևոր առևտրային գործընկեր», «արժեքավոր ռազմական գործընկեր» ձևակերպումներով: Մինչդեռ 2011թ. վերանայված տարբերակում Թուրքիան բնութագրվում է միայն որպես «տարածաշրջանում Վրաստանի առաջատար գործընկեր», «Վրաստանի ամենամեծ առևտրային և տնտեսական գործընկեր», «տարածաշրջանային առաջնորդ», «կարևոր ռազմական գործընկեր»: Այսպիսով, վերանայված տարբերակում «ռազմավարական գործընկեր» ձևակերպումը բացակայում է, որը կարող է պայմանավորված լինել 2008թ. ռուս-վրացական պատերազմի ժամանակ Թուրքիայի դիրքորոշմամբ:

¹ National Security Concept of Georgia, 2005, http://www.parliament.ge/files/292_880_927746_concept_en.pdf

² National Security Concept of Georgia, 2011, http://www.mfa.gov.ge/index.php?lang_id=ENG&sec_id=12

Թվում էր՝ 2012-2013թթ. իշխանափոխությունից հետո Վրաստանի նոր իշխանությունները՝ «Վրացական երազանք» դաշինքը, տեղի կտան հասարակության որոշ շրջանակների դժգոհություններին և կվերանայեն Սասկաշվիլու նախագահության տարիներին Թուրքիայի նկատմամբ ունեցած քաղաքական ուղղությունները: Իրոք, 2012թ. հոկտեմբերյան խորհրդարանական ընտրություններին նախորդող շրջանում, նախընտրական պայքարում, ինչպես նաև վարչապետ Իվանիշվիլու վարչապետության առաջին ամիսներին եղան որոշ հայտարարություններ, որոնք անհանգստության պատճառ դարձան թե՛ նախկին իշխանությունների համար, թե՛ թուրք-ադրբեջանական դաշինքի ներքում: Մասնավորապես, Վրաստանի վարչապետը հարցականի տակ դրեց Ադրբեջանի և Թուրքիայի հետ իրականացվող և պլանավորված մի շարք ծրագրերի ֆինանսատնտեսական նպատակահարմարությունը, քննադատվեց Սասկաշվիլու կողմից բազմաժամանակ թուրքերի վրացական քաղաքացիություն շնորհելու փաստը, թուրքական մշակութային անվերահսկելի դարձած ներթափանցման հանգամանքը և այլն: Այդ հայտարարություններից հետո որոշ թուրք գործարարներ սկսեցին բարձրաձայնել Վրաստանի իշխանությունների հարուցած որոշ դժվարությունների մասին: Սակայն նախ Բաքու, ապա Անկարա կատարած այցերից հետո Իվանիշվիլու կողմից արվեցին մի քանի հայտարարություններ, որոնք լիցքաթափեցին մթնոլորտը: Այդուհանդերձ, նոր իշխանությունները շարունակեցին բազմազանեցնել Թուրքիայի հետ ռազմավարական համագործակցության ուղիները և, տեղի չտալով քաղաքական, հասարակական ու հոգևոր իշխանության որոշ շրջանակներից եկող քննադատություններին, շարունակեցին Թուրքիայի նկատմամբ վարել նախկիններից քիչ տարբերվող քաղաքականություն: Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Ալասանիայի հետևյալ բանաձևումը գրեթե ճշգրտությամբ արտացոլում է Թուրքիայի նկատմամբ վրացական իշխանությունների մոտեցումը. «Գտնվելով հզոր երկրների և էներգետիկ առումով հարուստ երկրների խաչմերուկում՝ հարմարվողական և իրատեսությանն ուղղված Վրաստանի արտաքին քաղաքականությունը ոչ միայն ցանկալի է, այլ նաև ռազմավարական անհրաժեշտություն: Մենք դավանում ենք և հոգ տանում մեր եվրոպական ինքնության մասին, սակայն մենք չենք կարող անտեսել աշխարհագրության և աշխարհաքաղաքականության իրողությունները» [8, p. 7]: Նույն ոգով պայմանավորված՝ Ի. Ալասա-

նիան Թուրքիայի հետ հարաբերություններն անվանում է «*օրինակելի և արագ զարգացող, քանի որ մեր շահերը կապակցված են*» [8]:

Հարցազրույցների ընթացքում զրուցակիցներին ուղղված հարցերից մեկը վերաբերում էր նրան, թե արդյոք Վրաստանի ներկա իշխանությունների քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ տարբերվում է նախկիններից: Հնչած կարծիքներում գերիշխում էր այն միտումը, որ թեև առկա է շարունակականություն, սակայն նոր իշխանությունները դրսևորում են առավել զգուշավորություն և նվազ ոգևորություն թուրքական որոշ ծրագրերի նկատմամբ: Առավել շատ հիշատակվող օրինակը 2012թ. դեկտեմբերին Կարս-Ախալքալաք երկաթգծի և կառուցվող մի ՋԷԿ-ի տնտեսական նպատակահարմարության վերաբերյալ վարչապետ Իվանիշվիլու կատարած հարցադրումն էր, որն անհանգստություն պատճառեց թե՛ Թուրքիային, թե՛ Ադրբեջանին:

Կովկասի համալսարանի պրոֆեսոր, նախկին փոխարտգործնախարար Սերգի Կապանաձեն նշում է, որ իշխանափոխությունից հետո թե՛ Աջարիայում, թե՛ երկրի մի շարք այլ տարածքներում բնակչության շրջանում նկատվեց հակաթուրքական տրամադրությունների աճ [9]: Հատկապես 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ «Վրացական երազանքի» թեկնածուն Աջարիայում քաղաքական ընտրաբաշավը կառուցեց հակաթուրքական տրամադրությունների վրա, որը կարևոր դեր կատարեց ընտրությունների արդյունքների որոշման հարցում: Խոսելով Աջարիայում «Վրացական երազանքի» քարոզարշավի մասին՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի տնօրեն Կոբա Թուրմանիձեն նշում է, որ բավական ուշագրավ փաստ արձանագրվեց. թեև Աջարիա ուղղվեց արտաքին ներդրումների մեծ մասը և այն դարձավ վրացական տնտեսական բարեփոխումների հաջողված նմուշներից մեկը, սակայն ընդդիմությունը կարողացավ հանրային կարծիքն ուղղել թուրքերի, թուրքական կապիտալի և, իհարկե, իշխանությունների դեմ և ընտրություններում հասավ հաջողության [10]:

Թուրքական «փափուկ ուժի» արտահայտչաձևերը Վրաստանում

Թուրքիայի իշխանությունների համար ակնհայտ էր, որ միայն թուրքադրբեջանական աշխարհաքաղաքական շահերի հետապնդմամբ Վրաստանին սեփական ծիրի մեջ պահելը դժվար և երկարաժամկետ առումով ռիսկային մոտեցում էր: Ուստի, հարկավոր էր Վրաստանին հատկացված աշ-

խարհաքաղաքական և տարանցիկ կարևորությանը համարժեք ներկայացվածությունն ապահովել Վրաստանի տնտեսության ռազմավարական մի շարք ոլորտներում: Ավելի ուշ այդ քաղաքական և տնտեսական շերտերին ավելացան նաև Թուրքիայի հետապնդած մշակութային, կրթական, մարդասիրական և կրոնական ծրագրերը, որոնց նպատակն էր վրացական հասարակության շրջանում, Վրաստանի իսլամադավան հանրություն մնալովրել դրական կողմնորոշում Թուրքիայի հանդեպ: «Փափուկ ուժի» բաղադրիչների գործադրմամբ Թուրքիայի իշխանությունները նպատակ ունեին նաև հաղթահարել վրացական հանրային գիտակցության և հիշողության մեջ առկա պատմական մտազուգորդումներն օսմանյան ոչ դրական անցյալի վերաբերյալ:

Թուրքիան և Ադրբեջանը փոխարինաբար զբաղեցնում են Վրաստանի հետ արտաքին առևտրի առաջնության դասին: Հասկանալիորեն, վիճակագրության մեջ զգալի տեղ են գրավում էներգետիկ հումքի ներմուծման և արտահանման ծավալները, սակայն, դրանից զատ, մի շարք ոլորտներում առկա թուրքական ներդրումները և ապրանքաշրջանառությունը ցույց են տալիս, որ վերջին տարիներին թուրքական տնտեսական ներկայությունն անշեղորեն աճում է: Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակի տվյալների¹ վերլուծությունը ցույց է տալիս վերջին տարիներին տեղի ունեցած փոփոխությունները և դինամիկան: Նախ, եթե 1995-2003թթ. առևտրի ծավալները չեն գերազանցել 200 մլն նշաձողը, ապա 2004 թվականից հետո մինչև 2007թ. նկատվում է ծավալների գրեթե կրկնակի աճ, որը պայմանավորված է ոչ միայն «վարդերի հեղափոխությունից» հետո նոր իշխանությունների տնտեսական քաղաքականությամբ, այլ նաև Թուրքիայի իշխանությունների տնտեսական ակտիվ քաղաքականությամբ: 2006թ. վրացական ապրանքների նկատմամբ ռուսական շուկան հիմնականում դարձավ անհասանելի, որին անմիջապես հետևեց Թուրքիայի իշխանությունների քայլերը: 2007թ. նոյեմբերին կնքված Ազատ առևտրի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վրաց-թուրքական առևտրի ծավալները շեշտակի աճ են արձանագրում՝ հասնելով աննախադեպ ցուցանիշների: Առևտրային ծավալների աճը կապված էր ոչ միայն հիշյալ պայմանագրի ուժի մեջ մտնելու, այլ նաև հարավօսական պատերազմի հետևանքով վրաց-ռուսական սահմանի փակ-

¹ Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակ, Տնտեսություն,
http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=137&lang=eng

ման հանգամանքի, ինչպես նաև էներգետիկ ծրագրերի ամբողջական գործարկման և մի շարք այլ հարակից գործոնների հետ:

Ծավալների նմանատիպ աճ արձանագրվում է նաև Թուրքիայի կողմից Վրաստանում կատարված ուղղակի ներդրումների ուսումնասիրության դեպքում¹: Ինչպես արտաքին առևտրի դեպքում, այնպես էլ ներդրումների առումով գործ ունենք որոշակի օրինաչափության հետ: Օրինակ, 1997-2003թթ. կատարված ներդրումները կազմում են ընդամենը \$103 մլն և բավական համեստ են յուրաքանչյուր տարվա կտրվածքով, սակայն իրավիճակը կտրուկ փոխվում է 2004-ից հետո: Հաջորդ 9 տարիների ընթացքում թուրքական ներդրումները շեշտակիորեն աճում են՝ կազմելով \$864 մլն, իսկ 2008թ. ցուցանիշը ռեկորդային էր նախորդ և հաջորդ տարիների համեմատ՝ կազմելով \$164 մլն: Համեմատության համար նշենք, որ 1997-2013թթ. ընթացքում Ադրբեջանի ներդրումները Վրաստանում կազմում են \$714 մլն²: Հավելենք, որ թուրք ներդրողներին գերազանցապես հետաքրքրում են Վրաստանի տնտեսության տեքստիլ արտադրության, գյուղատնտեսության, շինարարության և էներգիայի ոլորտները: Շինարարության (ՋԷԿ, ճանապարհներ, երկաթգիծ) ոլորտում իրականացվող ծրագրերում ներգրավված են ավելի քան 80 թուրքական շինարարական կազմակերպություններ, որոնց աշխատանքի ընդհանուր ծավալը գերազանցում է \$1 մլրդ-ն [11]: 1999թ. տասը թուրք գործարար Թբիլիսիում հիմնադրեց *GÜRTIAD*-ը (*Gürücü ve Türk İşadamları derneği – Վրացի և թուրք գործարարների միավորում*), որը նպատակ ուներ պաշտպանել և առաջ մղել թուրք գործարարների շահերը: Այս կազմակերպության կառավարման խորհուրդը բաղկացած է 66 անդամից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մեկական կազմակերպություն³:

Այսպիսով, առևտրատնտեսական հարաբերությունների խորացման համար կարևոր էին 2006-2007թթ. իրադարձությունները, որից հետո վրացական շուկան դարձավ էլ ավելի բաց թուրքական կապիտալի և ներդրումների համար: Այդ նույն ժամանակահատվածը համընկավ թուրքական բիզնես ընտրանու՝ «անատոլիական վագրերի» և «կանաչ կապիտալի» նոր շուկաներ փնտրե-

¹ Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակ, Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=140&lang=eng

² Նույն տեղում:

³ Gürücü ve Türk İşadamları derneği, <http://www.gurtiad.ge/tr/Icerik.ASP?ID=191>

լու գործընթացի հետ: Արդյունքում՝ մի շարք թուրքական կազմակերպություններ սկսեցին ակտիվորեն ներթափանցել վրացական շուկա: Բնակչության համար հատկապես տեսանելի էին Թբիլիսիի և Բաթումի օդանավակայանների նոր տերմինալների շինարարությունը թուրքական *TAV Group*-ին (*Tepe-Akfen-Vie*) պատկանող *TAV Urban Georgia*-ի կողմից¹: Վերջինիս են պատկանում նաև նշված օդանավակայանների շահագործման և թռիչքների սպասարկման երկարաժամկետ բացառիկ պայմանագրերը²: Վերջինի սահմանած բարձր գները բազմիցս քննադատության են ենթարկվել Վրաստանի կառավարության կողմից, որի մասին բարձրաձայնեց հատկապես Իվանիշվիլու կառավարությունը [6, p. 4]: *TAV* հայտնվելը Վրաստանում առիթ դարձավ, որ թուրքական հինգ ավիափոխադրող մուտք գործի վրացական շուկա (*Turkish Airlines, Atlas Jet, Pegasus, Anadolu Jet, Bora Jet*): Թուրքական ավիափոխադրողները Վրաստանի երկու օդանավակայաններից պարբերական չվերթներ են իրականացնում Թուրքիա: Ստամբուլը դարձել է կարևոր տարանցիկ կետ դեպի Վրաստան և Վրաստանից դուրս ուղևորվելիս:

Առավել ուշագրավ է Թուրքիայի և Վրաստանի կառավարությունների միջև 2006թ. մարտի 14-ին ստորագրված պայմանագիրը Բաթումի օդանավակայանի համատեղ օգտագործման վերաբերյալ, որով թուրքական Հոփա քաղաքի գոյություն չունեցող օդանավակայանը ներառվեց Թուրքիայի ներքին թռիչքների համակարգում³: Այլ խոսքերով, թուրքական ավիաընկերությունների կայքէջերի թուրքական տարբերակում նշված Հոփա օդանավակայանն իրականում Բաթումի օդանավակայանն է:

Թբիլիսիում և Բաթումում գործում են թուրքական երկու առևտրային բանկերի մասնաճյուղերը (*T.C. Ziraat Bankası* և *Türkiye İş Bankası*): Առաջին

¹ Վերջինս կառուցել է 20 օդանավակայան թե՛ Թուրքիայում, թե՛ նրա սահմաններից դուրս:

² Բաթումի օդանավակայանը *TAV*-ի կողմից շահագործվելու է մինչև 2027թ., իսկ Թբիլիսիինը նախապես որոշված 2027-ի փոխարեն երկարացվեց մինչև 2037թ.:

³ Հոփայից մեկնող ուղևորները թռիչքի փաստաթղթերի ձևակերպումը կատարում են Հոփայի նավահանգստում գտնվող Թուրքական ավիաուղիների գրասենյակում, այնուհետև *HAVAS* կազմակերպությանը պատկանող ավտոբուսներով նրանց տեղափոխում են Բաթումի օդանավակայան, որը տևում է մոտ 30 րոպե, ընդ որում, թուրք-վրացական սահմանին ավտոբուսը չի կանգնում, այնուհետև այն մտնում է Բաթումի օդանավակայանի տարածք, իսկ ուղևորները տեղափոխվում են մեկնման սրահ ու սպասում ինքնաթիռ նստելուն: Ժամանման դեպքում Հոփա մեկնող ուղևորներին սպասում են նույն *HAVAS*-ի ավտոբուսները, որոնք ուղևորներին տեղափոխում են Հոփա կրկին կանգ չառնելով սահմանային անցակետում: Ընդ որում, Բաթումից և Հոփայից մեկնող չվերթների համարները նույնն են, իսկ տոմսերի գինը բավական տարբեր է, քանի որ Հոփայի դեպքում գործում են ներքին գներ և չեն վճարվում Բաթումի օդանավակայանի տուրքերը:

բանկը Թբիլիսիում իր մասնաճյուղը հիմնադրել է 1998թ., այն սկզբում գրանցված էր *Emlak Bank Tbilisi Branch* անվամբ, սակայն 2001թ. գրանցվեց որպես *JSC Ziraat Bankasi A.Ş. Tbilisi Branch* անվամբ: Ուշագրավ է, սակայն, որ բանկի մուտքի վրա գրված է բանկի թուրքական անվանումը՝ *T.C. Ziraat Bankası*: Երկրորդ բանկը բացվել է Բաթումում 2012թ. հուլիսին և կրկին ունի թուրքական համանուն բանկի մասնաճյուղի կարգավիճակ (*JSC Turkey İş bank A. Ş. Batumi branch*)¹: Ուշագրավ է, որ երկու բանկերն էլ ունեն միայն մեկ գրասենյակ և Վրաստանի տարածքում այլ սպասարկման կետեր չեն բացել, նրանց ֆինանսավարկային գործարքների ցուցանիշները բավական համեստ են՝ ի տարբերություն ադրբեջանական բանկերի:

2004թ. հետո թուրք-վրացական հարաբերություններում տնտեսական համագործակցության խորացումը, Թուրքիայի մակրոտնտեսական ցուցանիշների աճը նպաստեցին, որպեսզի գործազրկության բարձր ցուցանիշ ունեցող վրացական աշխատուժն սկսի տեղափոխվել նաև Թուրքիա: Հատկապես 2006թ. վիզային ռեժիմի վերացման հետևանքով Վրաստանից արտագնա աշխատանքի մեկնածների թիվն աննախադեպ աճ գրանցեց: Հետագա տարիներին Թուրքիան դարձավ Վրաստանի քաղաքացիների արտագնա աշխատանքի հիմնական երեք երկրներից մեկը (մյուս երկու երկրներն են Հունաստանը և Գերմանիան): Թուրքիա մեկնող վրացի աշխատանքային միգրանտների մեծ մասը չունի աշխատանքի թույլտվություն: Նրանք որպես սեզոնային միգրանտներ աշխատում են թեյի, մանդարինի և ընկույզի պլանտացիաներում, իսկ վրացուհիների համար մեծ պահանջարկ կա որպես դայակներ [12]: Թուրքիա արտագնա աշխատանքի մեկնած վրացիների Վրաստան կատարած բանկային դրամական փոխանցումները ևս հանդիսանում են կարևոր ցուցիչներ Վրաստանի միկրոտնտեսական ցուցանիշների վրա արտագնա աշխատանքի մեկնածների թողած ազդեցության վերաբերյալ²: Այդ տվյալներից պարզ է դառնում, որ ինչպես առևտրաշրջանառության և արտաքին ներդրումների, այնպես էլ դրամական փոխանցումների դեպքում 2004-ը շրջադարձային է նույն պատճառների համար, որոնք նշվեցին վերևում: 2004-2007թթ. Թուրքիայից Վրաստան կատարված դրամա-

¹ Gürücü ve Türk İşadamları derneği, <http://www.gurtiad.ge/tr/Icerik.ASP?ID=191>

² Վրաստանի ազգային բանկ, Վիճակագրություն, <http://www.nbg.gov.ge/index.php?m=306#monetarystatistics>

կան փոխանցումները կազմել են \$46,7 մլն, իսկ ազատ առևտրի պայմանագրի ստորագրումից հետո (2007թ. նոյեմբերի 21) ընկած ժամանակահատվածում՝ 2008-2013թթ., դրամական փոխանցումները հասնում են \$179,4 մլն-ի:

Այս ամենով հանդերձ, վրացական հասարակական և վերլուծական որոշ շրջանակներ կարծում են, որ թեև Վրաստանի իշխանությունները մեծածավալ աշխատանք կատարեցին թուրքական ներդրումների ներգրավման ուղղությամբ, սակայն «թուրքական մեծ կապիտալն այդպես էլ Վրաստան չեկավ», ինչպես հարցազրույցում նշել է Ռեզիմավարական և միջազգային ուսումնասիրությունների վրացական հիմնադրամի նախագահ Ալեքսանդր Ռոնդելին [13]: Այս կարծիքին համամիտ էին գրեթե բոլոր զրուցակիցները՝ պնդելով, որ գործադրված ջանքերը և տեսանելի արդյունքները շատ առումներով անհամատեղելի էին: Միևնույն ժամանակ, նրանք բացատրում էին, թե ինչու այն տեղի չունեցավ: Նրանց կարծիքով՝ վրացական շուկան, ինչքան էլ բաց լիներ թուրքական կապիտալի համար, այն առաձգական չէր և չէր կարող առկա պահանջարկից առավել գրավիչ լինել:

Թեև Վրաստանի քաղաքական ուժերն ընդհանուր առմամբ դրական են տրամադրված թուրքական կապիտալի և Վրաստանում թուրքական բիզնեսի տարածման հանդեպ, սակայն որոշ քաղաքական ուժեր ժամանակ առ ժամանակ բացեփրաց անհանգստություն են հայտնում Թուրքիայի աճող դերակատարության վերաբերյալ: Թեև արդեն խոսվեց «Վրացական երազանքի» նախընտրական պայքարում արձանագրած մի քանի սուր շեշտադրումների մասին, սակայն արտախորհրդարանական ուժերից հատկապես առանձնանում են «Ազատ Վրաստան» և «Վրաստանի հայրենասերների դաշինք» քաղաքական ուժերը: Մասնավորապես, «Ազատ Վրաստան» կուսակցության ղեկավար Կախա Կուկավան հարցազրույցում նշեց, որ, իհարկե, «մենք ողջունում ենք ներդրումները, սակայն շատ դեպքերում թուրք ձեռներեցների պահվածքն անհասկանալի է, օրինակ՝ Թբիլիսիի և Բաթումի կենտրոնական պողոտաներում և մայրուղիների վրա շաուրմա վաճառողները շաուրմայի կողքին դնում են Թուրքիայի դրոշմ, թե դա ինչ նպատակ է հետապնդում՝ անհասկանալի է, ինչո՞ւ է հարկավոր շաուրմայի կողքին թուրքական դրոշակ դնել: Նման դրսևորումները ոչ բարեկամաբար են ընկալվում Վրաստանում, դա միանշանակ է» [14]: Նա նաև հավելել է, որ իր կուսակցությունը «Թուրքիան դիտում է որպես սպառնալիք Վրաստանի

ազգային շահերին, սակայն, միևնույն ժամանակ, նա կողմ է, որպեսզի ծայրահեղականությունը մերժվի և դիվանագիտական ուղիներով հնարավոր լինի կանխել Թուրքիայի էքսպանսիան դեպի Վրաստան»:

Տնտեսական ազդեցության աճին զուգահեռ՝ Թուրքիայի իշխանություններն առանձնահատուկ կարևորություն են հատկացրել կրթական, կրոնական, մշակութային և հումանիտար քաղաքականությանն ու հասարակական մակարդակում Թուրքիայի վերաբերյալ Վրաստանում դրական վերաբերմունքի ձևավորմանը: Ինչպես տասնյակ այլ երկրներում, Վրաստանում ևս Թուրքիան սկսեց ստեղծել կրոնագաղափարական և մշակութային ազդեցության տարածման լծակներ, որոնց աշխատանքները համակարգում են Թուրքիայի վարչապետին կից երեք պետական հաստատություններ՝ Համագործակցության և համակարգման թուրքական գործակալությունը (*Türkiye İşbirliği ve Kalkınma İdaresi - TİKA*), Յունուս Էմրե մշակութային կենտրոնները և Կրոնի գործերի նախագահությունը (*Diyanet*) [15]:

Թուրքիայի վարչապետին կից գործող *TİKA*-ն Վրաստանում լայնածավալ գործունեություն է ծավալել դեռևս 1994 թվականից: Անցած տարիների ընթացքում Վրաստանում իրականացված ծրագրերն ընդգրկել են հետևյալ ոլորտները՝ սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավում, կրթական ծրագրերի կազմակերպում (մասնագիտական, լեզվի դասավանդման), կրթօջախների վերանորոգում և կահավորում, առողջապահություն, խմելու ջրի և սանիտարական պայմանների բարելավում: 2012թ. *TİKA*-ի տարեկան զեկույցի համաձայն՝ Վրաստանը ստացել է այդ կազմակերպության ֆինանսական, մասնագիտական և տեխնիկական աջակցության 4,23%-ը, որը 7-րդ ցուցանիշն է¹: Հարկ է փաստել, որ *TİKA*-ի շահառուները հիմնականում Վրաստանի իսլամադավան բնակչություն ունեցող շրջաններն են, և ընդամենը մի քանի ծրագրեր են իրականացվել Թբիլիսիում և Գորիում:

Թուրքիայի իշխանությունները 2007թ. որոշեցին հիմնել Յունուս Էմրե թուրքական մշակութային կենտրոնները, որոնց նպատակն էր հավասարակշռել, որոշ առումով լրացնել գյուլենական դպրոցների ազդեցությունը՝ հետևելով գերազանցապես լեզվի, գրականության, Թուրքիայի պատմության,

¹ TİKA 2012 Annual Report, Turkish Cooperation and Coordination Agency, ed. N. Yildiz, <http://store.tika.gov.tr/yayinlar/faaliyet-raporlari/tika2012AnnRep.pdf>, pp. 158-165.

մշակույթի և արվեստի տարածման նպատակ: Այս կենտրոնները ստեղծվել են Գյոթեի ինստիտուտի, Բրիտանական խորհրդի, Սերվանտեսի ինստիտուտի և նմանատիպ այլ հաստատությունների օրինակով¹: Թբիլիսիում Յունուս Էմրեի անվան թուրքական մշակութային կենտրոնի բացումն իրականացրեց Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենթ Արինջը 2012թ. մայիսին: Հիմնադրամի տնօրեն Ալի Ֆուաթ Բիլքենն իր բացման խոսքում նշեց, որ Վրաստանի և Թուրքիայի միջև քաղաքական և տնտեսական հարաբերությունները «*հասել են կատարյալ մակարդակի, հետևաբար՝ Թբիլիսիի Յունուս Էմրե թուրքական մշակութային կենտրոնի բացումը կձառայի որպես կամուրջ թուրքերենի և վրացերենի միջև, մշակույթի և արվեստի փոխանակման և երկու երկրների միջև համագործակցության խորացման ուղղությամբ*»²: Ի դեպ, նշված կենտրոնը բացվեց Իվանե Չավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանում, որի ռեկտորը բացման արարողության ժամանակ նշեց, որ կենտրոնի գործունեությունը «անգնահատելի ծառայություն կմատուցի Վրաստանի կրթական և մշակութային կյանքին»³: Ըստ Վրաստանում Թուրքիայի դեսպանատան տրամադրած տեղեկատվության՝ Յունուս Էմրե թուրքական մշակութային կենտրոնը թուրքագիտության բաժիններ է բացել նաև Քութայիսի Ակակի Ծերեթելու անվան և Ախալցխայի Պետական կրթության համալսարաններում⁴:

Երրորդ պետական հաստատության՝ Կրոնի գործերի նախագահության (ԿԳՆ) գործունեությունը Վրաստանում ևս ընդգրկել է մի քանի ոլորտներ, որոնք գերազանցապես առնչվում են կրոնական և հոգևոր խնդիրներին: ԿԳՆ-ն Վրաստանի քաղաքացիներին տրամադրում է օգնություն *հաջի* կազմակերպման, մզկիթներում քարոզիչների՝ իմամների ուսուցման, աստվածաբանների պատրաստման, հետբուհական կրթության նպատակով կրթաթոշակների տրամադրման, վրացերենով իսլամական գրականության տարածման առումներով, ԿԳՆ-ն համակարգում է նաև մզկիթների վերանորոգման,

¹ Ayhan Kaya, Yunus Emre Cultural Centers: The AKP's Neo-Ottomanism and Islamism, <http://www.tr.boell.org/web/51-1725.html>

² The Tbilisi Yunus Emre Turkish Cultural Centre Opened, <http://www.yev.org.tr/turkiye/index.php?lang=en&page=7&newsCat=1&newsID=297>

³ Նույն տեղում:

⁴ Türkiye-Gürcistan Kültürel İlişkileri, 24.10.2012, <http://tbilisi.emb.mfa.gov.tr/ShowInfoNotes.aspx?ID=164753>

նորերի կառուցման գործում ֆինանսական և խորհրդատվական օժանդակության տրամադրումը [16]: ԿԳՆ ղեկավարությունը Վրաստան այցելեց 2009թ., իսկ Վրաստանի հոգևոր առաջնորդը ԿԳՆ ղեկավարին Թուրքիայում հանդիպեց 2014թ. մայիսին: ԿԳՆ-ն 1995թ. հիմնադրեց Եվրասիական իսլամական խորհուրդը (ԵԻԽ, *Avrasya Islam Şurası*), որը դարձել է կարևոր հարթակ Բալկանների և ԱՊՀ իսլամական համայնքների հետ աշխատանքի կազմակերպման հարցում [15, p. 89]: ԵԻԽ-ը մինչ այժմ կազմակերպել է 8 համաժողով, որոնց մասնակցել են նաև Վրաստանի իսլամական համայնքների ղեկավարները, այդ թվում՝ Աջարիայի մուֆթիները:

Ի լրումն վերոհիշյալ պետական հաստատությունների՝ Վրաստանում գործում են նաև Ֆեթուլա Գյուլենի ցանցին պատկանող թուրքական մի շարք կրթական հաստատություններ: Մասնավորապես, ակտիվ են գյուլենական «թուրքական դպրոցները», որոնք գործում են «Վրաստանի Չաղլար կրթական հաստատություններ» (*Çağlar Eğitim Kurumları*) կազմակերպության հովանու ներքո, որը հիմնադրվել է 1993թ. փետրվարին: Մինչ այժմ Վրաստանի տարբեր հատվածներում ստեղծվել և գործում են այդ կազմակերպությանը պատկանող 7 դպրոց, մեկ համալսարան և մեկ մասնագիտական դպրոց¹: Այդ դպրոցների հիմնադրման տարիները ցույց են տալիս, որ բացառությամբ առաջին երկուսի և համալսարանի, որոնք ստեղծվել են Թբիլիսիում և Բաթումում՝ համապատասխանաբար 1993 և 1995թթ., մյուս հինգ դպրոցները հիմնադրվել են «վարդերի հեղափոխությունից» հետո՝ Սաակաշվիլու իշխանության տարիներին:

Գյուլենական դպրոցների թե՛ կառավարումը, թե՛ դասավանդումը (մեծ մասամբ) իրականացվում է Թուրքիայի քաղաքացիների կողմից: Այդ դպրոցներն աչքի են ընկնում շենքային լավ պայմաններով և առաջադեմ

¹ Այդ ցանցին պատկանող դպրոցներն են Թբիլիսիի Դեմիրելի մասնավոր քուլեջը՝ հիմն. 1993թ. (*Private Demirel School*), Բաթումի Բ.Շահինի բարեկամության նախնական և միջին դպրոցը՝ հիմն. 1994թ. (*R.Sahin Friendship Primary Secondary School*), Քուրթայիսի Նիկո Նիկոլաձեի անվան նախնական և միջին դպրոցը՝ հիմն. 2004թ. (*Kutaisi Niko Nikoladze Primary Secondary School*), Թբիլիսիի «Շխիվի» նախնական դպրոցը՝ հիմն. 2011թ. (*Primary school "Skhivi"*), Թբիլիսիի Նիկոլոզ Շերեթելու միջազգային դպրոցը՝ հիմն. 2006թ. (*Tiflis Nikolaz Tsereteli International School*), Ռուսթավի Ռուսթավելու նախնական և միջին դպրոցը՝ հիմն. 2007թ. (*Rustabi Rustaveli Primary Secondary School*), Մառնեուլի Ագմաշենեբելու նախնական դպրոցը՝ հիմն. 2011թ. (*Marneuli Agmashenebeli Primary school*) և Թբիլիսիում գործող Սևծովյան միջազգային համալսարանը (*International Black Sea University*)՝ հիմն. 1995թ.:

տեխնիկական լուծումներով: Հատուկ ուշադրություն է հատկացվում Թուրքիայում տեղի ունեցող օլիմպիադաներին մասնակցությանը, որի շնորհիվ դպրոցականներին հնարավորություն է ընձեռվում այցելել Թուրքիա, ծանոթանալ ծրագրի կազմակերպիչներին և հաստատել կապեր: Ուշագրավ է, որ դպրոցների և համալսարանի միջև ստեղծված է ճկուն և փոխլրացնող համակարգ: Նախնական և միջին դպրոցների շրջանավարտները համալսարանում սովորելիս ստանում են զեղչ: Համալսարանում սովորելու տարիներին ևս ուսանողները ստանում են հնարավորություն՝ պարբերաբար մասնակցելու թուրքական մշակութային միջոցառումներին և հաճախ այցելելու Թուրքիայի կրթական և գիտական հաստատություններ: Դպրոցների շրջանավարտների համար հայտարարվում են նաև կրթաթոշակների մրցույթներ, շատերը մեկնում են Թուրքիա, ինչպես նաև Եվրոպա և ԱՄՆ՝ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով: Այդուհանդերձ, ինչպես հարցազրույցում նշել է նույն համալսարանի պրոֆեսորներից մեկը, թեև այդ դպրոցները հիմնադրված են թուրքական նախաձեռնությամբ, ունեն թուրքական կրթական հաստատություններին հարիր համակարգ, սակայն գյուլենականության և Թուրքիայի վերաբերյալ ոչ մի բացահայտ քարոզչություն, ոչ մի կերպ չի կատարվում [17]: Այդ ամենով հանդերձ, բոլոր մասնաշենքերի դիմաց Վրաստանի դրոշի հետ միասին տեղադրված է նաև թուրքականը, իսկ բոլոր դպրոցների տարբերանշանների վրա պատկերված են իրար ձեռք սեղմող թուրքական և վրացական դրոշները: Այսինքն՝ աշակերտները և ուսանողներն ամեն օր առչնվում են Թուրքիայի հետ ասոցացվող խորհրդանիշներին:

Վրաստանում Թուրքիայի դեսպանատունն իրականացնում է նաև մի շարք ծրագրեր, որոնք նշված չեին պաշտոնական կայքում: Օրինակ, Ալեքսանդր Ռոնդելին նշել է, որ իր ղեկավարած կազմակերպության կողմից դեսպանատան աջակցությամբ իրականացվում է «Աթաթյուրքի առաջնորդության դասընթացներ» ծրագիրը: Այդ ծրագրի իրականացման չորս ամիսների ընթացքում տարբեր նախարարությունների երկու տասնյակ պաշտոնյաների համար կարդացվում էին դասախոսություններ տարբեր թեմաներով, իսկ վերջին շաբաթվա ընթացքում թուրք դիվանագետներից մեկը կարդացել էր դասախոսությունների շարք «Աթաթյուրքի դերը նոր պետության ստեղծման գործում» խորագրով: Այս ծրագրի համար տրամադրվել է մի քանի տասնյակ հազար վրացական լարի [13]:

Նկատի ունենալով վերոշարադրյալը՝ ինչո՞վ է պայմանավորված թուրքական ներկայության նկատմամբ վրացական հասարակության և իշխանությունների ընկալումային տարբերությունները: Վերոհիշյալ հարցազրույցում Սասկաշվիլին ավստսանք է հայտնում, որ իր կառավարման ժամանակաշրջանում շատ երիտասարդների չի ուղարկել Թուրքիա՝ այն տեսնելու կամ այնտեղ սովորելու համար: «*Իմ երկրում իրականում շատ քիչ մարդ կա, որոնք ճանաչում են Թուրքիան: Դրանով է պայմանավորված, որ տակավին առկա են շատ նախապաշարմունքներ: Կառավարության մակարդակում այդ նախապաշարմունքները հաղթահարվեցին... սակայն մենք չէինք կարծում, որ նախապաշարմունքները շարունակում էին գերիշխել ազգաբնակչության մեջ*» [4, pp. 20-21]: Գյոքսելը հավելում է, որ ի տարբերություն տնտեսական և ռազմավարական ինտեգրացիայի ուղղություններով արձանագրված արդյունքների՝ երկու երկրների քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչների, հանրային կարծիք ձևավորողների, վերլուծաբանների, վերլուծական կենտրոնների և լրատվական համայնքների միջև կապերը զգալիորեն թույլ են: Այս հանգամանքի արդյունքում ոչ ձեռքբերումները, ոչ երկկողմ հարաբերություններում առկա վերելքներն ու վայրէջքները երկու երկրների հանրային քննարկումներում բավարար ուշադրության չեն արժանանում [6, p. 5]:

Իրականում, վրացիների վերաբերմունքը Թուրքիայի և թուրքերի նկատմամբ շարունակում է ձևավորվել մի շարք գործոնների ազդեցությամբ: Նախ, պատմական և մշակութային առումով վրացական հասարակության հավաքական ընկալման մեջ դեռ վառ են օսմանյան տիրապետության ժամանակ պատմական հակամարտությունների, բախումների վերաբերյալ հիշողությունը: Այս գործոններից զատ, Կովկասյան բարոմետրի կողմից Վրաստանի հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները¹ ցույց են տալիս մեկ այլ ուշագրավ միտում: Հետևյալ *Աղյուսակը* ցույց է տալիս վերջին հինգ տարիներին տեղի ունեցած հանրային կարծիքի փոփոխության դինամիկան:

¹ Cross-country datasets, <http://caucasusbarometer.org/en/cross-country/>

Տարեթիվ	Ինչպե՞ս էք վերաբերվում թուրքերի հետ համատեղ բիզնեսին	Արդյո՞ք կողմ եք, որ վրացուհիներն ամուսնանան թուրքերի հետ
2009	75% կողմ	19% կողմ
2010	66% կողմ	19% կողմ
2011	66% կողմ	21% կողմ
2012	65% կողմ	20% կողմ
2013	72% կողմ	23% կողմ

Մեկնաբանելով հիշյալ հարցումների պատասխանները՝ այդ հետազոտություններն անցկացրած Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի տնօրեն Կոբա Թուրմանիձեն նշեց, որ իրականում վրաց հասարակությունն ավելի կողմ է թուրքիայի հետ միջպետական հարաբերությունների զարգացմանը, քան թե հասարակությունների և միջանձնային հարաբերությունների խորացմանը [10]:

Ալեքսանդր Ռոնդելին պնդում է. «Եթե չլիներ թուրքիայի աջակցությունն անկախության առաջին տարիներին, հավանական է, որ Վրաստանն անգամ կարող էր գոյություն չունենալ» [13]: Չեխիֆալան ևս շեշտում է, որ «Թուրքիան Վրաստանին հետ քաշեց ձախողված պետության վերածվելու ուղուց՝ օգնելով նրան դառնալ ուժեղ և արդյունավետ պետություն» [2, p. 28]: «Միևնույն ժամանակ,- շարունակում է Ռոնդելին,- պատմական հիշողությունը, ամեն դեպքում, աշխատում է, և ազգաբնակչության մեծ մասը զգուշավորությամբ է մոտենում թուրքերին: Թուրքիայի դեմ, իհարկե, մեծ հակաքարոզչություն է ընթանում, հիմնականում եկեղեցամերձ շրջանակների կողմից, երբեմն նրանք (թուրքերը- *SU*) դա վաստակում են, երբեմն՝ ոչ» [13]:

Ըստ Կապանաձեի, այս ամենով հանդերձ՝ թուրքիայի իրականացրած մշակութային քաղաքականությունն այնքան էլ տեսանելի չէ հանրության շրջանում: Հասարակությունը չի դառնում թուրքամետ, թուրքական ավանդույթները չեն փոխարինվում վրացականով, այո՛, թուրքիան կարևոր դեր է խաղում, սակայն ոչ այնպիսին, ինչպիսին ԵՄ-ը և ԱՄՆ-ը [9]: Հաճախ հանրային քննարկումներում, ըստ Կապանաձեի, համեմատվում են Ռուսաստանը և Թուրքիան, նշվում է, որ «իրականում Թուրքիան ավելի շատ տարածքներ է գրավել Վրաստանից, քան Ռուսաստանը, ո՞րն է տար-

բերությունը»: Եվ դրա վրա է կառուցվում հակաթուրքական տրամադրությունների տրամաբանությունը:

Թուրք-վրացական հակասություններն Աջարիայում

Թուրք-վրացական համագործակցության արդյունքում գրանցված արդյունքներից բացի, առկա են նաև որոշակի բարդություններ, որոնք ժամանակ առ ժամանակ գլուխ են բարձրացնում երկկողմ հարաբերություններում: Նպատակ չունենալով անդրադառնալ քննարկվող բոլոր հակասություններին՝ ստորև կքննարկվի միայն Աջարիայի խնդիրը:

Թուրքական ներկայությունը և մշակութային ներթափանցումն առավել տեսանելի են Աջարիայում, որտեղ, ըստ 2002թ. տվյալների, ապրում է ավելի քան 120 հազ. մահմեդական: Նրանք ապրում են հատկապես լեռնային Քեդիի և Խուլոյի շրջաններում, ինչպես նաև Բաթումում, իսկ տեղաբնիկների պնդմամբ, Աջարիայում չկան գյուղեր, որտեղ ապրեն միայն մահմեդականներ կամ միայն քրիստոնյաներ [18, p. 107]: 2013թ. հրապարակված զեկույցում նաև նշվում է, որ լեռնային Աջարիայում սոցիալ-տնտեսական պայմաններն առավել բարդ են, որոնց պատճառով տեղի մահմեդական բնակչությունը ենթարկվում է տարաբնույթ մանիպուլյացիաների (թուրքերի կողմից) և խտրականության (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից) [19]:

Թուրքական կրոնական կազմակերպություններն Աջարիայի տարածքում ունեն մի քանի տասնյակի հասնող գիշերօթիկ դպրոցներ, որոնցում գյուղական աղքատ ընտանիքների երեխաներին անվճար կրթություն է տրամադրվում, որից հետո շատերին ուղարկում են Թուրքիա՝ կրոնական կրթություն ստանալու նպատակով: Նշվում է, որ 1993թ. ի վեր կրոնական կրթության (թե՛ բարձրագույն, թե՛ հատուկ մասնագիտական) և Ղուրանի ուսուցման դասընթացների համար Թուրքիա է մեկնել Վրաստանի մի քանի հազար քաղաքացի¹, հիմնականում՝ Աջարիայից և Քվեմո Քարթլիից: Նրանց մեծ մասը վերադարձել է ու որպես մզկիթների սպասավոր աշխատանքի անցել Վրաստանի տարբեր բնակավայրերում: 2014թ. մայիսի տվյալներով՝ Վրաստանի տարածքում գործում էր 311 մզկիթ², որոնց մեծ մասը փոքր

¹ Дарья Асламова, Аджария: между крестом и полумесяцем, <http://www.kp.ru/daily/adjara>

² Diyanet İşleri Başkanı Görmez, Gürcistan Ortodoks Kilisesi Patriği İl. İlia'ya kabul etti, 02.05.2014, <http://www.diyanet.gov.tr/tr/icerik/diyanet-isleri-baskani-gormez-gurcistan-ortodoks-kilisesi-patrigi-ii-ilia>

աղոթասուներ են, որոնք, սակայն, պաշտոնապես գրանցված են որպես մզկիթներ: 2009թ. տվյալների համաձայն՝ այդ մզկիթներից 184-ը գործում է Աջարիայում, որոնցից 140-ը կառուցվել է վերջին տարիներին [19, p. 119]:

Վերջին տարիներին Վրաստանում հատկապես սուր են քննարկումները թուրքական մի շարք ծրագրերի կապակցությամբ, մասնավորապես՝ մզկիթների վերակառուցման կամ նորերի կառուցման ուղղությամբ: Աջարիայում թուրքական ներկայության դեմ հատկապես վճռական պայքար է մղում Վրաստանի Ուղղափառ եկեղեցին, որը պայքարում է Աջարիայի մահմեդականների վերաբրիստոնեացման և Թուրքիայի տարածքում վրացական եկեղեցիների վերակառուցման ուղղությամբ: Մի քանի վրացի հոգևորականներ առավել աչքի են ընկել թուրքերի դեմ տարվող քարոզչությամբ, որոնք Աջարիայի ապաթուրքականացման մասին քարոզում են անգամ ժամերգությունների ընթացքում: Նրանք իրականացնում են զանգվածային մկրտության արարողություններ՝ «նախնիների հավատքին վերադարձնելու նպատակով» [19, pp. 122-123]: Վրացի հոգևորականությանը և հասարակական-քաղաքական շրջանակներին հատկապես մտահոգում են Աջարիայի տարբեր հատվածներում, հատկապես Բաթումում և Գոնիոյում գործող հասարակաց տները, որոնց հիմնական այցելուները թուրքերն են: Մեկ այլ ուշագրավ գործընթաց է Վրաստանի իսլամադավան բնակիչներ ունեցող մի շարք բնակավայրերում (Չելա, Մամտացկարո, Նիզվզիանի, Յինցկարո և այլն) գործող մզկիթների կամ մինարեների ապամոնտաժումը, իսկ որոշ բնակավայրերի մզկիթներում՝ ուրբաթօրյա աղոթքների դեմ բողոքի ցույցերը, որոնք, ըստ որոշ պնդումների, ուղղորդվում են ուղղափառ եկեցեղու կողմից:

Հարկ է նշել, որ տարբեր վերլուծաբաններ և քաղաքական շրջանակներ ակնարկում են կրոնական հողի վրա Վրաստանում հնարավոր լարվածության օջախների ձևավորման մասին: Այդ պատճառով հասարակության մի հատված հավատում է, որ Թուրքիայի ակտիվությունը Վրաստանում և իսլամադավան վրացիներին ցուցաբերած օժանդակությունը Վրաստանում հենարան ստեղծելու նպատակ ունեն: Մինչդեռ, հիմնականում հենց իսլամադավան վրացիները և, առավել նվազ չափով, այլ էթնիկ խմբերին պատկանող իսլամադավաններն այդ պնդումները համարում են անընդունելի, քանի որ այդ մեղադրանքի պատճառով նրանք համարվում են ոչ լիարժեք ու օտարված վրացիներ և քաղաքացիներ: Նրանք հավելում են, որ Թուրքիան

Վրաստանում հետապնդում է գերազանցապես տնտեսական շահեր, իսկ Վրաստանի մահմեդականները չեն տիրապետում ազդեցիկ լծակների, որպեսզի Թուրքիայի համար ծառայեն որպես 5-րդ շարայուն [19, p. 128]:

Վրաց-թուրքական հարաբերություններում առկա հակասությունների հաջորդ խնդիրն առնչվում է երկու երկրներում մշակութային ժառանգության պահպանման և տնօրինման հարցերին: Վրաց-թուրքական միջպետական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ՝ հատկապես սկսած 2005 թվականից, Վրաց Ուղղափառ եկեղեցին առավել մեծ հետևողականությամբ է բարձրացնում Թուրքիայի հյուսիսարևելյան հատվածում գտնվող մի քանի եկեղեցիների և վանքերի (Օշ, Իշխան, Խանձթա, Օթխթա, Արդաշեն, Խախուլի) վերակառուցման հարցը: Թեև Հայոց Առաքելական եկեղեցին և մի շարք հայ պատմաբաններ ու ճարտարագետներ հարցականի տակ են դնում այդ եկեղեցիների՝ Վրաց Ուղղափառ եկեղեցուն պատկանելու պնդումները, սակայն այս պահին այդ եկեղեցիների կարգավիճակի և վերակառուցման հարցերում առավել հետևողական է Վրաց Ուղղափառ եկեղեցին: Միևնույն ժամանակ, թուրքական կողմը պահանջում է, որպեսզի թույլատրվի վերակառուցել Բաթումի Ազիզիե մզկիթը և վերանորոգել Քոբուլեթի Քվիրիկե և Ախալցխայի Ահմադիյա և Ջաքելի մզկիթները: Հարկ է հավելել, որ կողմերի պայմանները և բանակցվող կրոնական կառույցների ցուցակները ժամանակ առ ժամանակ փոխվում են [20]:

Վրաց եկեղեցու առաջնորդները պնդում են, որ Աջարիայում գոյություն ունեն հարյուրավոր մզկիթներ, մինչդեռ եկեղեցիների թիվը չի գերազանցում 40-ը, հետևաբար, նախքան Աջարիայում նոր եկեղեցու շինարարության կամ վերանորոգման մասին խոսելը, հարկավոր է նախ լրջորեն անդրադառնալ Տայքի (Թաո-Քլարջեթի) թեմին պատկանող եկեղեցիների պահպանման և նրանցում կրոնական ծեսերի ու ծառայությունների իրականացման իրավունք ստանալու խնդիրներին: Վրաց հոգևորականները պահանջում են նաև, որ ինչպես հայերի, հույների և հրեաների պարագայում, այնպես էլ վրացիներին հարկավոր է տալ փոքրամասնության իրավունքներ, ինչը թույլ կտա ձեռք բերել իրավական կարգավիճակ, ինչին էլ, ըստ նրանց, կհետևի վրաց եկեղեցիների և վանքերի վերադարձը Վրաց Ուղղափառ եկեղեցուն¹: Թուր-

¹ Georgian Patriarchate Suggests Turkey Allow Services In Christian Churches In Return For Allowing A Mosque To Be Built In Georgia, <http://www.pravoslavie.ru/english/60586.htm>

քական կողմը հակադարձում է՝ նշելով, որ եթե անգամ, ելնելով Թուրքիայում աճող վրացիների թվաքանակից, նրանց տրամադրվի կրոնական փոքրամասնության կարգավիճակ, այն չի կարող հետադարձ ուժ ունենալ և ազդել 1936թ. բռնագրված և ենթադրաբար վրացիներին պատկանող եկեղեցական կալվածքների և գույքի վերադարձի վրա:

Աջարիայում ներկայացված իրողությունների համադրումից կարող է տպավորություն ստեղծվել, որ վրացական հասարակության բոլոր շերտերը լուր կամ բարձրաձայն, իրենց անհամաձայնությունն են հայտնում թուրքական քաղաքականության նկատմամբ: Իրականում, հատկապես Սասկաշվիլու իշխանության ժամանակ, կարևոր քաղաքական պաշտոններ զբաղեցրած անձինք պնդում են, որ «եթե անկեղծ լինենք... ապա Թուրքիան Աջարիայում ոչ մի ապակառուցողական դեր չի ունեցել և ոչինչ չի արել, որը կարող էր չբավարարել ինչ-որ մեկին: Նրանց համար, ովքեր ապրում են Աջարիայում, հարևանությունը Թուրքիայի հետ, ըստ էության, շահութաբեր է, ակտիվ գործակցությունը տնտեսական, տուրիստական և առևտրային ոլորտներում ոչ մի անհարմարություն չի պատճառում» [7]: Նույն հարցազրույցում քննադատություն կա նաև Թուրքիային դատապարտող այն կազմակերպությունների և հասարակության այն շրջանակների հանդեպ, որոնք մեծարում են Ռուսաստանը և պախարակում Թուրքիան՝ նրանց անվանելով «ապակառուցողական և հակաժողովրդավարական ուժեր»:

Դեկտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Mickael Hikari Cecire*, The Merchant Hegemon: Georgia's Role in Turkey's Caucasus System in *Georgian Foreign Policy: The quest for Sustainable Security*, eds. K. Kakachia and M. Cecire, Tbilisi, Konrad Adenauer Stiftung e.V, 2013, pp. 111-124.
2. *Mitat Çelikpala*, Turkey as a Regional Power and the Caucasus, *Insight Turkey*, 2007, vol. 9, no. 2, pp. 25-30.
3. *Bayram Balci*, Strengths and Constraints of Turkish Policy in the South Caucasus, *Insight Turkey*, v. 16, n. 2, 2014, pp. 43-52.
4. Interview with Mikheil Saakashvili: Georgia's Westward March, *Turkish Policy Quarterly*, 2013, v. 12, n. 1.
5. *Ahmed Davutoglu*, Turkey's Foreign Policy Vision: An assessment of 2007, *Insight Turkey*, 2008, v. 10, n. 1, pp. 77-96.
6. *Diba Nigar Göksel*, Turkey and Georgia: Zero-Problems?, On Wider Europe, Black Sea Trust for Regional Cooperation, GMF, June 2013.

7. Հարցազրույց Էկա Տկեշելաշվիլու հետ, մայիսի 7, 2014թ. Թբիլիսի:
8. *Irakli Alasania*, Forward in Georgian Foreign Policy: The quest for Sustainable Security, eds. K. Kakachia and M. Cecire, Tbilisi, Konrad Adenauer Stiftung e.V, 2013, p. 7.
9. Հարցազրույց Սերգի Կապանաձեի հետ, մայիսի 7, 2014թ., Թբիլիսի:
10. Հարցազրույց Կոբա Թուրմանիձեի հետ, մայիսի 8, 2014թ., Թբիլիսի:
11. *Ivane Chkhikvadze*, Zero Problems With Neighbors: The Case Of Georgia, Turkish Policy Quarterly, 2011 Summer.
12. Case Studies: Germany, Greece and Turkey: Country background and research hypotheses, A report prepared by the Enhancing the Role of Georgian Migrants At Home project (ERGEM project), Danish Refugee Council and International Centre of Migration Policy Development, 20/9/2013.
13. Հարցազրույց Ալեքսանդր Ռոնդելիի հետ, մայիսի 6, 2014, Թբիլիսի:
14. Հարցազրույց Կախա Կուկավայի հետ, մայիսի 11, 2014, Թբիլիսի:
15. *Kerem Öktem*: Projecting Power: Non-conventional Policy Actors in Turkey's International Relations in Another Empire? A Decade of Turkey's Foreign Policy under the Justice and Development Party, eds. Kerem Öktem, Ayse Kadioglu and Mehmet Karsli, Istanbul, Bilgi University Press, 2012, pp. 77-108.
16. *Şenol Korkut*, The Diyanet of Turkey and Its Activities in Eurasia after the Cold War, Acta Slavica Iaponica, 2010, Tomus 28, pp. 117-139.
17. Հարցազրույց Նիկա Չիտաձեի հետ, Թբիլիսի, մայիսի 10, 2014:
18. Political Aspects of Islam in Georgia, *Irakli Menagarishvili et al.*, Strategic Research Institute, 2013, p. 107.
19. Islam in Georgia, pp. 107-108.
20. *Beka Mindiashvili*, Decisive battle for Oshki, *Tabula*, 2012, no. 16.

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ**

Վահրամ Տեր-Մաթևոսյան

Ամփոփագիր

Թուրքիայի համար Վրաստանի կարևորությունն առավել քան ակնհայտ է, և դրա վկայությունը տարեցտարի աճող տնտեսական ազդեցությունն է: Քաղաքական և տնտեսական հարաբերությունների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ Վրաստանը, թե՛ Թուրքիան երկկողմ հարաբերությունների կառուցման գործում հետապնդում են տարբեր նպատակներ: Եթե Թուրքիան Վրաստանում հետապնդում է աշխարհաքաղաքական, տնտեսական, կրոնական և սոցիալ-մշակութային շահեր, ապա Վրաստանի քաղաքականությունը Թուրքիայի ուղղությամբ կառուցվում է գերազանցապես առևտրատնտեսական և սոցիալական գործոնների վրա: Վրացական հասարակական-քաղաքական գործիչների մեծ մասը, վերլուծական հանրությի

Ճնշող մեծամասնությունն ընդհանուր առմամբ դրական են վերաբերվում Վրաստանի տնտեսության և ռազմավարական ոլորտներում Թուրքիայի ներկայությանը: Հասարակության որոշ շրջանակներում, սակայն, առկա է որոշակի զգուշավորություն Թուրքիայի հետապնդած նպատակների վերաբերյալ, հատկապես մատնանշվում է Աջարիայում, Աբխազիայում և Վրաստանի իսլամադավան բնակչություն ունեցող համայնքներում Թուրքիայի վարած քաղաքականությունը: Մի շարք քաղաքական ուժեր, կազմակերպություններ, ինչպես նաև Վրաց Ուղղափառ եկեղեցին հանրային բացասական կարծիքի վրա ձևավորում են քաղաքական օրակարգ, որն ընկալվում է որպես հակաթուրքական կամ հակաիսլամական: Այնուամենայնիվ, 2004թ. ի վեր Թուրքիայի աճող ազդեցությունը Վրաստանի տնտեսությունում, Վրաստանի ներգրավումը Ադրբեջանից արևմուտք ուղղվող էներգետիկ ծրագրերում, վրաց-ռուսական հարաբերություններում շարունակվող անորոշությունը Վրաստանում Թուրքիայի քաղաքական ազդեցության համար ստեղծել են համակարգային գործունեության հիմքեր, իսկ Վրաստանը հայտնվել է որոշակի իմաստով նպաստավոր, սակայն երկարաժամկետ առումով ոչ միանշանակ աշխարհաքաղաքական իրողության պայմաններում:

ПОСЛЕДСТВИЯ ПОЛИТИЧЕСКОЙ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ТУРЦИИ В ГРУЗИИ

Ваграм Тер-Матевосян

Резюме

Важность Грузии для Турции более чем очевидна, и об этом свидетельствует ее растущее из года в год экономическое влияние. Анализ динамики политических и экономических взаимоотношений показывает, что Грузия и Турция преследуют разные цели в процессе построения двусторонних отношений. Если Турция преследует в Грузии геополитические, экономические, религиозные и социально-культурные интересы, то политика Грузии в направлении Турции строится в основном на торгово-экономических и социальных факторах. Большая часть общественно-политических показателей, подавляющее большинство аналитического сообщества в целом положительно относятся к присутствию Турции в экономической и стратегической сферах Грузии. В некоторых кругах общества, тем не менее, присутствует определенная осторожность по отношению к целям, преследуемым Турцией, особенно относительно политики, проводимой Турцией в общинах Аджарии, Абхазии и Грузии, имеющих исламское население. Целый ряд политических сил, организаций, а также Грузинская Православная церковь формируют на общественном негативном мнении политический распорядок, который воспринимается как антитурецкий или антиисламский. Тем не менее, начиная с 2004г., растущее влияние Турции на экономику Грузии, вовлеченность Грузии в энергетические программы, направленные из Азербайджана на запад, продол-

жающаяся неопределенность в русско-грузинских отношениях создала в Грузии основы для системной деятельности Турции, а Грузия оказалась в условиях благоприятных, однако в долгосрочной перспективе неоднозначных геополитических реалий.

THE CONSEQUENCES OF TURKEY'S SOCIOECONOMIC ACTIVITIES IN GEORGIA

Vahram Ter-Matevosyan

Resume

The importance of Georgia for Turkey is more than obvious and this is evidenced by its increasing economic influence. An analysis of the political and economic relationship shows that Turkey and Georgia pursue different goals in their mutual relations. Turkey pursues geopolitical, economic, religious and sociocultural interests in Georgia, whereas Georgia's policy towards Turkey is based primarily on economic and social factors. Most of the Georgian politicians regard favorably the presence of Turkey in their country's economy and strategic areas. However, certain parts of the Georgian society exercise caution with regard to the objectives pursued by Turkey, especially its policies in relation to Adjara, Abkhazia and communities with Muslim population. A number of political forces, as well as the Georgian Orthodox Church, based on negative public opinion formulate a political agenda, which is perceived as anti-Turkish or anti-Islamic. Nonetheless, the increasing Turkish influence on Georgian economy since 2004, Georgia's involvement in energy projects in direction from Azerbaijan to the West, and continued uncertainty in Georgia-Russia relations have created grounds for systemic activities of Turkish political influence. In the short term this brings favorable geopolitical realities for Georgia, yet these are very ambiguous in the long run.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ
(ԸՍՏ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

Մամուլի Մանուկյան՝

Բանալի բառեր՝ ուսանողություն, հասարակական գիտություններ, հասարակարգ, գիտակցության մանիպուլյացիա, քաղաքական գործընթաց, ազգային անվտանգություն:

Կապիտալիստական աշխարհամակարգում տեղի է ունենում հեգեմոնի դիրքերի թուլացում: Այդ համակարգը մտնում է բիֆուրկացիայի փուլ: Սրվում են նրա ներքին հակասությունները, ինչի հետևանքով հաճախակիանում են տնտեսական ճգնաժամերը, դրանք ավելի են խորանում: Հակասություններն ի հայտ են գալիս աշխարհամակարգի բոլոր կառուցվածքային մակարդակներում և հատկապես սուր են դրսևորվում ծայրամասային երկրներում, ինչպիսին է նաև Հայաստանը:

Աշխարհամակարգի գրեթե բոլոր հակասությունները, հեգեմոնի ուղղակի և անուղղակի կառավարման ներքո, վերաճում են հասարակական-քաղաքական հուզումների, ճգնաժամերի և ներքին ու միջազգային արյունահեղ հակամարտությունների, որոնք ոչ այնքան համարժեք ձևով անվանվում են «հեղափոխություններ»: Այդ «հեղափոխություններին» վերջնանպատակը «հեղափոխական» և այն երկրների տնտեսական, գիտական, տեխնոլոգիական, սոցիալական և մշակութային ներուժի նվազեցումն է, *որոնք չեն ընդունում այսօրվա հեգեմոնի կարգավիճակը:*

Այս պայմաններում, աշխարհամակարգի կառուցվածքի խարխլման հետևանքով ի հայտ եկած մարտահրավերներին հաջող արձագանքելու նպատակով, ազգային պետությունների համար հատկապես կարևորվում է երկու խնդիր: Նախ՝ հարկավոր է ապահովել ներպետական հասարակական-

^{*} Սոց.գ.թ., IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, վերլուծաբան:

քաղաքական և տնտեսական գործընթացների պայմանավորվածությունը սեփական ազգային շահերով, որոնք պետք է համադրել բարոյական սկզբունքների վրա հիմնված գլոբալ հումանիտար նպատակների հետ: Երկրորդ՝ հարկ է ձևավորել ազգային ընտրանիներ, որոնք կունենան հայեցակարգային և ամբողջական աշխարհընկալում, որի հիման վրա նրանք ի վիճակի կլինեն համարժեք հասկանալ տեղի ունեցող գլոբալ, տարածաշրջանային և տեղային գործընթացների էությունը:

Այս առումով կարևոր և առանձնահատուկ խումբ է հանդիսանում ուսանողությունը:

Ուսանողության կարևորությունն այն է, որ ուսանողներն ամենաակտիվ հասարակական խմբերից մեկն են, իսկ դրա առանձնահատկությունն այն է, որ այսօր ուսանողական միջավայրում են գտնվում ազգային պետությունների ապագա ընտրանիները: Ուստի, եթե կարճաժամկետ հեռանկարում ուսանողության հայեցակարգային և հասարակագիտական կրթությունն ու աշխարհայացքը կարևոր են երկրում հասարակական-քաղաքական գործընթացների ընթացքի տեսակետից, ապա երկարաժամկետ հեռանկարում՝ 10-20 տարի հետո, ներկայիս ուսանողության հասարակագիտական համարժեք կրթությունը կլինի ազգային ապագա ընտրանիների որակի գրավականը:

Այս համատեքստում կարևոր է ունենալ հետևյալ հարցերի պատասխանները.

1. Ո՞ր հարցերն են ուսանողության ընկալմամբ առավել կարևոր Հայաստանի համար:
2. Ի՞նչ հիմնական դիրքորոշումներ ունեն ուսանողները բազային հասարակական խնդիրների՝ աղքատության, անհավասարության և ընտրանիների արտոնությունների նկատմամբ:
3. Ունե՞ն արդյոք ուսանողներն այդ խնդիրների ամբողջական և համակարգային ընկալման, բացատրման և լուծումների որոնման հայեցակարգային հիմք:
4. Ինչպիսի՞ն է ապագա ընտրանիների հասարակագիտական իմացության ձևավորման արդյունավետությունը բարձրագույն դպրոցում:
5. Ինչպիսի՞ն է Հայաստանի քաղաքական համակարգի՝ մտավոր առումով հասուն կադրերի ընտրության արդյունավետությունը:

6. Ի՞նչ առանձնահատկություններ ունի ուսանողների քաղաքական մասնակցությունը:

Այս հարցերի նախնական ընդհանուր պատասխաններն ստացվել են «Երևանի ուսանողների կենսառճի և Բոլոնյան գործընթացի գնահատման հետազոտություն» համալիր նախագծի շրջանակներում, որն անցկացվել է *IPSC* Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պատվերով: Այլ թեմաների շարքում հետազոտվել են նաև այն հարցերը, որոնք միաժամանակ թույլ են տալիս ընդհանուր պատկերացում կազմել այսօրվա հասարակական-քաղաքական գործընթացներում ուսանողության հնարավոր դերի և Հայաստանի ապագա ազգային ընտրանիների՝ աշխարհամակարգի ընկալման որակի մասին:

Հայաստանի խնդիրներն ուսանողության ընկալմամբ

Այդ ընկալումները գրեթե չեն տարբերվում նշված խնդիրների հանդեպ ողջ հասարակության ունեցած պատկերացումներից: Առաջին տեղում գործազրկությունն է (նշել է հարցվողների 25%-ը, տրվել է բաց հարց՝ 3 պատասխանի հնարավորությամբ), երկրորդ տեղում աղքատությունն է (20%), երրորդում՝ երկրի անվտանգությունը (20%), չորրորդում՝ երկրի տնտեսական թերզարգացածությունը (20%), հինգերորդում՝ տնտեսական միգրացիան և արտագաղթը (19%):

Այսինքն՝ Հայաստանի խնդիրներն ուսանողների պատկերացմամբ՝ *ծայրամասային կապիտալիզմի երկրին բնորոշ խնդիրների «դասական» հավաքածու են ներկայացնում:*

Ուսանողների դիրքորոշումներն աղքատության, անհավասարության և ընտրանիների արտոնյալության խնդիրների հանդեպ. Ուսանողներին տրվել է հարց. «Անհավասարության և աղքատության մասին հետևյալ կարծիքներից *n* ին է ավելի մոտ Ձեր կարծիքին»: Ուսանողներին տրամադրվել է պատասխանների 3 տարբերակ.

«Յուրաքանչյուր ոք ինքն է իր բարեկեցության պատասխանատուն» տարբերակը, որը մոտարկում է լիբերալ աշխարհընկալումը, նշել է հարցվողների 59%-ը:

«Աղքատության և անհավասարության հիմնական պատճառն անարդար երկիրն է» տարբերակը նշել է ուսանողների 28%-ը: Այս դիրքորոշումը, եթե հայեցակարգային բնորոշում տանք, կարող է վերածվել սոցիալական տեսության՝ ուղղված հասարակության բարոյական (այդ թվում և սոցիալիստական) վերափոխմանը:

«Եթե երկիրը հարստանա, այս հարցը կլուծվի» տարբերակը նշել է ուսանողների 12%-ը: Եթե հայեցակարգային բնորոշում տանք այս դիրքորոշմանը, ապա այն մոտարկում է պահպանողական գաղափարախոսության որևէ տարատեսակ:


Դժվարացել է պատասխանել հարցվողների 1%-ը:

Իսկ *«Ի՞նչ էք կարծում, բնակչա՞ն է, արդյոք, որ հարուստներն ու իշխանությունն ունեցողներն անպատիժ խախտում են օրենքը, որովհետև այդպես կվարվեր հարստացած կամ իշխանության եկած յուրաքանչյուր ոք»* հարցին «ոչ» է պատասխանել հարցվողների 67, «այո»՝ 33%-ը:

Ակնհայտ է, որ այս հարցերի պատասխանների համադրումը ուսանողությունը տարաբաժանում է չորս հատվածի: Մեզ համար, առաջին հերթին, կարևոր են դրանցից երկուսը: Առաջինը՝ ուսանողների այն խմբի ծավալը, ովքեր կարծում են, որ «յուրաքանչյուրն ինքն է պատասխանատու իր բարեկեցության համար» և, միևնույն ժամանակ, «բնական չէ, որ հարուստներն ու իշխանավորներն անպատիժ խախտում են օրենքը», կարելի է ընդունել որպես ուսանողության շրջանում «դասական» լիբերալ-դեմոկրատական դիրքորոշման (բայց ոչ ձևավորված գաղափարախոսության) ծավալի մոտավոր ընդհանուր գնահատական: Պարզվել է, որ նման դիրքորոշում ունի հարցման ենթարկված ուսանողների 40%-ը: Երկրորդը՝ ուսանողների այն խմբի ծավալը, ովքեր կարծում են, որ «աղքատության ու անհավասարության հիմնական պատճառն անարդար երկիրն է» և, միևնույն ժամանակ, «բնական չէ, որ հարուստներն ու իշխանավորներն անպատիժ խախտում են օրենքը», կարելի է ենթադրաբար ընդունել որպես դեմոկրատական սոցիալիզմի դիրքորոշման կրողների մոտավոր ծավալ: Այս կարծիքին է ուսանողների 18%-ը:

Հայեցակարգային հասարակագիտական ինչ գիտելիք ունեն ուսանողները

Ուսանողներին տրվել է հետևյալ հարցը. «Ի՞նչ հասարակարգ է այսօր Հայաստանում»: Ուսանողներին պատասխաններ չեն հուշվել: Հարցին ճիշտ է պատասխանել 7%-ը (ճիշտ պատասխանն է՝ «կապիտալիստական», պայմանականորեն ճիշտ են համարվել «շուկայական», «լիբերալ» պատասխանները), հասարակարգի սխալ անուն է նշել 7%-ը; հասարակարգի փոխարեն նշել է որևէ քաղաքական ոեժիմ կամ քաղաքական համակարգ՝ 22%; միանգամայն անհամարժեք պատասխաններ է տվել 7%-ը և դժվարացել է պատասխանել 57%-ը:



Այն, որ հարցվողների գրեթե 65%-ը չգիտի այս հարցի պատասխանը կամ համարժեք պատասխան չի տվել՝ արտապատկերում է կրթական համակարգում հասարակական գիտելիքի փոխանցման մակարդակը:

Եթե ուսանողը չգիտի, որ այսօր Հայաստանում (և գրեթե ամբողջ աշխարհում) կապիտալիզմ է, ապա այն բանի հավանականությունը, որ նա հայեցակարգային և համակարգային գիտելիք ունի այսօրվա աշխարհի մասին, զրոյական է, թեև ուսանողը կարող է իմանալ կամ «կանխազգալ» աշխարհամակարգի դրությունը: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ ուսանողը գիտի, որ այսօր Հայաստանում կապիտալիստական հասարակարգ է, ապա դրանից չի հետևում, որ նա համարժեք, բավարար և համակարգված գիտելիք ունի այդ հասարակարգի վերաբերյալ: *Այսինքն՝ այն 7%-ը, որը գիտի, որ*

Հայաստանում այսօր կապիտալիզմ է, ուսանողների թվաքանակի ընդամենը վերին շեմն է, որը, հնարավոր է, որ համակարգային գիտելիք ունի այն հասարակարգի վերաբերյալ, որն առկա է Հայաստանում:

Հասարակարգի մասին հարցին սխալ պատասխանած 7% ուսանողները, որպես կանոն, նշել են «Ֆեռդալիզմը»: Այս պատասխանը, ըստ էության, *կապիտալիստական աշխարհամակարգի ծայրամասային երկրում առօրյա գիտակցության մեջ առկա հասարակական հարաբերությունների արտացոլումն է*, այսինքն՝ դրանք այն ուսանողներն են, ովքեր չունեն գիտական հայեցակարգային հասարակագիտական գիտելիքներ:


Բարձրագույն դպրոցում հասարակագիտության դասավանդման բնույթի կարևոր ինդիկատոր է այն, որ ուսանողների 22%-ը *հասարակարգի փոխարեն նշել է քաղաքական համակարգ կամ քաղաքական ռեժիմ: Դա նշանակում է, որ բարձրագույն դպրոցում հասարակական գիտությունների դասավանդման մեջ հստակ չեն սահմանազատվում հասկացությունները:*

Ելնելով այն բանից, որ հասարակական գիտությունների՝ սոցիոլոգիայի, քաղաքագիտության և էկոնոմիկայի դասագրքերը հիմնականում կամ արևմտյան դասագրքերի թարգմանություններ են, կամ դրանց «ազատ վերաշարադրանք», ապա կարելի է ենթադրել, որ *գիտելիքների նման ադալադումը հասարակական գիտությունների ուսուցման գլոբալ խնդիր է:*

Հասարակագիտական գիտելիքի ձևավորման արդյունավետությունը բարձրագույն դպրոցում

«Հայաստանում տիրող հասարակարգի ճիշտ անվանումն իմացող ուսանողների թվաքանակը» ինդիկատորի բաշխումն ըստ ուսման տարիների (տե՛ս *Գծապատկեր 2*) ցույց է տալիս, որ բակալավրիատի 1-ին կուրսում ճիշտ պատասխանը գիտեր ուսանողների 4%-ը, իսկ ուսման վերջում՝ մագիստրատուրայի 2-րդ կուրսում, 9%-ը, այսինքն՝ դիմորդները դպրոցից բուհական համակարգ են մտնում՝ հասարակարգի անվանման մասին դիտարկվող գիտելիքի 4%-անոց մակարդակով և բուհական համակարգից դուրս են գալիս 9%-անոց մակարդակով: Ասել է թե՛ *բուհական համակարգի արդյունավետությունը հասարակագիտական գիտելիքի այդ կոնկրետ տարրի փոխանցման հարցում 5% է:*

Բուհերում ըստ հասարակագիտական մասնագիտությունների ճիշտ պատասխանն իմացողների թիվը կազմել է 12%:




***Հայաստանի կուսակցական համակարգում բուհական կադրերի
ընդգրկման արդյունավետությունը***

Հայտնի է, որ այսօր քաղաքական ընտրանիները սովորաբար ընդգրկվում են կուսակցական համակարգից: Հետազոտությունը ցույց է տվել, որ եթե ուսանողների շրջանում Հայաստանում այսօրվա հասարակարգի մասին ճիշտ պատասխանն իմացողների թիվը կազմում է 7%, ապա հասարակական որևէ շարժման մասնակցող ուսանողների շրջանում է 6%, հասարակական կազմակերպությունների անդամ ուսանողների շրջանում՝ 5%, իսկ որևէ կուսակցության անդամ հանդիսացող ուսանողների շրջանում՝ ընդամենը 1%: Ստացվում է, որ Հայաստանի կուսակցական համակարգն իր շարքերն է վերցնում կրթական համակարգի «խոտանը»:

Հաշվի առնելով, որ Հայաստանն անցնելու է կառավարման խորհրդարանական համակարգի, պետք է ենթադրել, որ Հայաստանի քաղաքական համակարգում հարատևելու և զարգանալու են գիտելիքի հետ կապված խնդիրները:



Գծապատկեր 3. Հայաստանում հասարակարգի մասին ճիշտ պատասխանների քառակնա կախիվ հասարակական քաղաքական շերտերում



Ուսանողների քաղաքական մասնակցության և քաղաքական գործընթացների առանձնահատկությունները Հայաստանում

Հայաստանի կուսակցական համակարգի հանդեպ ուսանողների դիրքորոշումներն են արտահայտում հետևյալ տվյալները: Ուսանողների 27%-ը համարում է, որ «Հայաստանում կա կուսակցություն, որն արտահայտում է իրենց նման մարդկանց շահերը», 54%-ը համարում է, որ «Չկա այդպիսի կուսակցություն», հարցին դժվարացել է պատասխանել ուսանողների 19%-ը:

Մյուս կողմից, որևէ կուսակցության անդամ է ուսանողների 7%-ը (ինչն ավելի ցածր է, քան հանրապետությունում), հասարակական կազմակերպության անդամ է 10%-ը (ինչը եռակի ավելի բարձր է, քան հանրապետական ցուցանիշը), որևէ հասարակական շարժմանն աջակցում է 30%-ը (ինչը եռակի ավելին է, քան հանրապետական ցուցանիշը):



Եզրակացություններ

Ի՞նչ եզրակացություններ կարելի է կատարել ստացված արդյունքների հիման վրա:

Նախ՝ հանրապետությունում քաղաքական ակտիվությունն ավելի ու ավելի է տեղափոխվելու քաղաքացիական ոլորտ: Եվ քանի որ քաղաքացիական շարժումները և դրանց ղեկավարները, որպես կանոն, չունեն ամբողջական և համակարգային գաղափարախոսություններ և ծրագրեր, հետևաբար, քանի որ ուսանողության շրջանում հայեցակարգային և համակարգված հասարակական գիտելիքն ու աշխարհայացքը ձևավորված չեն, *կարճաժամկետ հեռանկարում* ուսանողությունը ենթակա է լինելու արտաքին տեղեկատվական մանիպուլյացիաների, ինչը կրիտիկական իրավիճակներում կարող է դառնալ ներքաղաքական իրադրության ապակայունացման գործոն:

Եթե բարձրագույն ուսումնական համակարգի «խոտանը» կարիերային աճի համար անցնի կուսակցական համակարգ, ապա ինչպես Հայաստանի կուսակցական համակարգի, այնպես էլ պետական կառավարման որակը հետագայում կվատթարանա:

Քանի որ գործընթացը տեղի է ունենում «բոլորի աչքի առջև», ապա կաճի խզումը հասարակության կրթյալ շերտերի և կուսակցական ու պետական կառավարման համակարգերի միջև:

Երկարաժամկետ հեռանկարում՝ 15-20 տարի հետո, Հայաստանի քաղաքական ընտրանու հասարակագիտական գիտելիքի որակն է՛լ ավելի

կիջնի և միջին հաշվով կլինի անհամեմատ ավելի ցածր, քան բարձրագույն կրթությամբ անձանց շերտում, ինչը կդառնա Հայաստանի զարգացման ամենալուրջ խոչընդոտներից մեկը:

Ակնհայտ է, որ անհրաժեշտ է բուհական համակարգում լրջորեն զբաղվել ուսանողության հասարակագիտական կրթությամբ՝ ինչպես հասարակական, այնպես էլ տեխնիկական և բնագիտական հոսքերում: Չի բացառվում, որ տեխնիկական և բնագիտական հոսքերում դա շատ ավելի կարևոր խնդիր է:

Դրա համար անհրաժեշտ է մշակել և համալսարանների ուսումնական ծրագրերում ներդնել ինտեգրալ հասարակագիտական դասընթաց՝ հիմնված արդի մակրոսոցիոլոգիական տեսությունների, մասնավորապես *աշխարհամակարգային վերլուծության* վրա:

Նոր դասընթացի նպատակն է՝ *ուսանողության մեջ ձևավորել համակարգային և հայեցակարգային գիտական աշխարհայացք:*

Դա անհրաժեշտ է, որպեսզի ազգային ընտրանիներն ի վիճակի լինեն ընկալել Հայաստանի պատմությունը, Հայաստանի խնդիրները, դրանց ծագումնաբանությունը, դինամիկան և լուծման ուղիները՝ համաշխարհային պատմության, գլոբալ և տարածաշրջանային կառույցների, խնդիրների և գործընթացների համատեքստում:

Նոյեմբեր, 2015թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ
(ԸՍՏ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)**

Մամվել Մանուկյան

Ամփոփագիր

Հոդվածում սոցիոլոգիական հետազոտության տվյալների հիման վրա դիտարկվում է Երևանի համալսարաններում հասարակական գիտությունների դասավանդման որակի հարցը, գնահատվում է հասարակագիտական գիտելիքների փոխանցման արդյունավետությունն ուսման ընթացքում: Քննարկվում է աշխարհամակարգի մասին ուսանողների հայեցակարգային և համակարգային գիտելիքի առկայության հարցը: Գնահատվում են ուսանողների հասարակական ակտիվությունը, դրա բնույ-

թը, ինչպես նաև ուսանողական շարժումների գաղափարախոսական մանիպուլյացիայի հնարավորությունները: Դիտարկվում են Հայաստանի կուսակցական համակարգում ուսանողական միջավայրից անդամներ ներգրավելու արդյունավետությունը և որակը, հնարավոր հետևանքները Հայաստանի ապագա ընտրանիների աշխարհընկալման որակի վրա:

МОЛОДЕЖЬ АРМЕНИИ И ПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ: ПО МАТЕРИАЛАМ СОЦИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

Самвел Манукян

Резюме

В статье на основе данных социологических исследований рассматривается вопрос о качестве преподавания общественных наук в ереванских университетах и оценивается эффективность передачи обществоведческих знаний в течение учебы. Обсуждается вопрос наличия у студентов концептуального и системного знания о миросистеме. Оценивается общественная активность студентов, ее характер, а также возможности идеологической манипуляции студенческими движениями. Рассматривается эффективность и качество рекрутизации партийной системой Армении своих членов из студенческой среды и ее возможные последствия на качество мировосприятия будущих элит Армении.

THE ARMENIAN YOUTH AND THE POLITICAL PROCESSES IN THE LIGHT OF SOCIOLOGICAL STUDIES

Samvel Manukyan

Resume

The article examines the issue of teaching quality of social sciences in the universities of Yerevan based on sociological studies data, and evaluates effectiveness of social sciences knowledge transfer during the learning. The issue of the students' conceptual and systemic knowledge on the world system is discussed. The students' public activity, its characteristics and possibilities of ideological manipulation of student movements are assessed. The efficiency and quality of political parties' recruitment among students and its impact on world-view of future elites of Armenia is reviewed.

**ԷԹՆԻԿ ԼՈՒՐԴՆԵՐ ԱՄՆ-ՈՒՄ.
ԷԹՆԻԿ ԽՄԲԵՐԻ ՇԱՀԵՐԸ ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՕՐԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ**

*Ռոբերտ Ղևոնդյան**

Բանալի բառեր՝ էթնիկ փոքրամասնություն, էթնիկ լոբբինգ, լոբբիստ, լոբբիի գործիքարան, լոբբիստական կազմակերպություն:

Ներածություն

Բազմէթնիկ հասարակություններում էթնիկ խմբերի միջև փոխհարաբերությունները կանխորոշում են զարգացման վեկտորի ուղղվածությունը: Որքան մեծ է էթնիկ խմբի ինքնակազմակերպման մակարդակը, այնքան ավելի մեծ չափով են նրա շահերը ներառվում հասարակության ընդհանուր զարգացման տրամաբանությունում: Այս առումով էթնիկ լոբբինգի ազդեցությունը կարող է հանգեցնել ընդհուպ պետության քաղաքական գծի փոփոխության:

Լոբբինգի հիմնական նպատակն է «պետական իշխանության կամ նրա ներկայացուցիչների վրա ազդեցության միջոցով անհրաժեշտ որոշումների ընդունումը կամ մերժումը» [1, c. 112]: Լոբբինգի միջոցով հասարակությունը հնարավորություն է ստանում իշխանության վերահսկման ընտրազանգվածային-կուսակցական համակարգը համալրել նաև գործառնական գործառույթներով՝ այսպիսով ավելի առարկայական դարձնելով պետական իշխանության գործառույթներում սեփական մասնակցության անհատի սահմանադրական իրավունքը [1, c. 113]: Էթնիկ լոբբինգը հանգում է որոշումների նախապատրաստման, կայացման և իրացման գործընթացներում էթնիկ խմբի մոտեցումների ներառման նպատակով պատասխանատու մարմինների հետ փոխհարաբերությունների ձևավորմանն ու համակարգված ազդեցությանը:

Աշխարհի շատ երկրներում օրենքով կանոնակարգվում է լոբբիստական գործունեությունը, որը համարվում է ժողովրդավարական հասարակությունների քաղաքական կենսակարգի բաղկացուցիչ:

* Հայ-ուսական (սլավոնական) համալսարանի հայցորդ:

Լոբբինգն ԱՄՆ-ում

ԱՄՆ կառավարման համակարգի ապակենտրոնացվածությունը խթանում է շահային տարբեր խմբերին՝ գտնելու քաղաքական դաշտի վրա ազդեցության միջոցներ: Լոբբիստական խմբերն ընտրված ներկայացուցիչների, գործադիր իշխանության անդամների վրա ազդեցության տարբեր լծակներով (ներդրումներ, ընտրարշավին մասնակցություն, հասարակական կարծիքի ձևավորում և այլն¹) կարողանում են ձևավորել սեփական շահերին համահունչ քաղաքական օրակարգ:

ԱՄՆ օրենսդրական դաշտում հստակ ամրագրված են լոբբիստական գործունեության պահանջները, որոնք հանգում են հետևյալ 3 կանոններին.

1. օրենքով սահմանված կարգով պետական գրանցում, որն ունի միայն տեղեկացման բնույթ, այսինքն՝ մերժման որևէ իրավասություն պետական մարմինը չունի,
2. բաց և թափանցիկ գործունեություն,
3. պարբերաբար մանրամասն հաշվետվությունների ներկայացում [2, c. 12-13]:

Գործելով օրենսդրական դաշտում՝ լոբբիստական կազմակերպություններն օրինական ճանապարհով ֆինանսավորվում և կարողանում են այդ միջոցներն ուղղել սեփական գործառույթների իրականացմանը: Սակայն խիստ կանոնները հնարավորություն չեն տալիս անմիջապես ֆինանսական միջոցներ տրամադրել շահագրգիռ պետական պաշտոնյային՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով [2, c. 13]: Դրա փոխարեն հիմնականում կիրառվում են պետական պաշտոնյայի ընտրական գործընթացի ֆինանսավորումը, խորհրդատվական աշխատանքների իրականացումը և այլն՝ որպես ֆինանսական օժանդակության օրինական տարբերակներ [2, c. 16]:

Լոբբինգի հայրենիք համարվող ԱՄՆ-ում էթնիկ խմբերը ևս օրենքով հնարավորություն ունեն ներկայացնել և պաշտպանել սեփական շահերը. «Էթնիկ խմբերն իրավունք ունեն արտահայտվել և ունեն սեփական մոտեցումներ ԱՄՆ ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ» [3, p. 12]: Բազմէթնիկ հասարակություն ունեցող ԱՄՆ-ում այս հնարավորություն-

¹ Mearsheimer J., Walt S., The Israyel lobby and US foreign policy, <http://www.lrb.co.uk/v28/n06/john-mearsheimer/the-israel-lobby>

նից օգտվում են տարբեր էթնիկ խմբեր, որոնք ձևավորում են իրենց ներկայացուցչական մարմինները և դրանց միջոցով լոբբինգային գործունեություն իրականացնում: Հայկական, հրեական, հունական, իռլանդական և այլ էթնիկ փոքրամասնություններն ԱՄՆ-ում հայտնի են իրենց լոբբինգային գործունեությամբ:

Էթնիկ խմբերի լոբբիստական գործունեությունը հիմնված է մի շարք ռեսուրսների վրա, որոնցից կարևոր են կազմակերպչականը, ֆինանսականը և ընտրագանգվածայինը: Ընտրությունների ժամանակ այս կամ այն թեկնածուի պաշտպանությունն էթնիկ խմբի լոբբիստական ամենատարածված գործիքն է: Պետք է նշել, որ դաշնային մակարդակում ընտրագանգվածի սակավությունը չի կանխորոշում տվյալ էթնիկ խմբի շահերի արժարժման անհնարինությունը, քանի որ, նախ, որևէ լոկալ հատվածում զգալի քանակությամբ կազմակերպված խմբի անդամները կարող են ազդել կոնգրեսի ընտրություններում կողմերի հարաբերակցության վրա, իսկ մյուս կողմից էլ որևէ հատվածում առաջադրվող թեկնածուն ինքն է նախաձեռնություն հանդես բերում աջակցելու իր ընտրագանգվածի շահերի բարձրաձայնմանն ու պաշտպանությանը [3, p. 21]:

Հրեական լոբբի: Ուշագրավ է հատկապես ԱՄՆ հրեական համայնքի լոբբիստական գործունեությունը: Հարկ է նշել, որ առաջին հերթին սեփական ինքնության արդիականացման գիտականության ապահովման կարևորագույն կենտրոն է ԱՄՆ Վաշինգտոն նահանգում գործող հոլոքոստի թանգարան-ինստիտուտը, որի մասնաճյուղերը սփռված են ողջ երկրով մեկ, ինչպես նաև Կանադայում¹: Այն հրեագիտության ուսումնասիրման կրթօջախ է, որտեղ էթնիկ հրեաներն առերեսվում են սեփական ինքնության հետ և ստանում սերնդեսերունդ փոխանցվող հրեական արժեհամակարգի սաղմերը: Հրեաները հասկանում են, որ ուժեղ էթնիկ համայնքի գոյությունը նպաստում է հայրենիքի շահերի պաշտպանությանը տվյալ երկրում: Այդ պատճառով Իսրայելն իր արտաքին քաղաքականությունում շեշտադրում է հրեական համայնքների դիրքերի ամրապնդման կարևորությունը. «ԱՄՆ-ում ազդեցիկ լոբբիի առկայությունն ԱՄՆ արտաքին քաղաքականության օրակարգում Իսրայելի ռազմավարական անվտանգային շահերի առաջնորդման կարևոր գործիք է: Իր հերթին Իսրայելի պետության գոյությունն էական դերակատա-

¹ Holocaust centers, museums and resources <http://www.remember-us.org/pdfs/holocaust-centers.pdf>

րում ունի հրեական համայնքի ազգային ինքնագիտակցության պահպանման և լոբբիի վերարտադրության հաջող կազմակերպման համար» [4, էջ 138]:

Մյուս կողմից, հրեաների երիտասարդ սերնդի կրթության նպատակով մեծ ծավալներ է ստացել համալսարանական կրթաթոշակների համակարգված ներդրումը, ինչի արդյունքում «...ապահովվում է ԱՄՆ քաղաքականության վրա ազդեցության բոլոր ոլորտներում հրեության ներկայացուցչությունը վերարտադրելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ողջ սպեկտրը» [5, էջ 18-19]: Կրթական ծրագրերին լուրջ ուշադրություն դարձնելով՝ հրեաներն ապահովում են ապագայի աշխարհում մրցունակ սերնդի պատրաստման անընդհատությունը:

Ակնհայտ է, որ համակարգելով և արդիականացնելով սեփական արժե-համակարգը ԱՄՆ-ում՝ հրեաները ձևավորում և գործարկում են տարբեր կազմակերպություններ, որոնք լոբբինգի միջոցով ներկայացնում և պաշտպանում են ինչպես տարբեր հատվածների, այնպես էլ ընդհանրապես հրեության շահերն ԱՄՆ ներքին ու արտաքին քաղաքականության բոլոր դրսևորումներում:

ԱՄՆ-ում գործում են մի շարք հրեական լոբբիստական կազմակերպություններ, որոնցից է ԱՄՆ սիոնիստական շարժումը, որն ընդգրկում է 14 սիոնիստական կազմակերպություն [6, p. 22]: Այն պաշտպանում և համակարգում է սիոնիստական տեսակետը ԱՄՆ հասարակությունում:

«Հասարակության հետ կապերի ամերիկա-իսրայելական կոմիտեն» ստեղծվել է 1950թ.: Այն ներկայացնում է հրեության շահերը Վաշինգտոնում՝ ԱՄՆ-Իսրայել փոխհարաբերությունների հետ կապված հարցերում [6, p. 24]:

Ամենաազդեցիկ հրեական լոբբիստական կազմակերպությունն ԱՄՆ-ում Ամերիկայի հրեական համագումարն է, որը ստեղծվել է 1918թ., իսկ արդեն 1936-ից հանդիսանում է Համաշխարհային հրեական համագումարի մի մասը¹: Այս կազմակերպության լոբբիստական ջանքերի շնորհիվ ԱՄՆ սենատը և ներկայացուցիչների պալատը մեկ դարից ավելի նպաստում են ընդամենը երկրի բնակչության 2%-ը կազմող հրեական համայնքի շահերից բխող որոշումների ընդունմանը [7, p. 695-696]:

Մի շարք կազմակերպությունների գոյությունը չի խոչընդոտում հրեաների համար կարևոր խնդիրների վերաբերյալ հավաքական մոտեցումների

¹ Американский еврейский конгресс, <http://www.eleven.co.il/article/10196>

ձևավորմանն ու ընդհանուր տեսակետի ներկայացմանը: Միասնականության ապահովման նպատակով ձևավորվել և գործում է հրեական ներկայացուցչական բարձրագույն մարմին՝ Ամերիկյան գլխավոր հրեական կազմակերպությունների նախագահների ժողով. «Լոբբիի ներսում ձևավորելով մրցակցային միջավայր և տարբեր տեսակետների ազատ քննարկում՝ «նախագահների ժողովի» քննարկմանն են ներկայացվում առավել կարևոր հիմնախնդիրները, որոնց լուծմանն է ուղղվում հրեական լոբբիի ողջ ներուժը» [4, էջ 126]: Բոլոր մանր ու մեծ կազմակերպությունների ջանքերի միջոցով հրեական հավաքական մոտեցումները հաճախ վճռական նշանակություն են ունենում ԱՄՆ արտաքին և ներքին քաղաքական որոշումների կայացման գործընթացում:

ԱՄՆ հրեական լոբբիի գործիքարանը հիմնականում բաղկացած է զանգվածային լրատվամիջոցներից, «մտքի կենտրոններից», որոնք ազդեցություն են գործում տեղական քաղաքականության և հանրային փորձագիտական քննարկումների վրա, կարգախոս-կարծրատիպերի ձևավորումից և այլն [4, էջ 126-131]:

Հրեաներն ԱՄՆ-ում կենտրոնացած են որոշակի ընտրատարածքներում, ինչի միջոցով ազդեցություն են գործում տվյալ տարածքում ընտրական գործընթացի վրա, մյուս կողմից՝ այդպիսի կենտրոնացված հատվածներ առկա են ողջ երկրում, ինչը տեղական ընտրություններում ավելի մեծ թվով աջակիցների առաջխաղացման, այնուհետև՝ սեփական շահերի ներկայացման հնարավորություն է ստեղծում [3, p. 23]:

Իռլանդական լոբբի: Իռլանդական լոբբին նույնպես ԱՄՆ-ում բավական ակտիվ է: Իռլանդացիները, 18-20-րդ դարերում գաղթելով ԱՄՆ, կաթոլիկ եկեղեցուն պատկանելության շնորհիվ հեշտությամբ ինտեգրվել են և ընդունվում են որպես հասարակության հիմնադիր էթնիկ խմբերից մեկը: Եկեղեցին նաև կապող օղակ է ԱՄՆ իռլանդացիների միջև: Նրանք ԱՄՆ-ում ստեղծել են մի շարք լոբբիատական կազմակերպություններ, որոնցից են «Թամանի հոլ» քաղաքական ընկերակցությունը, Հիբերնցիների հիմնավորը ուխտը և այլն¹: Այս կազմակերպությունների գործունեության շնորհիվ ԱՄՆ քաղաքա-

¹ Մայիլյան Մ., Սփյուռքի դերը հյուսիսիռլանդական դիմակայությունում և հակամարտության փոխակերպման մեջ նրա ներգրավման մեխանիզմները, <http://theanalyticon.com/?p=5312>

կան դաշտում որոշումների կայացման գործընթացում իռլանդական տեսակետը կարևոր նշանակություն է ստանում:

Հունական լոբբի: Հունական լոբբին ևս կարևոր դերակատարություն ունի ԱՄՆ-ում: Այն հատկապես ակտիվացել է 1974թ.¹ Կիպրոս թուրքերի ներխուժման ժամանակ: Հունական լոբբիի կարևոր ձեռքբերումն է համարվում ԱՄՆ կառավարության կողմից Թուրքիային տրվող ռազմական տեխնիկայի կասեցումը: 1974թ. հիմնադրվել է Ամերիկայի հունական ինստիտուտի քաղաքական գործողությունների կոմիտեն, որը միակ գրանցված հունական լոբբիստական կազմակերպությունն է ԱՄՆ-ում¹: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ում գործում են նաև մի շարք այլ հունական կազմակերպություններ (Ամերիկայի միացյալ հունական կոնգրես, Կիպրոսի արդարադատության միջազգային կոորդինացիոն կոմիտե, Ամերիկայի հունական ուղղափառ արքեպիսկոպոսարան և այլն), որոնք լոբբիստական գործունեություն են ծավալում ի պաշտպանություն հունամետ քաղաքականության և հատկապես Կիպրոսի խնդրում ԱՄՆ հունամետ դիրքորոշման:

Թուրք-ադրբեջանական լոբբի: Թուրք-ադրբեջանական լոբբին համեմատաբար նոր ձևավորվող կառույց է ողջ աշխարհում: Այն առաջանում և զարգանում է՝ հիմքում ունենալով հայկական և հունական լոբբինգի դեմ պայքարի անհրաժեշտությունը: Սակայն զարգացումն ընթանում է նաև այլ ուղղություններով՝ քրդական կամ իրաքյան հիմնահարցեր, Կիպրոսյան կարգավորում, Իրանի ադրբեջանական փոքրամասնությունների պաշտպանություն և այլն [8, էջ 5]: Ընդհանրապես, ԱՄՆ-ում գործում է մոտ 180 թուրքական կազմակերպություն, որոնցից հիշատակության են արժանի ԱՄՆ թուրքական համայնքը, որը ստեղծվել է 1949թ., *ATAA*-ն (թուրք-ամերիկյան կազմակերպությունների ասամբլեան) և *FTAA*-ն (թուրք-ամերիկյան կազմակերպությունների դաշնությունը), Թուրքական հետազոտությունների ինստիտուտը, Թուրք-ամերիկյան իսլամական դաշինքը և այլն [8, էջ 19-26]: Թուրքիան ինտենսիվ կերպով գործակցում է այս կազմակերպությունների հետ և փորձում է դրանց միջոցով սեփական շահերը ներառել ԱՄՆ քաղաքական օրակարգում: Թուրքական լոբբիի ջանքերի շնորհիվ ԱՄՆ դաշնային և

¹ *Grammenos A.*, Diasporas and foreign policy: the Greek Americans

<http://www.lse.ac.uk/europeanInstitute/research/hellenicObservatory/CMS%20pdf/Events/2011-5th%20PhD%20Symposium/Grammenos.pdf>

տեղական տարբեր մարմիններում կասեցվել է հայամետ և հունամետ շատ օրինագծերի ընդունումը: Այս նպատակների իրականացման համար Թուրքիան նաև վարձում է ԱՄՆ մասնավոր լոբբիստական կազմակերպություններ [8, էջ 34], ինչը նույնպես տեղավորվում է «Էթնիկ լոբբիզմ» հասկացության շրջանակներում:

Ադրբեջանական ամենախիստ լոբբիստական կառույցը ԱՄՆ ադրբեջանական համայնքն է, որը հիմնադրվել է 1957թ., բացի այդ, ԱՄՆ-ում գործում է ևս 15 ադրբեջանական կազմակերպություն [8, էջ 138]: Այս կազմակերպությունների հիմնական նպատակը ԱՄՆ քաղաքական շրջանակներում հայկական լոբբիին հակադրելն ու ադրբեջանամետ դիրքորոշումները հաստատելն է: Ադրբեջանական լոբբիի գլխավոր հաջողությունը երկրի նախագահին ամեն տարի 1992թ. ընդունված «Ազատության աջակցման ակտի» 907-րդ ուղղման գործածումը 1 տարով արգելափակելու հնարավորություն տալու կոնգրեսի որոշումն է: Ընդ որում՝ այստեղ մեծ դեր են խաղացել Ադրբեջանի օգտին էներգետիկայի ոլորտում ԱՄՆ-ում հայտնի ընկերությունները և վարձված պրոֆեսիոնալ լոբբիստական կազմակերպությունները [9, c. 20]:

Թուրքական և ադրբեջանական լոբբիստական կազմակերպություններն ԱՄՆ-ում հաճախ համակարգում են սեփական գործողությունները՝ հաշվի առնելով նպատակների շաղկապվածությունը: Հարկ է նշել, որ կոնգրեսի թուրքական և ադրբեջանական հանձնախմբերի անդամների զգալի մասը նույնն է [8, էջ 218-219]. թուրքական 103 և ադրբեջանական 41 անդամներից 26-ը նույն անուններն են [8, էջ 241-245]: Երկու երկրների տարբեր լոբբիստական կազմակերպություններում ևս հաճախ հանդիպում են նույն մարդկանց անունները:

Հայկական լոբբի: ԱՄՆ-ում գործում են մի շարք հայկական լոբբիստական կազմակերպություններ, սակայն հայկական համայնքի մոտեցումները հիմնականում համակարգում և ներկայացնում են ԱՄՆ հայկական համագումարը (AAA) և ԱՄՆ հայ դատի հանձնախումբը կամ Հայ ազգային կոմիտեն (ANCA): Այս կառույցները հայկական լոբբիի առավել հաջողված հատվածն են և «...ներկայացնում են Հայության և Հայաստանի շահերն ամերիկյան պաշտոնական ատյաններում» [10, էջ 9]: ԱՄՆ հայկական

համագումարը ստեղծվել է 1972թ.¹ և ներգրավված է ԱՄՆ ներկայացուցիչների պալատի ու սենատի՝ հայերին վերաբերող աշխատանքներում, կարողանում է ազդեցություն գործել համաձայն հայության շահերի, անգամ այլ երկրներում հայկական համայնքների խնդիրներն է արծարծում: Ֆինանսապես այն կախված է մի քանի մեծահարուստ անհատներից, ովքեր որոշումների կայացման հարցում գլխավոր դերակատարում ունեն [11, էջ 118]: Հայ ազգային կոմիտեն առավել հին կառույց է (1918), բացի այդ, առավել համընդգրկուն կարծիքի ներկայացման հնարավորություններ ունի: Այն ֆինանսավորվում է «...Անթիլիասի թեմին պատկանող գրեթե բոլոր ծխականների մասնակցությամբ» [11, էջ 119]: Հայ ազգային կոմիտեն համագործակցում է այլ երկրներում Հայ դատի հանձնախմբերի հետ և ներկայացնում է հայության մոտեցումները ԱՄՆ պետական քաղաքականության տարբեր հարցերի նկատմամբ, ինչպես նաև տարբեր մակարդակի ընտրական գործընթացներում [10, էջ 129-131]: Ընտրական գործընթացներում հայության մասնակցությունը ԱՄՆ հայկական Սփյուռքի ԱՄՆ քաղաքականության վրա ազդեցություն գործելու հիմնական գործիքն է: Տարածական անհավասար բաշխվածության հետևանքով հաճախ հայության դիրքորոշումը վճռական ազդեցություն է ունենում տարբեր մակարդակի ընտրությունների ելքի առումով. «որոշ ընտրատարածքներում հայերը կազմում են հավանական ընտրողների մոտ 10%-ը, գուցե ավելին: Նրանք ունեն նաև տեղական հեռուստաալիքներ, ռադիոկայաններ և լրագրեր, որոնք կարող են օգտագործել ընտրողներին համախմբելու համար» [12, էջ 163]:

ԱՄՆ-ում գործող մի շարք այլ հայկական կառույցներ նույնպես որոշակի ներուժ ունեն քաղաքական օրակարգի մշակման գործընթացում լոբբինգի իրականացման համար (Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողովը, Հայկական ազգային կոմիտե քաղաքական գործողությունների հանձնաժողովը, *Office of the Nagorno-Karabakh Republic in the USA* արցախյան կազմակերպությունը և այլն):

ԱՄՆ հայկական կազմակերպությունների հավաքական ջանքերի արդյունավետության լավագույն օրինակը 1995թ. ԱՄՆ կոնգրեսում օրենսդիրների հայկական շահերը պաշտպանող, ոչ պաշտոնական, երկկուսակցական,

¹ Gregg H., *Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the United States* http://web.mit.edu/cis/www/migration/pubs/rwp/13_divided.pdf

խմբի ստեղծումն էր [11, էջ 115]: Այս օրինակը ցույց է տալիս, որ անկախ տարաձայնություններից՝ մեկ ընդհանուր նպատակի շուրջ համախմբվելը կարող է բերել ցանկալի արդյունքների: Հրեական օրինակով ԱՄՆ կազմակերպությունների աշխատանքների արդյունքներն ամփոփող ղեկավարների ներկայացուցչական մարմնի ստեղծումն այն կամուրջը կարող է լինել, որի միջոցով հայկական տարբեր կազմակերպությունները կկարողանան առանցքային հարցերի շուրջ համադրել սեփական տեսակետներն ու գործել միասնական ճակատով:

Ամփոփում

ԱՄՆ ներքին և արտաքին քաղաքական որոշումների կայացման գործընթացում նշանակալի ազդեցություն են ձեռք բերել կազմակերպված էթնիկ փոքրամասնությունները: Քաղաքական որոշումները կայացնելիս տարբեր մարմիններ և պետական համակարգի աշխատակիցներ, անձնական շահագրգռվածությունից ելնելով, հաշվի են առնում նրանց մոտեցումները և իրենց գործունեության հիմքում դիտարկում են այս կամ այն հատվածի կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ: ԱՄՆ-ում օրինակելի կարելի է համարել հրեական լոբբինգը: Այն նպատակադրման, խնդիրների արձարձման, ներկայացման և լուծման ամենաբարձր արդյունքներն է արձանագրում: Ամերիկյան գլխավոր հրեական կազմակերպությունների նախագահների ժողովն անհրաժեշտ ճկունություն է հաղորդում ԱՄՆ հրեական համայնքի աշխատանքների կոորդինացման առումով: Հայկական և հունական համայնքները ևս ԱՄՆ քաղաքական որոշումների կայացման գործընթացների վրա ազդեցության բավական ծանրակշիռ լծակներ ունեն, իսկ իռլանդական համայնքը համարվում է հասարակության առանցքային հատվածներից մեկն ու օգտվում է համապատասխան լծակներից: Միաժամանակ, փորձում են ակտիվություն դրսևորել մինչ այժմ սովորում գտնվող այնպիսի համայնքներ, ինչպիսիք են թուրքականն ու ադրբեջանականը: Վերջիններս մեծ աջակցություն են ստանում Թուրքիայից և Ադրբեջանից: Այդ համայնքներն իրենց աշխատանքները հիմնականում ուղղորդում են հայկական և հունական (ինչպես նաև կիպրոսյան, քրդական և այլ) լոբբիստական կազմակերպությունների կողմից իրենց շահերի դեմ իրականացվող գործունեության խոչընդոտմանը:

Սեպտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Доспан С.*, Лоббизм как многоаспектный феномен социально-политической системы / Вестник ПАГС, N36, 2013.
2. Лоббизм в США: Как осуществляется лоббизм в США и что можно позаимствовать для России /исл. Гр. Terra America, по заказу фонда ИСЕПИ, Москва, 2013.
3. *Dekker M. Michele*, Ethnic Lobbying and Diaspora Politics in U.S. The Case of the Pro-Palestinian Movement, Utrecht: Universiteit Utrecht, 2010.
4. *Պողոսյան Է.*, ԱՄՆ-ի հրեական լոբբիի գործիքարանը Իսրայելի ռազմավարական անվտանգային շահերի պաշտպանության համատեքստում / «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. ազգային ռազմ. հետազոտ. ինստ. «Հայկական բանակ» ռազմ. հանդեսի հավելված, 1 և 2 (13-14), 2010:
5. *Քոթանջյան Հ.*, Համաշխարհային հայության համակարգի քայքայման սպառնալիքների հաղթահարման ուղիները / «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. ազգային ռազմ. հետազոտ. ինստ. «Հայկական բանակ» ռազմ. հանդեսի հավելված, 1 և 2 (13-14), 2010:
6. *Chanes J.*, A primer on the American jewish community, NY: American jewish comittee, 2008
7. *Spingola D.*, The ruling elite. The zionist seizure of world power, Bloomington: Trafford publishing, 2012.
8. *Նահապետյան Հ.*, Թուրք-աղբրեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2010:
9. *Сучков М.*, Влияние лобби-групп на формирование внешней политики США на Южном Кавказе / Вестник МГИМО университета, N3, 2013, сс. 18-24.
10. Հայ համայնքն ԱՄՆ-ում, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2010:
11. *Եզանյան Ա.*, Հայաստանի Հանրապետության և ամերիկահայ լոբբիստական կառույցների համագործակցության ռազմավարական գնահատումներ / «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. ազգային ռազմ. հետազոտ. ինստ. «Հայկական բանակ» ռազմ. հանդեսի հավելված, 1 և 2 (13-14), 2010, էջ 111-122:
12. *Զարիֆյան Տ.*, Ամերիկահայկական լոբբին. կառուցվածքը, մեթոդները և արդյունքները / «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. ազգային ռազմ. հետազոտ. ինստ. «Հայկական բանակ» ռազմ. հանդեսի հավելված, 1 և 2 (13-14), 2010, էջ 156-197:

ԷԹՆԻԿ ԼՈՒԲԲԻՆԳՆ ԱՄՆ-ՈՒՄ. ԷԹՆԻԿ ԽՄԲԵՐԻ ՇԱՀԵՐԸ ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ

Ռորերտ Ղևոնդյան

Ամփոփագիր

ԱՄՆ քաղաքական համակարգի կառուցվածքը հնարավորություն է տալիս տարբեր խմբերի սեփական շահերը ներկայացնել ֆորմալ ձևաչափով: Ընձեռված հնարավորությունից օգտվում են նաև հասարակության մաս կազմող էթնիկ խմբերը, որոնք

ինքնակազմակերպման և/կամ հայրենի պետության կողմից աջակցության միջոցով հիմնում կամ վարձում են կազմակերպություններ: Այս կազմակերպություններն էլ իրենց հերթին լոբբինգային գործունեությամբ առաջ են քաշում ու պաշտպանում են համապատասխան խմբի և պետության շահերը: Ավանդաբար արդյունավետ են գործում հայկական, հրեական և հունական լոբբիստական կազմակերպությունները: Վերջին տարիներին ակտիվ է նաև թուրք-ադրբեջանական լոբբին:

**ЭТНИЧЕСКИЙ ЛОББИЗМ В США:
ИНТЕРЕСЫ ЭТНИЧЕСКИХ ГРУПП В ОСИ ФОРМИРОВАНИЯ
ПОЛИТИЧЕСКОЙ ПОВЕСТКИ ДНЯ США**

Роберт Гевондян

Резюме

Структура политической системы США позволяет разным группам формально отстаивать собственные интересы. Этой возможностью пользуются также этнические группы. Путем самоорганизации или помощи родной страны они создают лоббистские организации или делегируют лоббистские функции профессионалам. Эти же организации лоббируют интересы групп или стран. Традиционно эффективны армянские, еврейские и греческие организации. В последние годы активизировалось также турко-азербайджанское лобби.

**ETHNIC LOBBYING IN THE USA:
ETHNIC INTEREST GROUPS IN FORMATION
OF THE US POLITICAL AGENDA**

Robert Ghevondyan

Resume

The structure of the US political system allows representing various groups' interests in a formal way. The society's ethnic groups, who start or hire organizations through assistance from the government of their own nation-state or through self-organization, use this opportunity as well. In turn, these organizations protect the interests of the relevant government and groups engaged in lobbying activities. Traditionally, the Armenian, Jewish and Greek lobbying organizations are particularly efficient. In recent years Turkish-Azeri lobbies also grew active.

ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԿԻՊՐՈՍԻՑ (1955-1970-ական թթ.)

Տիգրան Ղանալանյան՝

Բանալի բառեր՝ արտագաղթ, Սփյուռք, Մեծ Բրիտանիա, կիպրահայ, հայրենադարձություն, ենթաէթնիկ, Լոնդոն, համայնք, Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանություն:

1950-ական թթ. Կիպրոսում քաղաքական լարված դրությունը վերաճեց զինված բախումների: Ի վերջո, բրիտանական գաղութատիրության դեմ պայքարը 1960թ. հանգեցրեց Կիպրոսի անկախացմանը: Սակայն ժողովրդի զգալի շրջանակներում տիրապետող էր մնում էնոզիսի՝ Հունաստանի հետ վերամիավորվելու գաղափարը, ինչը բնակչության ավելի քան 18%-ը կազմող թուրքերի համար անընդունելի էր: Այս իրողությունները, որոնք առավել սրվեցին 1963-1964թթ., ապա՝ 1974թ., հարկադրեցին տասնյակ հազարավորներին գաղթել երկրից:

Կիպրոսից արտագաղթը կարելի է բաժանել մի քանի փուլերի՝ 1955-1959թթ. (գաղթեց 29 հազար հոգի), 1960-ական թթ. (շուրջ 50 հազար), 1970-1973թթ. (32 հազար): 1953-1973թթ. արտագաղթի 75%-ն ուղղված էր Մեծ Բրիտանիա, 8-10%-ը՝ Ավստրալիա, 5%-ը՝ Հյուսիսային Ամերիկա: 1974-1979թթ. գաղթեց 51.500 հոգի, 15 հազար հոգի մեկնեց արտագնա աշխատանքի: Այս անգամ ամենամեծ թվով մարդիկ (35%) մեկնեցին Ավստրալիա, որին հաջորդող ուղղություններն էին Հյուսիսային Ամերիկան, Հունաստանը և Մեծ Բրիտանիան: 1980-1986թթ. տնտեսական կացության բարելավման արդյունքում արտագաղթողների թիվը կազմեց ընդամենը 2 հազար հոգի, միաժամանակ 2850 հոգի վերադարձավ [1, pp. 59-61]:

Արտագաղթի միտումը չըջանցեց նաև հայ համայնքը: 1945թ., Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության տվյալներով, Կիպրոսում կար 5 հազար հայ (մեծամասնությունը զբաղված էր արհեստագործությամբ, նաև առևտրով) [2, թ. 53]: Ըստ

¹ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ:

նույն ընկերության 1946թ. տեղեկանքի՝ Կիպրոսում կար 4 հազար հայ [3, թ. 37]: Այս թիվը հաստատվում է ինչպես նույն թվականին այլ աղբյուրի կողմից [4, էջ 62; 5, էջ 211]¹, այնպես էլ հետագայում [6, էջ 111]²:

1955-1959թթ. հակագաղութատիրական պայքարի ժամանակ երկրում ստեղծված վիճակի պատճառով մոտ 900 հայ Կիպրոսից տեղափոխվեց Մեծ Բրիտանիա [9, p. 14]³: Արդյունքում՝ 4549 հոգու հասած համայնքից 1960թ. մնաց 3628-ը [11, p. 21]:

Ըստ Կիպրոսի 1960թ. պաշտոնական մարդահամարի՝ հայերի թիվը 3627 էր [1, p. 58]: Նույն թվականին հայերի մոտավոր տեղաբաշխումը հետևյալն էր. Նիկոսիայում՝ 2500, Լառնակայում՝ 800, Լիմասոլում՝ 250, Ֆամագուստայում՝ 150⁴: Հայ ավետարանականների թիվը 200 էր, որոնց մեծ մասը բնակվում էր Նիկոսիայում, մնացածն էլ՝ Լառնակայում: Իսկ հայ կաթոլիկ ընտանիքների թիվը ընդամենը մեկ տասնյակ էր [13, էջ 405]:

Հայերը հիմնականում զբաղված էին արհեստներով և առևտրով: Մերձավոր և Միջին Արևելքի այլ երկրների հայկական համայնքների համեմատ՝ հայերի կենսամակարդակն ավելի բարձր էր⁵: Չնայած հայ առևտրականների և մանր բուրժուազիայի դերը բավական նշանակալի էր, տեղի էր ունենում նրանց դուրսմղման քաղաքականություն: Կային նաև գործազուրկներ, այստեղ հեռանկար չտեսնողներ, ինչի արդյունքում անգլիական հպատակությունն ունեցող հայերի մի մասը սկսել էր արտագաղթել Արևմուտք, առավելաբար Անգլիա [14, թ. 1-2]:

Ըստ Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանության 1961թ. տեղեկանքի՝ նախորդ երկու տարիների ընթացքում մոտ 800 հայ լքել էր երկիրը և փոխադրվել Անգլիա, Հարավային Ամերիկա, Կանադա և այլուր՝ գործազրկության տնտեսական դժվարությունների, թուրքերի և հույների միջև թշնամանքի արդյունքում ֆիզիկական ոչնչացման վախի պատճառով: Այդպիսով, 1961թ. հոկտեմբերին Կիպրոսի հայերի թիվը հաշվվում էր 3200-3300 հոգի (2200-ը՝ Նիկո-

¹ Նույն ժամանակ Նիկոսիայում հայ ավետարանականների թիվը 135 էր, իսկ Լառնակայում՝ 95 [5, էջ 212]:

² 1944թ., ըստ ՀԽՍՀ արտգործոժողկոմ Ս.Կարապետյանի տեղեկանքի, Կիպրոսի հայերի թիվը 25 հազար էր, որը, անշուշտ, խիստ հեռու էր իրականությունից [7, թ. 1]: Այս նույն թիվն է նշված ԽՍՀՄ արտգործոժողկոմ Մոլոտովին 1945թ. Ս.Կարապետյանի հաղորդած տեղեկատվության մեջ [8, թ. 6]:

³ Օրինակ, Լառնակայից արտագաղթը սկսվեց 1956թ. [10, էջ 3]:

⁴ 1950թ. Ֆամագուստայում ապրում էր 112 հայ, դպրոցն ուներ 24 աշակերտ [12, էջ 6]:

⁵ Նույնը վկայում է նաև Կ.Գևորգյանը [13, էջ 419]:

սիայում, 600-ը՝ Լաոնակայում, 120-ը՝ Ֆամագուստայում և այլուր) [14, թ. 1]: Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանատանը 1961թ. կայացած զրույցների ընթացքում, սակայն, հայկական համայնքի ներկայացուցիչները նշում էին, որ այստեղ մնացել է լոկ 2-2,5 հազար հայ, քանզի նախորդող վերջին շրջանում մոտ հազար հայ տեղափոխվել էր Անգլիա, ԱՄՆ և այլ երկրներ [15, թ. 1]:

ԽՍՀՄ դեսպանության 1961թ. տեղեկանքը հաղորդում է, որ ՀԽՍՀ հայրենադարձություն սկսելու մասին լուրն ստանալուն պես հայերի արտագաղթը նկատելիորեն նվազել էր [14, թ. 2]: Ստեղծված իրավիճակում Կիպրոսի հայերի զգալի մասը ցանկանում էր հայրենադարձվել և դրա համար դիմում էր ԽՍՀՄ դիվանագիտական ներկայացուցչությանը՝ նշելով, որ հակառակ պարագայում անխուսափելի է գաղթն Արևմուտքի երկրներ, որտեղ հայերը ենթակա են ուժացման [15, թ. 3]:

1961թ. հոկտեմբերի դրությամբ 1962թ. հայրենադարձվելու համար գրանցվել էր 746 հոգի, որոնցից 270-ը՝ Մեծ Բրիտանիայի, 230-ը՝ Կիպրոսի քաղաքացիներ, իսկ 232-ը՝ առանց քաղաքացիության անձինք, նաև 2-ը՝ Ֆրանսիայի, 6-ը՝ Լիբանանի, 4-ը՝ Արաբական Միացյալ Հանրապետության և 2-ը՝ Իրանի քաղաքացիներ [14, թ. 8]:

Սակայն հայերի հայրենադարձությունը չէր խրախուսվում ինչպես Կիպրոսի իշխանությունների, այնպես էլ որոշ այլ պետությունների կողմից, որոնք ձգտում էին հայերին տեղափոխել իրենց երկրներ: Լիմասոլի հայ համայնքի հայրենադարձության կազմակերպման ներկայացուցիչները վկայում էին, որ 1962թ. Կիպրոսի ներքին գործերի նախարարը, ընդունելով իրենց, հրաժարվել էր որևէ աջակցություն ցուցաբերել հայրենադարձության խնդրում: Դրա փոխարեն նախարարն առաջարկել էր մեկնել Անգլիա, Ավստրալիա կամ որևէ այլ երկիր, բայց ոչ ԽՍՀՄ [16, թ. 1-2]:

1962թ. ՌԱԿ ղեկավարներից Բարունակ Թովմասյանը Լիբանանում ԽՍՀՄ դեսպանությանը հայտնել էր, որ Բրազիլիայի, Կանադայի և Ավստրալիայի դեսպանատները ոչ միայն ակտիվ աշխատում են Եգիպտոսի հայերին իրենց մոտ տեղափոխել, այլև իշխանությունների թողտվության պայմաններում նույն նպատակով հատուկ բյուրոներ են բացել Կիպրոսում [17, թ. 8]: Մեծ Բրիտանիան ևս փորձում էր հայրենադարձության փոխարեն հայերին ուղղորդել դեպի իր երկիր [18, էջ 2]:

Ըստ Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանության հաղորդած տեղեկությունների՝ 1963թ. հայրենադարձության կազմակերպմանը խոչընդոտել էին ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները՝ հայերի շրջանում գովազդելով կենսապայմանների առավելություններն ԱՄՆ-ում, Անգլիայում, Կանադայում, Ավստրալիայում և այլ կապիտալիստական երկրներում [19, թ. 4]:

«Հայրենիք» ամսագիրը 1962թ. նշում էր, որ հայրենադարձության կազմակերպմամբ շահագրգռված չէին նաև համայնքի որոշ շրջանակներ. «Ուստի ներգաղթի հարցը կը դառնայ... կտակի խնդիր մը Բարեգործականի «հայրենասեր»ներուն համար, որոնք կը տեսնեն, թէ իրենց հաւատարիմ բազմութեան մեկնումով պիտի չկրնան դաշտ գտնել՝ խաղերու եւ շահագործման համար, յանուն կտակներու գործադրութեան պարտականութեան...»

Այս «հայրենասեր»ները կրնան տարինէ՛ր շարունակ սփիւռքի մէջ դրախտի առասպելներ հիւսել սովետ հայրենիքին շուրջ, անոր վերելքն ու նոյնիսկ անկախութի՛ն պանծացնել, սակայն չեն ուզեր նաեւ կորսնցնել իրենց յաճախորդները, բարեսիրակա՛ն գործունէութեան համար...» [20, էջ 79]:

Այնուամենայնիվ, կիպրահայերի հայրենադարձությունը նպատակահարմար համարվեց և մասամբ կենսագործվեց [21, թ. 1]: 1962-1964թթ. Կիպրոսից հայրենադարձվեց 505 հոգի¹: 1962-1982թթ. հայրենադարձության ցուցանիշով Կիպրոսը զիջում էր միայն Իրանին, Սիրիային, Եգիպտոսին և Թուրքիային [22, էջ 299]: Այս առումով կիպրահայ համայնքը (նաև իր թվական սակավության շնորհիվ) հայտնվեց բավական նպաստավոր վիճակում, եթե այն համեմատենք ավելի խոշոր համայնքների (օրինակ՝ Բուլղարիա, Ռումինիա) հետ, որտեղից ծավալվող շարունակական արտագաղթը չէր արժանանում Խորհրդային Հայաստանի ղեկավարության բավարար ուշադրությանը:

Կիպրոսի հույների և թուրքերի միջև հակամարտությունը հատկապես սրվեց 1963թ. դեկտեմբերին և 1964թ. սկզբում, երբ բախումների արդյունքում երկու կողմերից էլ զոհվեցին հարյուրավոր մարդիկ: Դրա հետևանքով առաջացան զգալի թվով փախստականներ: Կիպրոսի կառավարության հայտնած տվյալների համաձայն՝ 1964թ. հունվարի 20-ի դրությամբ Նիկոսիայի 241 հայ ընտանիք թողել էր բնակարանները, 54 տուն բռանգրավվել էր թուրքերի

¹ Հաճախ հանդիպում է 600 թիվը [9, p. 14]:

կողմից, կողոպտվել էր հայկական 3 խանութ, թուրքական կողմի վերահսկված տարածքում մնացել էր 10 հայ ընտանիք, 700-900 հայ անցել էր հունական թաղամասեր [23, էջ 2]: Փախստականների մեծամասնությունը հաստատվել էր ազգականների մոտ, ոմանք տներ էին վարձել, մի մասն էլ ապաստանել էր Մելգոնյան կրթական հաստատությունում: Հայկական բարեգործական կառույցները և անհատ մեծահարուստներն օգնություն էին ցուցաբերում նրանց [24, թ. 3]:

1964թ. «Ազդակ» թերթը Կիպրոսում հայերի կրած նյութական վնասների մասին գրում էր. «Անձնական տուներու կահկարասիները, և շատ մը խանութներու ապրանքները իսկոյն ենթարկուեցան թրքական կողոպուտի, այսպիսով շատ մը հայերուն քառասուն տարուան հալալ վաստակը մէկ օրէն միւսը մոխիրի վերածուեցաւ: Բարեբախտաբար, Ազգային Իշխանութեան արթուն հսկողութեան տակ կարելի եղաւ կարգ մը խանութներուն ապրանքները փրկել լման կողոպուտէ և անոնք յաջողեցան իրենց կեանքը վտանգելով իսկ յաջողցնել պարպումի ծրագիրը. այս բաները պատահեցան տարուան սկիզբի այն վտանգաւոր օրերուն՝ երբ ինքնակոչ «հայ ներկայացուցիչներ և առաջնորդներ» Լոնտոն փախչելով կը սպասէին որ կացութիւնը շտկուի և գան իրենք զիրենք «ներկայացուցիչ»ի հանգամանք տան յաչս օտարին» [25, էջ 3]:

Հայրենադարձության կոմիտեի անդամների՝ 1964թ. փետրվարին հաղորդած տեղեկություններով, հայերին հասցված նյութական վնասը (նաև մնացած անշարժ գույքը՝ 750 հազար ֆունտ ստերլինգ) կազմում էր 1 մլն ֆունտ ստերլինգ: Նախորդ 2-3 տարիների ընթացքում մոտ հազար հայ հեռացել էր Կիպրոսից, որոնցից շուրջ 500-ը՝ ՀԽՍՀ, 500-ը՝ Կանադա [26, էջ 76], Անգլիա, Լիբանան: 1964թ. սկզբում Կիպրոսում մնացել էր 2600 հայ, ընդ որում՝ մեծամասնությունը Նիկոսիայում, 3 ընտանիք՝ Ֆամագուստայում, 35 ընտանիք՝ Լառնակայում և 10 ընտանիք՝ Լիմասոլում: Ենթադրվում էր, որ Կիպրոսում կմնա մոտ 500 հայ՝ առավել բարեկեցիկները: Կիպրոսի հայերի մեծամասնությունը ցանկանում էր տեղափոխվել այլ երկրներ: Հայրենադարձության կազմակերպման կոմիտե էր դիմել 35 ընտանիք՝ ՀԽՍՀ տեղափոխվելու համար [24, թ. 4]:

1964թ. զգալի թվով հայեր ժամանակավորապես մեկնել էին արտասահմանյան տարբեր երկրներ՝ իրենց ազգականների մոտ, ինչի արդյունքում այստեղ մնացել էր շուրջ 2 հազար հայ [27, թ. 2], «եւ այս թիւն ալ արագաբար

նուազելու վրայ է: Ամեն ոք կաշխատի ձեռով մը դուրս գալ Կիպրոսէն եւ հաստատուիլ աւելի ապահով եւ խաղաղ վայրեր» [28, էջ 10]: Մնացած հայերի տնտեսական դրությունն աստիճանաբար ծանրանում էր, ուստի ակնկալվում էր սփյուռքահայ այլ համայնքների աջակցությունը [29, էջ 2]: Կիպրահայ աղետյալներին օգնություն էին տրամադրում ամերիկահայ բարերարները, Շվեյցարիայի հայասերների միությունը [30, էջ 2]:

Եթէ մինչև 1963-1964թթ. արտագաղթը հայերի թիվը շուրջ 3500 էր [31, էջ 21; 11, p. 16], ապա դրանից հետո իջավ մոտ 2 հազարի: Չնայած դրան, արդեն 1965թ. [21, թ. 1] և 1967թ. [32, թ. 1, 7]¹ Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանության տվյալների համաձայն՝ այն հասնում էր 3 հազարի: 1965-1966թթ. գրակա- նության մեջ հանդիպում ենք 4 հազար [34, էջ 28] և 3,5 [35, էջ 502] հազար թվերին: Սա, կարծում ենք, գաղթի ամբողջ ծավալը չներառելու հետևանք է, քանզի, եթէ նույնիսկ հաշվի առնենք Արևմուտք մեկնած որոշ թվով հայերի վերադարձը, համայնքի թիվը չէր կարող հասնել 3,5, առավել ևս՝ 4 հազարի:

Արտագաղթը վտանգում էր նաև Կիպրոսում մնացող հայ համայնքի քա- ղաքական կարգավիճակը: Համայնքի ներկայացուցիչները կողմնակից էին թե՛ հույներին, թե՛ թուրքերին, թե՛ հայերին մշակութային ինքնավարություն տրա- մադրելուն և դեմ՝ թուրքական առանձին վարչական միավորի ձևավորմանը: Դա իրականացնելու համար կիպրահայերը փորձում էին 1963-1964թթ. Կանադա, Անգլիա, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու Ավստրալիա գաղթած հայերին վերադարձնել Կիպրոս, քանզի համայնքի թվաքանակի մեծացումը կնպաստեր այդ ծրագրի կենսագործմանը: Հայերը հանդես էին գալիս Կիպրոսի ամբողջականության օգտին, դեմ էին արտաքին միջամտու- թյանը, միացմանը Հունաստանին² կամ Թուրքիայի ու Հունաստանի միջև բա- ժանմանը: Համայնքի գործիչներն աշխատում էին նաև թուրքերի կողմից 1963- 1964թթ. հասցված վնասի փոխհատուցում ստանալու ուղղությամբ [32, թ. 4-5]:

Չնայած, ըստ Բ.Եղիայանի, 1972թ. Կիպրոսում կար 3.250 հայ [37, էջ 894]³, սակայն ավելի արժանահավատ են թվում Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանության

¹ 1969թ. Գ.Մելիսոնեցին ևս նշում է նույն թիվը [33, էջ 554]:

² Այս պարագայում տեղի ունենալիք մաքսային փոփոխություններն էապես կվնասեին կիպրա- հայերի տնտեսական գործունեությանը [27, թ. 3]: Անկախ դրանից էլ Կիպրոսի հույները փորձում էին հայերին դուրս մղել տնտեսությունից [36, թ. 2]:

³ 1972թ. հանդիպում ենք նաև 4 հազար թվին, որն, անշուշտ, չի համապատասխանում իրակա- նությանը [38, էջ 2]:

1971թ. տեղեկանքի տվյալները, համաձայն որոնց՝ այստեղ ապրում էր 2500 հայ [39, թ. 2]¹:

1974թ. հուլիսին տեղի ունեցավ Կիպրոսի պատմության ամենաճակատագրական իրադարձություններից մեկը՝ Թուրքիան գրավեց կղզու հյուսիսային հատվածը: Արդյունքում՝ կիպրահայ համայնքը կրեց նոր վնասներ՝ 75-80 ընտանիք (Կիրենիայում՝ 4-5 ընտանիք, Ֆամագուստա քաղաքի Վարոշա թաղամասի 40-50 ընտանիք և Նիկոսիայի արևմտյան հատվածում ապրող շուրջ 30 ընտանիք) դարձավ փախստական²: Այս ներխուժումից հետո ևս բազմաթիվ հայեր լքեցին Կիպրոսը՝ գլխավորապես գաղթելով Մեծ Բրիտանիա [9, p. 14, 17], ինչպես նաև ԱՄՆ [41, էջ 124]:

1974թ. օգոստոսի կեսերին, «Ազդակ» թերթի տեղեկությամբ, Կիպրոսի հայերը տեղաբաշխված էին հետևյալ քաղաքներում. Նիկոսիա՝ 1500 հոգի, Լառնակա՝ 400, Ֆամագուստա՝ 130, Լիմասոլ՝ 400, Կիրենիա՝ 20: Հայ ավետարանականների թիվը 50 էր, որոնց մեծամասնությունը բնակվում էր Լառնակայում: Հայ կաթոլիկներից մնացել էին ընդամենը մի քանի ընտանիքներ [42, էջ 3]:

Ըստ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի 1975թ. Կիպրոսի հայ համայնքի մասին տեղեկանքի՝ այստեղ բնակվում էր մոտ 2500 հայ³, որոնցից 1500-ը՝ Նիկոսիայում, 400-ը՝ Լառնակայում, 400-ը՝ Լիմասոլում, 130-ը՝ Ֆամագուստայում, 20-ը՝ Կիրենիայում⁴: Համաձայն տեղեկանքի՝ Կիպրոսից գաղթը դադարել էր, և արտագաղթած հայերի ընդհանուր թիվը հասնում էր մոտ 2 հազարի [44, թ. 6-7]: 1974թ. «Ազդակ» թերթը ևս այդ թիվը հաշվում էր 2 հազար [42, էջ 3]:

Չնայած Կիպրոսից տեղի ունեցող արտագաղթին, միաժամանակ նկատվել է նաև զգալի թվով հայերի ներհոսք արդեն 1940-ական թթ. երկրորդ կեսից: Առաջին հերթին 1948թ. Պաղեստինից արտագաղթող որոշ հայեր տեղափոխվեցին այստեղ, որոնց 1950-ական թթ. երկրորդ կեսին միացան եգիպտա-

¹ Ըստ նույն տեղեկանքի, համայնքի ամենակազմակերպված ուժը, չնայած ՌՄԿ և ՀԲԸՄ բավականակտիվ գործունեությանը, ՀՅԴ-ն էր, որն այստեղ ուներ 300 անդամ [39, թ. 4-5]:

² Թուրքերը բարբարոսություններ գործեցին իրենց անցած տարածքների հայկական պատմամշակութային արժեքների նկատմամբ [40, էջ 90]:

³ Ըստ ՀԽՍՀ արտգործնախարարության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի 1975թ. տեղեկանքի՝ Կիպրոսում ապրում էր 3 հազար հայ [43, թ. 1]:

⁴ Ըստ տեղեկանքի՝ Կիպրոսում կար 50 հայ լուսանկարիչ, որոնց մեծամասնությունն ապրում էր Լառնակայում:

հայերը: 1970-1980-ական թթ. Կիպրոս տեղափոխվեցին որոշ թվով սիրիահայեր, 1975-1990թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ լիբանանահայեր, իսկ 1970-ական թթ. վերջից՝ իրանահայեր [45, էջ 14, 11, p. 15-17; 46, թ. 5]¹:

Այսպիսով, 1955-1970-ական թթ. շուրջ 2 հազար կիպրահայ արտագաղթեց զանազան երկրներ, շուրջ 500-ն էլ հայրենադարձվեց: Գաղթողների հիմնական ուղղությունն Անգլիան էր (գերազանցապես Լոնդոնը), ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կիպրահայերի մեծամասնությունը Կիպրոսի անկախացումից անմիջապես առաջ ստացավ բրիտանական անձնագրեր: Հետագայում արդեն շատերը մեկնում էին Մեծ Բրիտանիա՝ վերամիավորվելու իրենց ընտանիքի անդամների հետ: Եվ 1980-ական թթ. բավական դժվար էր գտնել մի կիպրահայի, որը չունենար Կիպրոսից գաղթած բարեկամ կամ ընկեր Լոնդոնում [48, p. 65]: Բացի Մեծ Բրիտանիայից, զգալի թվով կիպրահայեր տեղափոխվեցին Ավստրալիա [49, թ. 1]², ԱՄՆ³, Կանադա, Լիբանան, նաև Հունաստան ու Վենեսուելա [53, էջ 370, 539] և այլուր:

1970-ական թթ. վերջին և 1980-ական թթ. առկա են Կիպրոսի հայության թվաքանակին վերաբերող իրարամերժ մի շարք տվյալներ: Եթե 1978թ. Կիպրոսի հայերի թիվը շուրջ 2 հազար էր [54, էջ 3], ապա 1980թ. նշվում է 3 հազար [55, էջ 19], իսկ 1984թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասայանի՝ ՀԿԿ Կենտկոմին ներկայացրած տեղեկանքում՝ 4 հազար թիվը [56, թ. 2]⁴: Սակայն տեղաբաշխման թվաքանակը ներկայացնելու պարագայում այն ավելի ցածր էր: 1986թ. Կիպրոսի հայերի թիվը հաշվվում էր մոտ 2 հազար, որից 1200-ը՝ Նիկոսիայում, 350-ը՝ Լառնակայում, 350-ը՝ Լիմասոլում, ինչպես նաև որոշ այլ բնակավայրերում [58, էջ 4]: Արդեն 1990թ. Կիպրոսի հայերի թիվը 2,5 հազար էր [59, էջ 144]: 1998թ. Կ. Դալլաքյանը Կիպրոսի հայերի թիվը հաշվում էր 2-2,5 հազար [60, էջ 229]:

¹ Լիբանանից Կիպրոս եկող հայերին օգնում էր նաև ՀԲԸՄ-ը. «Լիբանանի քաղաքացիական կոհնեթրոն հետեւանքով Կիպրոս ժամանող ազգայիններէն ոմանք պատսպարուեցան Հ. Բ. Ը. Միութեան Լառնաքայի հաւաքավայրը» [47, էջ 35]:

² 1970թ. Ավստրալիայում Հունաստանից և Կիպրոսից եկած հայերի թիվը միասին 200 հոգի էր [50, թ. 132]:

³ ԱՄՆ տեղափոխվող կիպրահայերի փոխադրման հարցերով զբաղվեց ԱՆՉԱ-ն (*ANCHA, American National Committee to Aid Homeless Armenians*) [51, p. 77]: Սակայն, ի տարբերություն որոշ այլ երկրներից հայերի արտագաղթի, կիպրահայերի պարագայում ԱՆՉԱ-ն չստանձնեց միակ կազմակերպչի և համակարգողի դերը՝ չնայած դրա վերաբերյալ որոշ կանխատեսումներին [52, էջ 3]:

⁴ Լույն թիվը տե՛ս նաև [57, էջ 49]:

Այս թվական տարբերությունները, իհարկե, պայմանավորված են անճշտություններով, որոշ դեպքերում՝ ավելի հին տեղեկությունների կիրառմամբ, սակայն նաև միգրացիոն տեղաշարժերով, որոնք տվյալ ժամանակաշրջանում դրական էին՝ պայմանավորված առավելաբար Լիբանանից ներհոսքով:

Քաղաքական ծանր դրությունը վտանգեց նաև կիպրահայ մշակութային և կրթական կյանքը: 1974թ. թուրքական ներխուժումից հետո նույնիսկ հարցականի տակ դրվեց Մելգոնյան կրթական հաստատության գոյության նպատակահարմարությունը: Իսկ այն սփյուռքահայ մտավորականության և համայնքային գործիչների կարևոր դարբնոց էր ոչ միայն Կիպրոսի, այլև Հունաստանի, Լիբանանի, Սիրիայի, Պաղեստինի, Հորդանանի, Ֆրանսիայի և այլ երկրների հայության համար [61, էջ 419-420]: Չնայած ստեղծված դժվարություններին՝ հաստատությունը շարունակեց գործունեությունը (մինչև 2005թ.) և 1980-ական թթ. ուներ ավելի քան 320 աշակերտ աշխարհի 20 երկրներից [62, c. 56]:

Արտագաղթը երևում էր Կիպրոսի հայկական դպրոցների աշակերտների թիվը դիտարկելիս: Եթե 1959-1960թթ. ուսումնական տարում Նիկոսիայի Մելիքյան-Ուզունյան վարժարանի աշակերտների թիվը 264 էր, իսկ մանկապարտեզի սաներինը՝ 55, Լառնակայի ազգային վարժարանի աշակերտների թիվը (ներառյալ մանկապարտեզը և նախակրթարանը)՝ 70, Լիմասոլի ազգային վարժարանի աշակերտների թիվը՝ 40, իսկ Ֆամագուստայինը՝ 24 [13, էջ 403-404], ապա 1972թ. Կիպրոսի 4 նախակրթարանները միասին ունեին ընդամենը 250 աշակերտ [37, էջ 896]:

Ինչպես նշվեց, արտագաղթած կիպրահայերի հիմնական մասը տեղափոխվեց Մեծ Բրիտանիա: 1955-1959թթ. գաղթող կիպրահայերը գրեթե ամբողջությամբ տեղափոխվեցին այստեղ [63, էջ 3], սա առավելապես շարունակվեց նաև 1960-1970-ական թթ.: Նրանք հիմնականում հաստատվում էին Լոնդոնում: Կ.Գևորգյանը, 1965թ. խոսելով վերջին շրջանում Անգլիա եկած հայերի մասին (որի արդյունքում հայերի թիվը հասնում է 4 հազարի), նրանց մեջ որպես հիմնական խումբ առանձնացնում է կիպրահայերին [64, էջ 390]: Եվ իսկապես, Կիպրոսի հայերը կազմեցին Անգլիայի համայնքի կորիզը, որոնց հետագայում միացան Լիբանանի, Սիրիայի, Իրաքի և Իրանի հայերը [65, էջ 3]¹:

¹ Այս ժամանակ Մեծ Բրիտանիա եկան նաև որոշ թվով հայեր Հնդկաստանից և Հեռավոր Արևելքից [66, p. 25]:

Լոնդոնի հայ համայնքի ժողովրդագրական պատկերի վրա Կիպրոսի հայերի թողած ազդեցության մասին սփյուռքահայ գործիչ Ստեփան Շահապազը գրում է. «Իր թիւը շատ զգալիօրէն աւելացաւ՝ բաղդատաբար հինին հետ, մանաւանդ երբ վերջին տարիներուն Կիպրահայեր հոն գաղթեցին: Նորեկներն են, ուրեմն, որ բացարձակ մեծամասնութիւն կը կազմեն, հիմա, Լոնտոնահայ գաղութին մէջ» [67, էջ 2]: Իսկ 1972թ. «Մասիս» թերթը վկայում է, որ Լոնդոնի գաղութի մեծամասնությունը Կիպրոսից եկած հայերն են [68, էջ 5]: Չնայած սկզբնական շրջանի դժվարություններին և ոմանց վերադարձին [14, թ. 2]՝ կիպրահայերը կարողացան ինտեգրվել և հարմարվել իրենց նոր կյանքին:

Կիպրահայերի ներհոսքը կարևոր փոփոխությունների հանգեցրեց հատկապես Լոնդոնի համայնքում: Նրանց, ինչպես նաև լիբանանահայերի ու իրանահայերի գալուստը, օրինակ, հարկարդեց համայնքին ունենալ Լոնդոնի երկրորդ՝ Սբ Պետրոս հայկական եկեղեցին: Այս առիթով պետք է նշել, որ չնայած Կիպրոսի հայկական գաղութը գտնվում էր Անթիլիասի կաթողիկոսության ենթակայության տակ, իսկ Լոնդոնի համայնքը, ուր գալիս էին կիպրահայերը՝ Էջմիածնի, դա խնդիրներ չէր առաջացնում նրանց կամ Մերձավոր Արևելքի այլ երկրներից եկած հայերի համար [48, pp. 14, 26]:

Կիպրոսից եկած հայերը լծվեցին նաև տեղի կրթական կյանքի զարգացման գործին: Լառնակայի հայկական վարժարանի նախկին ուսուցչուհի Անի Պատագճյանն այդ մասին նշում էր. «Որոշած եմ շարունակել, որովհետև Կիպրոսի հայ վարժարանին ջերմ մթնոլորտ են զրկվելու ի վեր ինձի հոգեկան բավարարություն տվող միակ աշխատանքը ազգիս զավակներուն հայերեն սորվեցնելն է: Խորապես կգիտակցեմ, որ նվիրական պարտականություն մը ունիմ կատարելիք, որ ինձի երջանկություն կպարզեն» [69, էջ 7]:

Ուշագրավ են Լոնդոնում հայերի ենթաէթնիկ տարբեր խմբերի փոխհարաբերությունները: Կիպրահայերը որոշ չափով հակադրվում էին իրանահայերին, որոնք ևս բավական խոշոր խումբ էին կազմում: Այս երկուսի միջև եղած տարբերությունները, միմյանցից առավել լինելու մտածումները որոշ լարվածություն էին մտցնում հայկական համայնքի ներսում: Մասնավորապես, իրանահայերը համարում էին, որ կիպրահայերը և լիբանանահայերն ավելի «արևմտյան» մշակույթի կրողներ են, ինչի հետևանքով

տուժում է նրանց «հայկականությունը»: Տարբեր երկրներից Լոնդոն եկած արևմտահայերը, այդ թվում կիպրահայերը, սերտ կապեր ունեին միմյանց հետ, որոնք պայմանավորված էին ցեղասպանության հետևանքով բաժանված ընտանիքների բարեկամական կապերով, կրթության և աշխատանքի բերումով Մերձավոր Արևելքի զանազան երկրներ այցելելով, նույն կառույցների տարբեր մասնաճյուղերի միջոցով միմյանց ճանաչելով և այլն: Իրանի այլևայլ քաղաքներից Լոնդոն եկած հայերը, ի տարբերություն կիպրահայերի, նման սերտ կապեր չունեին, ինչն այդ քաղաքների միմյանցից բավական հեռու լինելու հետևանք էր, մինչդեռ Կիպրոսի հայկական համայնքների իրար մոտիկ գտնվելը և փոքրաթիվ լինելը հանգեցնում էին միմյանց լավ ճանաչելուն [48, pp. 45, 62-65]:

Այսպիսով, ռազմաքաղաքական իրարահաջորդ իրադարձությունների պատճառով 1955-1970-ական թթ. հազարավոր կիպրահայեր արտագաղթեցին զանազան երկրներ, գերազանցապես Մեծ Բրիտանիա, ինչը, բնականաբար, թուլացրեց Կիպրոսի հայ համայնքը: Դրա փոխարեն նոր երկրներում, հատկապես Մեծ Բրիտանիայում (Լոնդոնում), կիպրահայերը կարևոր դեր կատարեցին տեղի հայ համայնքի զարգացման գործում:

Հունվար, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Cyprus: A Country Study, ed. by Solsten E., Washington, D.C: Federal Research Division, Library of Congress, 1993.
2. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, ց. 1, գ. 89:
3. ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 51, թ. 37:
4. «Էջմիածին», 1946, թիվ 1:
5. *Խրչոբեան Տ.*, «Ոսկեմատեան հայ ավետարանականութեան», հ. Բ, Պէյրուք, 1951:
6. «Հայրենիք», Բոստոն, 1951, թիվ 10:
7. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 10:
8. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 82:
9. *Hadjilyra A.*, The Armenians of Cyprus, Nicosia, 2012.
10. «Ազդակ», Բեյրուք, 21.VIII.1974:
11. *Hadjilyra A.*, The Armenians of Cyprus, Larnaca, 2009.
12. «Արարատ», Բեյրուք, 21.V.1950:
13. *Գէորգեան Կ.*, Սմէնուն տարեգիրքը 1961, Ը. տարի, Պէյրուք, 1960:
14. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 301:
15. ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 37:
16. ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 50:

17. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 314:
18. «Հայրենիք», Բոստոն, 30.X.1962:
19. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 330:
20. «Հայրենիք», Բոստոն, 1962, թիվ 5:
21. ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 101:
22. *Մելիքսեթյան Հ.*, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985:
23. «Հայրենիք», Բոստոն, 1.II.1964:
24. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 346:
25. «Ազդակ», Բեյրութ, 19.X.1964:
26. *Կապուտիկյան Ս.*, Խճանկար հոգու և քարտեզի գույներից, Երևան, 1976:
27. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 376:
28. «Սփիւռք», Բեյրութ, 10.IX.1964:
29. «Հայրենիք», Բոստոն, 28.X.1964:
30. «Հայրենիք», Բոստոն, 17.III.1965:
31. *Խուրշուրյան Լ.*, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964:
32. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 395:
33. *Մելիտինեցի Գ.*, Ապրումներ: Հայ կեանքի մութ ու լուսաւոր իրականութիւններուն հետ, Կ. Բ, Պէյրութ, 1969:
34. *Խաթանասեան Ե.*, Հայոց թիվը, Բոստոն, 1965:
35. *Տէմիրճեան Վ.*, Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, Անթիլիաս, 1980:
36. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 443:
37. *Եղիայեան Բ.*, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975:
38. «Զարթոնք», Բեյրութ, 26.III.1972:
39. ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 60:
40. *Քուչուկյան Պ.*, Սփովածները: Ուղևորություն աշխարհի հայկական համայնքներ, Երևան, 2013:
41. *Գոսազեան Ժ.*, Լոս Անճելըսի հայ համայնքի ժողովրդագրական պատկերը, Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, խմբ.՝ Ռ.Կարապետյան, Երևան, 2014, էջ 119-154:
42. «Ազդակ», Բեյրութ, 20.VIII.1974:
43. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 573:
44. ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 209:
45. Լուսարձակ հանրային մեր ներկայ կեանքին վրայ, խմբ.՝ Թ.Վեհապետեան, Կ. Բ, Պէյրութ, 1982:
46. ՀԱԱ, ֆ. 1418, ց. 3, գ. 72:
47. Հայ բարեգործական ընդհանուր միութիւն: Ընդհանուր տեղեկագիր 1978 տարեշրջանի, Նիւ Եորք, 1979:
48. *Talai V.A.*, Armenians in London: The Management of Social Boundaries, Manchester University Press, 1989.
49. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 426:
50. ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 188:

51. *Zadoian H.*, Our Brothers' Keepers: The American National Committee to Aid Homeless Armenians (ANCHA), New York, 2012.
52. «Զարթոնք», Բեյրութ, 1.IX.1964:
53. «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:
54. «Հայրենիք», Բոստոն, 23.V.1978:
55. *Համազասպյան Վ.*, Սովետական Հայաստանը և Սփյուռքը, Երևան, 1980:
56. ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13:
57. *Ոսկանյան Ա.*, Սփյուռքահայության թվական կազմը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թիվ 9, էջ 47-51:
58. «Ազդակ», Բեյրութ, 29.VII.1986:
59. *Ավագյան Գ.*, Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, 1993:
60. *Դալլաքյան Կ.*, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 1998:
61. *Մելքոնյան Է.*, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:
62. *Дятлов В., Мелконян Э.*, Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, 2009.
63. «Արարատ», Բեյրութ, 5.VII.1958:
64. *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1965, ԺԲ. տարի, Պեյրութ, 1965:
65. «Հայրենիք», Բոստոն, 21.XII.1984:
66. Ovena: A directory of the Armenian diaspora: Personalities & organisations: Ով-է-Նա: Սփյուռքահայ հասցեարան, Beirut, 1980.
67. «Սփիւռք», Բեյրութ, 8.XII.1968:
68. «Մափս», Բեյրութ, 29.X.1972:
69. «Հայրենիքի ձայն», Երևան, 13.I.1971:

ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԿԻՊՐՈՍԻՑ (1955-1970-ական թթ.)

Տիգրան Ղանալանյան

Ամփոփագիր

Մեծ Բրիտանիայի գաղութատիրության դեմ պայքարի, Կիպրոսի անկախությանը հաջորդած քաղաքական զարգացումների, հույների և թուրքերի միջև բախումների և 1974թ. թուրքական ներխուժման պայմաններում հազարավոր կիպրահայեր նախընտրեցին արտագաղթել երկրից: Երկիրը լքած շուրջ 2,5 հազար հայերից 500-ը հայրենադարձվեց, իսկ մյուսների հիմնական մասն ուղղվեց Մեծ Բրիտանիա, որտեղ կարևոր դեր կատարեց Լոնդոնի հայ համայնքի ձևավորման և զարգացման գործում: Միաժամանակ, Մերձավոր և Միջին Արևելքի տարբեր երկրներից տեղի ունեցավ հայերի ներհոսք դեպի Կիպրոս, ինչը որոշ չափով հակակշռեց արտագաղթի բացասական հետևանքները տեղի համայնքի համար:

ЭМИГРАЦИЯ АРМЯН С КИПРА (1955-1970-ЫЕ ГГ.)

Тигран Ганалаян

Резюме

В условиях борьбы против колониальной Великобритании, политических развитий, последовавших за независимостью Кипра, столкновений между греками и турками и турецкого вторжения в 1974г. тысячи кипрских армян предпочли эмигрировать из страны. Из покинувших страну около 2,5 тысяч армян 500 репатриировали, а большая часть остальных направилась в Великобританию, где сыграла важную роль в деле формирования и развития армянской диаспоры в Лондоне. В то же время произошла волна переселения армян из разных стран Ближнего и Среднего Востока на Кипр, что в определенной мере перевесило негативные последствия эмиграции для местной армянской диаспоры.

THE MIGRATION OF ARMENIANS FROM CYPRUS (IN 1955-1970s)

Tigran Ghanalanyan

Resume

Under the conditions of a struggle against the British colonial rule, political developments in the aftermath of Cyprus independence, clashes between Greeks and Turks, and Turkish invasion of the island in 1974, several thousands of Armenians chose to leave the country. Out of 2,500 Armenians who left the country about 500 repatriated, while most of the rest went to UK, playing an important role in establishment and development of the Armenian community of London. At the same time, an influx of Armenians to Cyprus from Middle Eastern countries took place, which to some extent mitigated the emigration's negative effects for the local Armenian community.

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԴԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ**

Արմեն Ղալեչյան՝

Բանալի բառեր՝ զինված ուժեր, տեղեկատվական գործողություն, գորքերի դեկավարում, ազդեցություն թիրախային լսարանի վրա, ոչ մահաբեր զինատեսակ:

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին առավել զարգացած պետություններում տեղեկատվական տեխնոլոգիաների, հասարակական կյանքի և հատկապես զինված ուժերի լայնածավալ տեղեկատվայնացումն էապես փոխեց պետական կառույցների տեղեկատվական գործունեության բնույթը, մեթոդներն ու ձևերը: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները կարևոր ազդեցություն ունեցան 21-րդ դարասկզբի ռազմական գործողությունների և դրանց վարման ռազմավարության ու մարտավարության ձևերի, միջոցների ընտրության վրա: Ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակներում հավանական կամ գործող հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերակայության հասնելու ձգտումը դարձել է պետությունների հիմնական խնդիրներից մեկը:

Հակառակորդի նկատմամբ համապատասխան տեղեկատվական գերակայություն ապահովելու հիմնական գործիքը *տեղեկատվական գործողությունն է՝ որը* տեղեկատվական հնարավորությունների համակարգված օգտագործումն է՝ ուղղված հակառակորդի որոշումների ընդունման պրոցեսի խափանմանը, աղավաղմանը կամ վերահսկմանը, ինչպես նաև նմանատիպ գործողություններից սեփական ուժերի պաշտպանմանը:

Տեղեկատվական հակամարտության ոլորտում ԱՄՆ զինված ուժերն անհերքելի առաջատարն են: Այսօր ԱՄՆ զինված ուժերում մեծ ուշադրություն

¹ ՀՀ ԶՈւ ԳՇ ռազմավարական պլանավորման վարչության տեղեկատվական հակապայքարի բաժնի պետ, գնդապետ:

² http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID13078

են դարձնում տեղեկատվական գործողությունների հայեցակարգային հիմունքների զարգացմանը: Վերջին տարիներին ԱՄՆ զինված ուժերը կազմակերպել են մի շարք թեմատիկ քննարկումներ՝ *ԱՄՆ շտաբների պետերի կոմիտեի գլոբալ օպերացիաների վարչության ղեկավարի տեղակալի և քաղաքական հարցերով ՊՆ տեղակալի ապարատի տեղեկատվական գործողությունների վարչության պետի ղեկավարությամբ*: Քննարկվել է տեղեկատվական գործողությունների տեսության զարգացման հիմնահարցը, առավել մեծ ուշադրություն է դարձվել ԱՄՆ զինված ուժերի տեղեկատվական գործողությունների համակարգված վերլուծություններին՝ հաշվի առնելով դրանց իրականացումը *գլոբալ ինտեգրված օպերացիաների* շրջանակներում (գլոբալ ինտեգրված օպերացիաների մասին ներկայացված է «Միասնական ուժեր 2020» ազգային զինված ուժերի շինարարության և կիրառման հիմնարար հայեցակարգում: Այն ԱՄՆ ԶՈՍ հիմնարար փաստաթղթերի պատրաստման կանխորոշող և ուղղորդող փաստաթղթերից է): Տեղեկատվական գործողությունների տեսության զարգացման համար առաջին հերթին հարկավոր է հաշվի առնել գլոբալ ինտեգրված օպերացիաների հետևյալ բաղկացուցիչները.

- գորքերի (ուժերի) ղեկավարումը,
- օպերացիաների ընթացքում նախաձեռնության հափշտակումը, պահպանումը և ժամանակին կիրառումը, այդ գործողություններում համաձայնեցվածության ապահովումը,
- համագործակցության ապահովումը,
- ռազմական օպերացիաների անցանկալի հետևանքների, այդ թվում գորքերի (ուժերի) անձնակազմի և խաղաղ բնակչության կորուստների նվազեցման ապահովումը:

«Զորքերի ղեկավարում» եզրույթը ենթադրում է միջոցառումների համախումբ, որոնց գրազետ իրականացումը թույլ է տալիս հրամանատարական կազմին արդյունավետ և մշտապես ղեկավարել ենթակաների գործողությունները:

Անշուշտ, հրամանատարը ենթականերին հնարավորություն է տալիս որոշումներ կայացնել և գործել ինքնուրույն, իհարկե՝ հիմնվելով օպերացիայի մտահղացման և փոփոխվող իրավիճակի դինամիկայից բխող խելամիտ նախաձեռնության վրա (ԱՄՆ ցամաքային գորքերի *FM 6-0 Mission Command*; 2003թ. օգոստոս):

Տեղեկատվական գործողությունների ոլորտի մասնագետները նշում են, որ գորքերի (ուժերի) ղեկավարման ճկուն և հարմարեցված մոտեցումներն են հրամանատարներին թույլ տալիս առավել օպերատիվ լուծել իրենց առջև ծառայած խնդիրները՝ այդպիսով ձևավորելով ռազմական գործողությունների վարման ավելի արդյունավետ միջավայր:

«Միջավայր» ասելով հասկանում ենք այն գործոնները, պայմանները և իրավիճակները, որոնք հնարավորություն են տալիս կանխատեսել (ստեղծել) և վերահսկել իրավիճակի զարգացումն ինչպես լոկալ, տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մակարդակով: Որպես օրինակ կարելի է նշել «Ազատություն Իրաքին» օպերացիայի ընթացքում գրանցված յուրահատուկ դեպքերը, երբ ԱՄՆ զինված ուժերի մարտական գործողությունների տեղեկատվական ապահովման ընթացքում ինքնուրույնություն տրվեց մարտավարական խմբերի գործողություններին: Դա հնարավորություն ընձեռեց նրանց ինքնուրույն որոշել տվյալ պահին անհրաժեշտ տեղեկատվական հաղորդագրությունների բնույթը, ինչպես նաև դրանց տարածման միջոցներն ու ձևերը, ինչն էլ տվեց դրական արդյունք:

Ջորջերի ղեկավարման ադապտացված մեթոդը կարևոր է ԱՄՆ զինված ուժերի տեղեկատվական գործողությունների համար: Օրինակ, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման գործողությունների ժամանակ իրականանում է անմիջական շփում *թիրախային լսարանի* հետ:

Ժամանակակից պետությունների զինված ուժերի կողմից օպերացիաների ժամանակ տեղեկատվության վրա հակառակորդի ներազդման հնարավորության սահմանափակումը (արգելումը) և թիրախային լսարանի հետ նրա աշխատանքների խափանումն իրենց կարևորությամբ գրեթե հավասարազոր են տարածքների զավթման միջոցառումներին: Նման խնդիրների իրականացման համար հրամանատարը պետք է ճիշտ գնահատի այն տեղեկատվական տիրույթը, որում նա գործում է, և ձգտի տեղեկատվական գործողությունների ժամանակ մշտապես ներազդել թիրախային լսարանի վրա, ապահովել, որպեսզի տեղեկատվական տիրույթում չառաջանա *«տեղեկատվական դատարկություն»*, որը կարող է լրացնել հակառակորդը: Կարևոր է, որ տեղեկատվական աղբյուրների առատության պայմաններում զինված ուժերի կողմից թիրախային լսարանին տրվող մեծաքանակ տեղեկատվությունը համապատասխանի զինված ուժերում անցկացվող միջոցառումներին:

Զինված ուժերի տեղեկատվական գործողությունների տեսական հիմքերի ձևավորման ընթացքում հարկավոր է հաշվի առնել օպերացիոն միջավայրում ներգրավված տեղեկատվական հնարավորությունների փոխհամաձայնեցվածության բարձր մակարդակի ապահովումը (ցամաքային, օդային, ցանցային և այլ ոլորտներում), քանի որ հակառակորդի նկատմամբ տեղեկատվական առավելության կարելի է հասնել միայն կոնկրետ համաձայնեցված և փոխլրացնող միջոցառումների դեպքում: Կարևոր է նաև, որ տեղեկատվական գործողությունների իրականացման և նմանատիպ միջոցառումների արդյունավետության բարձրացման համար հատուկ ուշադրություն դարձվի միջգերատեսչական համագործակցությանը¹: Ակնկալվում է, որ այդպիսի կապերի հաստատումը, ինչպես պաշտպանության նախարարության ներսում, այնպես էլ գերատեսչությունների միջև, հնարավորություն կտա ընտրել համապատասխան գործընկերներ, ովքեր կարող են լուծել տեղեկատվական գործողությունների այս կամ այն կոնկրետ խնդիրը, ինչն իր հերթին թույլ է տալիս փոքրաթիվ ուժերով և միջոցներով գտնել ռազմական օպերացիաների խնդիրների օպտիմալ լուծումներ:

Համաձայն ռազմական փորձագետների, մարտական գործողությունների ժամանակ առկա է, այսպես կոչված, «մահաբեր զենքի» կիրառման շեմ՝ կրիտիկական կետ: Այդ կետն անցնելով՝ զինված ուժերը ռիսկի են դիմում հայտնվել այնպիսի իրավիճակում, որի դեպքում խաղաղ բնակչությունը և համաշխարհային հանրությունը խիստ հակազդում և քննադատում են այդ գործողությունները: Այդ իսկ պատճառով հրամանատարները պետք է զիտակցեն, որ *յուրաքանչյուր ռազմական օպերացիայի (մարտական գործողության) նպատակն է ստիպել ու հարկադրել հակառակորդին վայր դնել զենքը և դադարեցնել դիմադրությունը և ոչ թե ֆիզիկապես ոչնչացնել նրա ռազմական տեխնիկան ու անձնակազմը*: Այդ առումով տեղեկատվական գործողությունները հանդիսանում են «ոչ մահաբեր ելքով զենք»՝ նվազեցնելով այդ գործողությունների բացասական հետևանքները: Օրինակ, Աֆղանստանի պատերազմական փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ «Թալիբանի»

¹ Օրինակ, Աֆղանստանում ԱՄՆ պաշտպանության նախարարության և տեղեկատվական գործողությունների մասնագետները ռազմավարական հաղորդակցային միջոցառումներ իրականացնելիս համագործակցել և աշխատել են Սպիտակ տան միջկրոնական նախաձեռնության վարչության, Ջորջ Մարշալի անվան Եվրոպական անվտանգության հարցերի կենտրոնի, Պետքարտուղարության, ԳՀՎ, ՆԱՏՕ ԶԼՄ օպերատիվ կենտրոնի, ՄԱԿ տարբեր առաքելությունների և այլոց հետ:

գրոհայինների տեղեկատվական գործողությունների վարման հնարավորություններից էր արդյունավետ հակաօդային պաշտպանությունը: Հետևապես, բնավ կարևոր չէ, թե ինչպես է չեզոքացվել ռազմական ինքնաթիռը՝ խոցվել է հրթիռով, թե՞ «իջեցվել» է թշնամու պրոպագանդայի միջոցով: Զարգացնելով այս թեման՝ նշենք, որ ըստ ԱՄՆ զինված ուժերի հրամանատարության հրահանգի, «տեղեկատվական գործողություններ պլանավորող մարմինների գլխավոր նպատակը լինելու է մահաբեր և ոչ մահաբեր զինատեսակի կիրառման կրիտիկական հարաբերակցության սահմանումը՝ գորքերի տեղեկատվական գործողությունների կիրառման հնարավորությունները բարձրացնելու և ռազմական օպերացիաների նպատակներն ավելի արագ իրականացնելու համար»¹: *Ներկայումս չկա այնպիսի հստակ սխեմա (ալգորիթմ), որի շնորհիվ հնարավոր լինի գնահատել տեղեկատվական գործողությունը*: Որոշ երկրների ՋՈւ մասնագետները կարծում են, թե ժամանակն է ստեղծել փաստաթուղթ, որը նվիրված կլինի *տեղեկատվական գործողությունների գնահատմանը*: Այդ առիթով ԱՄՆ ՊՆ նախկին նախարար Լեոն Փանետան նշում էր, որ այդպիսի միջոցառումների արդյունավետությունը (օրինակ՝ ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովումը) բարդ է հաշվարկել, դժվար է կանխորոշել տեղեկատվական գործողությունների իրականացմանն անհրաժեշտ այն ուժերն ու միջոցները, որոնց կիրառումը կարող է հակառակորդի դիմադրության դադարեցման պատճառ լինել: Ֆինանսական միջոցների սահմանափակ պայմաններում տեղեկատվական գործողություններում ավելի արդիական է դառնում «արժեք/արդյունավետություն» հարաբերակցությունը:

Հիմնվելով վերոնշյալի վրա՝ ԱՄՆ զինված ուժերի տեղեկատվական գործողությունների միասնական կենտրոնում մշակվում է ութ քայլից բաղկացած հստակ միջոցառումների ալգորիթմով գնահատման ծրագիր: Այն ընդգրկում է.

1. տեղեկատվական տարածության բնութագրումը,
2. ռազմական օպերացիաների պլանում (պլանավորման մեջ) տեղեկատվական գործողության ներառման անհրաժեշտության գնահատումը,

¹ Այս գաղափարներն արծարծված են ԱՄՆ ՋՈւ շտաբների պետերի կոմիտեի JP 3-13 «Տեղեկատվական գործողություններ» կանոնադրություններում, ինչպես նաև JP 3-13. XXX կանոնադրությունների շարքում, որոնք ուղիղ կապ ունեն տեղեկատվական գործողությունների հետ:

3. տեղեկատվական գործողությունում տեղեկատվության կիրառման պահանջարկի և տվյալների հայթայթման ուսումնասիրումը,
4. տեղեկատվական գործողության գնահատման ելակետային տվյալների կազմումը,
5. տեղեկատվական գործողության և հետախուզական ապահովման միջոցառումների իրականացումը,
6. տեղեկատվական գործողության գնահատման համար տեղեկատվական տիրույթի դիտարկումն ու տվյալների հավաքագրումը,
7. ստացված տվյալների վերլուծությունը, տեղեկատվական գործողության գնահատումը,
8. հրամանատարին զեկույցի ներկայացումը՝ ստացված արդյունքների և առաջարկությունների վերաբերյալ:

Բացի այդ, խորհուրդ է տրվում գործողությունների գնահատումն իրականացնել ինչպես օպերացիաների մոդելավորման կամ հրամանատարաշտաբային գորավարժությունների նախապատրաստման ժամանակ, այնպես էլ դրանց անցկացման ընթացքում և ավարտից հետո: Որպես տեղեկատվահոգեբանական գործիք՝ հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև տպագիր ԶԼՄ-ին:

Տեղեկատվական գործողությունների տեսական հիմքերի զարգացմանը զուգահեռ՝ կարևոր է ուսումնասիրել դրանց պլանավորման մասնագետների ուսուցանման և պատրաստման հեռանկարները: Տեղեկատվական գործողությունների պլանավորման մասնագետները պետք է նախնական գիտելիքներ ունենան հետևյալ 6 ոլորտում.

1. Տեղեկատվական գործողությունների տեսություն, միջմշակութային շփումներ և տեղեկատվական տիրույթներ

Այս կետը ներառում է.

- Զանգվածների հոգեբանության, անձի էթնիկ-մշակութային առանձնահատկությունների ուսումնասիրումը, որոնք կարող են ազդել մարդու կողմից տեղեկատվության ընկալման և վերձանման պրոցեսի, որոշում ընդունելու և այն իրականացնելու վրա:
- Ռեզուման (տեղեկատվական) գործողությունների վարման ընթացքում հնարավոր ներազդեցության հաշվարկումը տեղեկատվական

ուղորտի և տեղեկատվական տարածության ու դրանից բխող ֆիզիկական առանձնահատկությունների վրա:

2. Կրիտիկական մտածողություն և շփման կանոններ

Այստեղ անհրաժեշտ է ուսումնասիրել հետևյալ հարցերը.

- բարդ սոցիալական, տեխնիկական համակարգերի, հաղորդակցման պրոցեսների հերթականության և գործառնության սկզբունքները,
- բարդ խնդիրների լուծման նպատակով վերլուծական մեթոդների ու ձևերի կիրառումը,
- մտածողության, հոգեբանության ընդհանուր օրինաչափությունների և սկզբունքների իմացությունը:

3. Տեղեկատվական կարողությունների կազմը և դրանց կիրառումը տեղեկատվական գործողություններում

Պետք է նախապես ուսումնասիրել ՉՈւ տեղեկատվական հնարավորությունները, միջգերատեսչական գործընկերների հետ որոշել համատեղ կիրառվող կազմակերպությունները, թիրախային լսարանը, ինչպես նաև տեղեկատվական հաղորդագրությունների նպատակները, թեմաները, դրանց տեսակները և տարածման ձևերը ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման ընթացքում: Կարևոր է, որ ուսումնասիրվեն նաև տեղեկատվական գործողությունների անցկացմանը վերաբերող իրավական հարցերը: Հարկ է ուսումնասիրել և վերլուծել այդ ոլորտին վերաբերող առաջավոր փորձը՝ հաշվի առնելով ապագա պատերազմներում դրանց կիրառման հնարավորությունները:

4. Համատեղ, միջգերատեսչական և միասնական տեղեկատվական գործողությունների պլանավորում

Միջգերատեսչական գործընկերների և ոչպետական կազմակերպությունների հետ համագործակցելիս հարկավոր է.

- իմանալ տեղեկատվական գործողությունների իրականացման կանոնները, սկզբունքները, խնդիրներն ու հնարավորությունները, սահմանափակումներն ու միջոցները, գործողությունների ալգորիթմը,
- Զինված ուժերում առկա տեղեկատվական միջոցների և ուժերի կիրառման դեպքում ուղղորդվել պետության նախագահի և պաշտպանության

նախարարի կողմից, իրազեկ լինել նպատակի իրականացման համար նրանց ընդունած միջոցներին և մեխանիզմներին,

- ամենօրյա գործունեության և արտակարգ իրավիճակների ժամանակ կարողանալ կանխորոշել Ջինված ուժերի տեղեկատվական գործողությունների իրականացմանն անհրաժեշտ միջոցների պահանջարկը, ինչպես նաև ապահովել տեղեկատվական գործողություններն անհրաժեշտ ռեսուրսներով՝ ըստ պաշտպանության նախարարության պահանջների:

5. Տեղեկատվական գործողությունների հետախուզական ապահովումը

Տեղեկատվական գործողությունների հետախուզական ապահովումը ռազմական գործողության պլանավորման ավգորիթմում առանցքային դեր և նշանակություն ունի: Պետք է կարողանալ գնահատել ունեցած հետախուզական ուժերն ու միջոցները, դրանց հնարավորությունները և կիրառման մասշտաբները, տիրապետել հետախուզական տվյալների հավաքման, վերամշակման, վերլուծության և բաշխման հմտություններին, կանխագուշակել հակառակորդի մտահղացումները, ինչպես նաև գնահատել հետախուզական և այլ գործողություններ վարելու նրա հնարավորությունները:

6. Նպատակակետերի բաշխում, նշանադրում և ներազդում

Այս ոլորտի մասնագետները պետք է տիրապետեն.

- տեղեկատվական նշանակետերի համադրման, սինքրոնացման և ներազդման հմտություններին,
- կարողանան ընտրել և կանխորոշել նախընտրելի նշանակետեր, այդ թվում կրիտիկական, անհրաժեշտ ուժերը և միջոցները, ինչպես նաև դրանց վրա ներազդելու մասշտաբները և տևողությունը,
- իրականացնել տեղեկատվական գործողության գնահատում, հակառակորդի տարբեր համակարգերի վրա ներազդեցության մոդելավորում, իմանալ միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն ու կարողանալ կիրառել դրանք նպատակակետերի բաշխման և նշանադրման պրոցեսների ժամանակ:

Համաձայն մեր դիտարկման՝ տեղեկատվական ոլորտի այս հմտություններին տեսականորեն և գործնականորեն պետք է տիրապետի ոչ միայն

կրտսեր և ավագ, այլ նաև բարձրագույն սպայական կազմը: Այս խնդրի լուծման քայլերից մեկը տեղեկատվական դասընթացների ծրագրերի մշակումն ու դրանց իրականացումն է:

Այսպիսով, Զինված ուժերում օրեցօր մեծանում են տեղեկատվական գործողությունների դերն ու նշանակությունը, զարգանում են դրանց տեսական հիմքերը, ավելանում են տեղեկատվական գործողությունների ստորաբաժանումները: Առաջնահերթ են դառնում այդ ոլորտի նյութատեխնիկական բազայի համալրման և որակյալ մասնագետների պատրաստման հիմնահարցերը:

Դեկտեմբեր, 2015թ.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Արմեն Ղալեյան

Ամփոփագիր

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները կարևոր նշանակություն ունեն 21–րդ դարասկզբի մարտական գործողությունների վարման համար: Ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակներում հավանական կամ գործող հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերակայության հասնելու ձգտումը դարձել է զարգացած պետությունների հիմնական խնդիրներից մեկը:

Հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերակայություն ապահովելու հիմնական գործիքը տեղեկատվական գործողությունն է՝ ուղղված հավանական կամ գործող հակառակորդի որոշումների ընդունման պրոցեսի խափանմանը, աղավաղմանը կամ վերահսկմանը, ինչպես նաև նմանատիպ գործողություններից սեփական զորքերի պաշտպանմանը: Նկատի ունենալով տեղեկատվական գործողությունների կարևորությունն արդի պայմաններում՝ առաջնահերթ են դառնում ոլորտի նյութատեխնիկական բազայի համալրման և մասնագետների պատրաստման խնդիրները:

ВАЖНОСТЬ МЕХАНИЗМОВ ОЦЕНКИ ЗНАЧИМОСТИ И ЭФФЕКТИВНОСТИ ИНФОРМАЦИОННЫХ ОПЕРАЦИЙ В СОВРЕМЕННЫХ ВООРУЖЕННЫХ СИЛАХ

Армен Галечян

Резюме

Новейшие информационные технологии чрезвычайно значимы в ведении военных действий в 21-ом веке. Как в мирные, так и в военные времена стремление достичь информационного превосходства над реальным или гипотетическим соперником стало одной из основных задач развитых государств.

Основным инструментом в обеспечении информационного превосходства над соперником является информационная деятельность, направленная на пресечение, искажение или контроль над процессом принятия решений реального или гипотетического соперника, а также защита собственных войск от подобных действий. Учитывая важность информационной деятельности в современных условиях, приоритетными становятся задачи восполнения логистической базы сферы и подготовка специалистов.

THE IMPORTANCE OF MECHANISMS FOR ASSESSING THE SIGNIFICANCE AND EFFECTIVENESS OF INFORMATION OPERATIONS IN THE ARMED FORCES

Armen Ghalechyan

Resume

The modern information technologies have an important role in conducting military operations in the beginning of the 21st century. Achieving information superiority over a potential or actual adversary in both peace and war times is one of the main objectives of the developed countries.

The main means to ensure information superiority over the adversary is the information operation aimed at disruption, distortion or control of the decision making process of the potential or actual adversary, as well protecting one's own military from similar activities. Given the importance of information operations in modern conditions, the matters of enhancing the technical base and training specialists in this area are prioritized.

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԳՈՎԱԶԴԸ ԵՎ ԴԵՌԱՀԱՍԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

*Աիդա Անաստասյան**

Բանալի բառեր՝ հեռուստաթեր, գովազդ, դեռահասի արժեհամակարգ, մեդիատեքստ, սպառողական հասարակություն, սոցիալական գովազդ, առևտրային գովազդ:

Հոգեբանները զգուշացնում են՝ այն, ինչ մեծահասակներն ընկալում են որպես պատրանք, այլաբանություն կամ հեգնանք, կենսափորձ չունեցող երեխան ընկալում է բառացիորեն: Սպառողական հասարակության զարգացումը խնդրական է դարձնում դեռահասների վրա հեռուստաթերի, մասնավորապես դրա անբակտելի մասի՝ հեռուստագովազդի աճող ազդեցության հարցը: Մեր հոդվածի խնդիրն է անդրադառնալ այն հարցին, թե *ինչպես է հեռուստագովազդն անդրադառնում դեռահասի արժեհամակարգի վրա*:

Անչափահասների հոգեկանի առանձնահատկությունն այն է, որ նրանք սովորում են շրջապատող մեծահասակների օրինակից և հաճախ ընդօրինակում են սիրելի հաղորդումների, հոլովակների, ֆիլմերի հերոսներին¹: Էկրանից ներկայացվող կենսակերպերն ուսումնասիրելիս առանձնահատուկ ուշադրություն է գրավում գովազդը՝ որպես առավել շարժուն, պատկերավոր, ժամանակակից կյանքի ռիթմի հետ ներդաշնակ հեռուստաարտադրանք: Հայտնի է, որ գովազդը շուկայական հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից է, սպառողական հասարակության կարևոր գործիքներից մեկը, որի միջոցով, ինչպես պնդում են տեսաբանները, փորձ է արվում *կապիտալիստական հասարակության հիմնական անհավասարությունը՝ արտադրանքի անհավասարությունը, ծածկել հավասար սպառման հնարավորությամբ*²: Ըստ

* ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի ասպիրանտ:

¹ *М.В. Салтыкова-Волкович*, Социально-педагогическая проблема влияния средств массовой информации на несовершеннолетних, <http://www.elib.grsu.by/katalog/172401-389321.pdf> (30.11.15).

² *Հ. Բայադյան*, Գաղափարաբանություն - գերիշխանություն, <http://actv.am> (30.11.15):

տեսաբանների, եթե պատկերացնենք մի երևակայական առանցք, որի մի բևեռում կլինի ցանկացած մեդիա-տեքստի «հաղորդում», իսկ հակադիր բևեռում՝ «ազդեցություն» բաղադրիչը, ապա «ազդեցություն» բևեռին ամենից ավելի մոտ կլինեն գովազդային տեքստերը: Ունենալով հստակ արտահայտված նշաններ բոլոր մակարդակներում՝ լեզվի, ձևաչափի և բովանդակության, «կաշուն» գովազդային տեքստերը հեշտությամբ առանձնանում են այլ մեդիա-տեքստերից: Դրանց առանձնահատկությունն ակնհայտ ուղղվածությունն է ազդեցություն գործելուն՝ համոզման զանազան տեխնոլոգիաներով¹: Տեսաբանների դիպուկ բնորոշմամբ՝ ժամանակակից սպառողական հասարակության պայմաններում գովազդը մշակութային լանդշաֆտի անհրաժեշտ բաղադրիչն է², որոշ իմաստով՝ արդյունաբերական հասարակության *պաշտոնական արվեստը*: Բնքնուրույն սոցիալական ինստիտուտ, որ խթանում է տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող գաղափարներ և արժեքներ [1, p. 1]: Վերջին ժամանակներս գովազդին նվիրված գիտական ուսումնասիրությունների թիվը կտրուկ աճել է [1, 2, 3]:

Այսպիսով՝ գովազդը մեզ ապրանքներ և կենսաձևեր վաճառելու, թերևս, ամենաարդյունավետ միջոցն է: Տեսաբանների պնդմամբ՝ այն փաստացիորեն *կարգավորում է սպառողական շրջափուլը*՝ ստիպելով մարդկանց ձեռք բերել իրեր, օգտագործել և ապա դեն նետել դրանք [1, p. 1]: Գովազդը շարունակ հորդորում է, որ մենք արժանի ենք ունենալ այս կամ այն շքեղ ապրանքը, մինչդեռ իրականության անհամապատասխանությունն առաջարկվող կենսաձևերի հետ կարող է ընկճվածության պատճառ դառնալ հատկապես դեռահասների համար: Ավելի խելացիները կարող են մտածել, ինչպե՞ս կարելի է առաջարկվող ապրանքները ձեռք բերելու միջոցներ գտնել, այնինչ գովազդն այստեղ էլ պատասխաններ է առաջարկում³: Դրանցից մեկը *վիճակախաղերի գովազդներն* են: Հայկական հեռուստատեքստերում պատկերն այս իմաստով ավելի մտահոգիչ էր, օրինակ, մեկ տասնամյակ առաջ, քան մեր ուսումնասիրած ժամանակահատվածում: Հեռուստատեսային վիճակախաղերը կամաց-

¹ *Т.Г. Добросклонная*, Медиалингвистика: системный подход к изучению языка СМИ, <http://www.ffl.msu.ru/research/publications/dobrosklonskaya/dobrosklonskaya-medialingvistika.pdf> (30.11.15).

² Նույն տեղում:

³ *М.В. Салтыкова-Волкович*, Социально-педагогическая проблема влияния средств массовой информации на несовершеннолетних, <http://www.elib.grsu.by/katalog/172401-389321.pdf> (30.11.15).

կամաց դուրս մղվեցին եթերից՝ տեղը զիջելով դրանց հեռուստատեսային գովազդներին: Մակայն դրանք արդեն բավական են՝ որպես յուրատեսակ հուշարարներ, որոնք փորձում են պատասխանել՝ *որտե՞ղ կարելի է գումար գտնել*: Մասնագետներն ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ գրեթե երբեք չի նշվում, թե գումարը վաստակել է հարկավոր¹: Միավված չենք լինի՝ ասելով, որ վիճակախաղերի առատությունը բնորոշում է մեր երկրում տիրող սոցիալական կացությունը՝ համապատասխանելով դրամի այլընտրանքային աղբյուրներ գտնելու կարիքին ոչ բարեկեցիկ, աշխատավարձ չունեցող կամ դրանով չբավարարվող հասարակության համար: Դեռահասների դեպքում այդ հանգամանքին գումարվում է *առաջարկվող դյուրիներթյամբ դաստիարակվելու վտանգը*:

Հայկական հեռուստաեթերն ուսումնասիրելիս կարելի է գովազդի նմանատիպ հնարավոր վնասների բազմաթիվ այլ օրինակներ գտնել: Եթերում սովորական են դարձել խաղային ներդրումներ գովազդող հոլովակները (օրինակ՝ Վիվառո, Տոտո գեյմինգ ընկերությունների): Զանգվածաբար գովազդվում է, օրինակ, բլոտ խաղալ՝ խաղադրույքներ կատարելով: Գովազդն առաջարկում է նույնիսկ բջջային կազինոյի գաղափարը՝ *շեշտելով խաղալու հասանելիությունը*: Վերջին հանգամանքը, կարծում ենք, վտանգավոր է հատկապես դեռահասների համար, քանի որ նոր տեխնոլոգիաներով ոգևորվածությունը, դրանց նոր հնարավորությունները բացահայտելու խանդավառությունը հատուկ են հատկապես նրանց: Ի դեպ, նշված հոգեբանական գործոնը բավական հմտորեն օգտագործվում է որոշ, օրինակ՝ Իդրամ ինտերնետ-վճարային համակարգի գովազդներում: Դրանցում երեխաներն են, որ մեծահասակներին բացատրում են նրանց բջջայինների հնարավորությունները: Նշված գովազդներում նաև սոցիալական գովազդի բաղադրիչ կա՝ առցանց վճարման միջոցով խնայած ժամանակը նվիրել երեխաներին: Այս հանգամանքն ավելի ազդեցիկ է դարձնում առևտրային գովազդը՝ միաժամանակ երեխաներին ուղղակիորեն կապելով իրենց հետ անմիջականորեն չառնչվող առևտրային ծառայության հետ:

Միայն «Շողակաթ», այժմ՝ նաև Հանրային հեռուստաընկերություններն են, որ բացառություն են կազմում նշված բացասական միտումները տարածելու առումով: Հանրային հեռուստաընկերությունում դա կատարվեց վեր-

¹Նույն տեղում:

ջերս՝ գովազդից հրաժարվելու ճանապարհով: Իսկ «Շոդակաթը»՝ որպես հոգևոր-մշակութային ակիբ, դեռ իր հեռարձակման սկզբում «սեփական կանոնադրությամբ իրեն արգելեց ակոնոլոլային խմիչքների, վիճակախաղերի, խաղատների գովազդը, որոնց մեծ մասն այդ տարիներին օրենքով արտոնված էր հայաստանյան հեռուստատեսությունում»¹:

Հեռուստագովազդի ամենահաճախադեպ թեմաներից մեկը *սեռական բնույթի ակնարկներն են*: Այդպիսին են, օրինակ, մաստակ գովազդող հոլովակները՝ սեռական գրավչության հետ կապվող թարմ շնչառության պատկերներով, կամ պիցցայի գովազդը՝ կնոջ մարմնի, սեռական ակտի և դավաճանության ակնարկներով: Ըստ հոգեբանների՝ երեխաները չեն հասկանում սեռական ակնարկներն ու ենթատեքստերը, սակայն կարող են որսալ էրոտիկ մթնոլորտը, ինչը հոգեբանական նուրբ գործընթացների արդյունքում կարող է հանգեցնել նյարդային խանգարումների, ֆիզիոլոգիական խնդիրների, օրինակ՝ կակազելու, ագրեսիվության կամ անհիմն վախերի²:

Գովազդներում ավելի ու ավելի են հաճախանում ակնհայտ *եսակենտրոնության, կոպտության տեսարանները*: Այդպիսին է, օրինակ, պաղպաղակի գովազդը՝ «Պաղպաղակ ուտելու քո իրավունքը» կարգախոսով: Իր աշխատանքը պաղպաղակով ընդմիջել ցանկացող աշխատակցուհին ղեկավարի նկատողությունից հետո ջարդուփշուր է անում իր աշխատասեղանին եղած ամեն ինչ: Պետք է փաստել, որ նման միտումներն ակնհայտորեն հիմնվում են որոշակի արժեքանության վրա, որ որոշակիորեն արդարացնում է դրանք: Որպես այդպիսին՝ նկատելի է ազատականացող հասարակության արժեքը՝ մարդու իրավունքների առանցքային շեշտադրմամբ: Գովազդը կիրառում է այս գաղափարը՝ սրելով, պարզեցնելով և գերարտահայտիչ դարձնելով: Տեսաբանների վկայությամբ՝ գովազդի տեքստային մասը հաճախ ավելի նշանակալի է, քան տեսողական մասը [1, p. 139]: Քննարկվող գովազդի դեպքում հենց այդ տեքստային բաղադրիչն է արտահայտիչ կարգախոսը, որ կոնկրետ արժեքանություն է վկայակոչում՝ հիմնավորելով փոխանցվող ուղերձը: Հոլովակ ներմուծված կոնֆլիկտն ավելի տպավորիչ է դարձնում այդ ուղերձը, իսկ արդյունքում իրավունքը վերափոխվում է ագրեսիվության:

¹ Մեր մասին, Շոդակաթ, URL://<http://www.shoghakat.am/am/site/about> (07.10.15):

² *М.В. Салтыкова-Волкович*, Социально-педагогическая проблема влияния средств массовой информации на несовершеннолетних, <http://www.elib.grsu.by/katalog/172401-389321.pdf> (30.11.15).

Մտահոգիչ է, որ եթե նախկինում գովացուցիչ ըմպելիքները ներկայացվում էին միայն իբրև ընկերների հետ լինելու, ընկերական ուրախ հավաքույթի մասնիկ, ապա վերջին շրջանում եթերում հայտնվել են նաև հոլովակներ, որոնցում ցուցադրվում է ֆիզիկական ագրեսիա՝ հանուն ըմպելիքի:

Ուշագրավ է Կոկա-կոլա գովացուցիչ ըմպելիքի գովազդը, որը բավական դիպուկ կերպով արտացոլում և ամրապնդում է տարածված մի պատկերացում: Գովազդի հերոսը եվրոպական արտաքինով մի երիտասարդ է, որի մասին հեռուստադիտողին պատմում է ենթակադրային տեքստը: Երիտասարդը ցանկանում է համեղ ուտել, և այդ պահին նրա առջև անցնում է մթերքի տոպրակով ծանրաբեռնված մուգ մազերով, ոչ արտահայտիչ արտաքինով մի աղջիկ: Բայց երիտասարդը ցանկանում է նաև գովանալ, և նրա առջև անցնում է մազերը քամուն տված, լայն ժպտացող մի շիկահեր աղջիկ՝ ձեռքին Կոկա-կոլայով լի տոպրակ: «Ձովանա՞լ, թե՞ համեղ ուտել» երկընտրանքի փոխարեն երիտասարդը նախընտրում է համադրել այդ երկուսը, և գովազդը մեզ ցույց է տալիս շիկահերին՝ այս անգամ մթերքով և Կոկա-կոլայով միաժամանակ: Այսպիսով՝ համեղ ուտելը, և կարելի է կռահել, որ դրա հետ կապված այլ արժեքներ ևս, ինչպես, օրինակ՝ ընտանիքը, հարաբերությունների տևականությունը, լրջությունը և այլն, կապվում են միտումնավոր ընդգծված մուգ հագուստով, աչքի չընկնող կնոջ կերպարի հետ: Այնինչ գովանալը, հետևաբար՝ նաև թեթևությունը, ազատությունը, ումանտիկ արկածները, կապվում են ժպտերես շիկահերի հետ: Իսկ համադրությունը տեղի է ունենում դարձյալ շիկահերի կերպարի մեջ՝ սևահերի տոպրակը նրա ձեռքում պատկերելու միջոցով: Սրանով ընդգծվում է շիկահերի, զուգահեռաբար նաև համապատասխան կենսաձևի առավելությունը:

Այս գովազդը, ռասայական խտրականության որոշակի երանգից զատ, նաև ընդգծված արժեքային նախապատվություն ունի՝ թեթևության ժամանակակից կատարելատիպը: Ուշագրավ է այն տեղաշարժը, որ ժամանակի ընթացքում կատարվել է Կոկա-կոլայի գովազդների մեջ: Ծննդյան տոներին, լույսերին, ընտանեկան մթնոլորտին ուղեկցող «Նվիրի՛ր երջանկություն» կարգախոսը, փաստորեն, վերափոխվել է միանգամայն այլ միտում ունեցող գովազդային ուղերձների:

Ըստ հետազոտողների՝ երեխաների հոգեկանի վրա կարող են ազդեցություն ունենալ նաև ֆիլմի, մուլտֆիլմի, հաղորդման պարբերական ընդհա-

տումները գովազդով ամենալարված հուզական պահերին: Դրանք խզում են, աղավաղում են երեխայի հուզական տրամադրվածությունը: Հերոսներին ապրումակցելու փոխարեն երեխան դիտում է գովազդային զվարթ ու գոհունակ դեմքերը, ինչի արդյունքում կարող են բթանալ նրա հուզականությունն ու ապրումակցման ընդունակությունը¹: Վտանգավոր է և այն, որ գովազդներում հոգատարությունը, սերը մտերիմների նկատմամբ հանգեցվում է որոշ ապրանքներ գնելուն՝ առաջացնելով կախվածություն իրերից: *Գովազդը կեղծակերպում է իրականությունը՝ ստեղծելով և քարոզելով սիմուլացված՝ կեղծ իրականություն, ինչն էական ազդեցություն կարող է ունենալ անչափահասի նոր ձևավորվող աշխարհայացքի վրա*: Մտահոգիչ է այն դյուրինությունը, որը շարունակ քարոզվում է գովազդներում՝ դուրս մղելով աշխատանքի և դրանից ստացվող հաճույքի գաղափարները: Հիմնվելով համաշխարհային մասշտաբով կատարված ուսումնասիրությունների վրա՝ վստահաբար կարելի է ասել, որ մեր երկրում ևս կայացող առևտրային հարաբերություններն էապես ազդում են երկրի ապագա քաղաքացիների վրա՝ ձևավորելով *սպառողներ սպառողական հասարակության համար*: Երբ մշակութային միջոցառումները, մաստակն ու շամպունը հայտնվում են կողք կողքի՝ մեկ գովազդային բլոկում, կարելի է մտահոգվել արժեքների համահարթեցմամբ, որ առհասարակ բնորոշ է ժամանակակից սպառողական հասարակությանը: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ նշված համահարթեցումը կատարվում է ոչ միայն թեմայի, այլև լեզվի առումով, երբ, ինչպես նշում են տեսաբանները, խախտվում են հստակ ոճային սահմանները, տարածվում են լեզվի սխալ կիրառությունները, մեղիա-տեքստերը հարստանում են ոչ նորմատիվ բառապաշարով²: Բացի այդ, ըստ տեսաբանների, ավելի ու ավելի կենտրոնանալով տարբեր կենսաձևերի քարոզման վրա՝ գովազդը մոտենում է այնպիսի գործառույթների, որոնք ավանդաբար կապվում են կրոնի և արվեստի հետ: Հին և ժամանակավրեպ համարվող շատ կարծրատիպեր աննկատելիորեն փոխարինվում են նոր՝ գովազդվող իրականությունների կարծրատիպերով: Ժամանակակից լինելու, ազատության ձգտման թվացյալ բավարարումն

¹Նույն տեղում:

² *Т.Г. Добросклонная*, Медиалингвистика: системный подход к изучению языка СМИ, <http://www.ffl.msu.ru/research/publications/dobrosklonskaya/dobrosklonskaya-medialingvistika.pdf> (30.11.15).

իրականում նոր կախվածություններ է ծնում¹: Այս պայմաններում արժեք, թերևս, մտածել քաղաքացիական հասարակության կերտման մասին, որը «հարաբերականորեն անկախ է պետությունից, բաղկացած է ազատ և պատասխանատվություն կրող անհատներից, որոնց ինքնուրույն գործունեությունն ուղղված է համընդհանուր քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ խնդիրների լուծմանը»²:

Որպես դրական միտում կարելի է նշել վերջին տարիներին հեռուստատեղեկում սոցիալական շեշտադրում ունեցող մի շարք առևտրային գովազդների հայտնվելը: Դրանցից կարելի է առանձնացնել Վիվասել ընկերության բնապահպանական հոլովակները՝ «Ռու կապ ունես» և «Միայն արժանիները կարող են խոսել մեծ արժեքների մասին» կարգախոսներով:

Հաջողված է «Արմենիա» հեռուստաընկերության հաղորդումների միջև անցումներն ապահովող այն հոլովակը, որտեղ «Ամենախելացին» հեռուստախաղի հաղորդավար Ն.Հովհաննիսյանը, շրջապատված դպրոցականներով, գրքեր է դասավորում: Հաջողված են նաև այն հոլովակները, որոնցում գունավոր ժապավեններով ձևավորվում է Մասիսների պատկերը՝ հեռուստաընկերության տարբերանշանի բաղադրիչը: Այս օրինակները կարևոր են, քանի որ հաճախակի կրկնվելով՝ որոշակի դրական արժեքային մթնոլորտ են ստեղծում: Բացի այդ՝ ուշագրավ են նաև գեղագիտական տեսակետից, քանի որ ճաշակով կատարված ռեժիսորական աշխատանքի արդյունք են: Հեռուստատեսության ինքնաներկայացման, ինքնագովազդի հատկանիշներ ունեցող այս հոլովակներն, ըստ այսմ, դրական ազդեցություն կարող են ունենալ դեռահասների վրա և՛ բովանդակային, և՛ էսթետիկական առումներով:

Հեռուստատեսային գովազդն, այսպիսով, կարևոր մեդիա-արտադրանք է, որ անմիջական կապ ունի հասարակության, մասնավորապես դեռահասի արժեհամակարգի հետ: Գովազդային հոլովակներն աստիճանաբար ավելի պատկերավոր, գունազեղ և տպավորիչ են դառնում, որի արդյունքում մեծանում է նաև դրանց ազդեցությունը՝ ցավոք, ավելի շատ բացասական, քան դրական:

Դեկտեմբեր, 2015թ.

¹Նույն տեղում:

² *Լ.Բվանյան*, Քաղաքացիական հասարակության բնորոշ գծերն ու դրա առկայության նախապայմանները, <http://civilngo.com/en> (07.10.15):

Աղբյուրներ և գրականություն

1. *G.Dyer*, Advertising as Communication, London, 1995.
2. *G.Cook*, The discourse of Advertising, London, 1992.
3. *A.Goddard*, The Language of Advertising, London, 1998.

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԳՈՎԱԶԴԸ ԵՎ ԴԵՌԱՀԱՍԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

Աիդա Անաստասյան

Ամփոփագիր

Հոդվածը քննում է հեռուստագովազդի ազդեցությունը դեռահասի արժեհամակարգի վրա: Ժամանակակից սպառողական հասարակության պայմաններում գովազդը մշակութային լանդշաֆտի անհրաժեշտ բաղադրիչն է և արդյունաբերական հասարակության ոչ պաշտոնական արվեստը:

Հոդվածում առանցքային գծերով ներկայացված է գովազդի դրական և բացասական ազդեցությունը դեռահասի արժեհամակարգի ձևավորման վրա, ինչպես նաև անդրադարձ է կատարված գովազդի բովանդակային և թեմատիկ առանձնահատկություններին՝ իբրև մեդիա-տեքստ:

ТЕЛЕВИЗИОННАЯ РЕКЛАМА И СИСТЕМА ЦЕННОСТЕЙ ПОДРОСТКОВ

Аида Анастасян

Резюме

В статье рассматривается влияние телевизионной рекламы на формирование ценностей подростков. В условиях современного потребительского общества реклама является необходимым компонентом культурного ландшафта и официальным искусством индустриального общества.

В статье подчеркивается позитивное и негативное влияние рекламы на формирование ценностей подростков, упоминаются послылы коммерческого содержания, а также такие тематические особенности, как медиатекст.

**TELEVISION ADVERTISEMENT
AND THE TEENAGERS' SYSTEM OF VALUES**

Aida Anastasyan

Resume

The article examines the influence of TV advertisement on teenagers' values. In the conditions of the modern consumer society, advertisement is a necessary component of cultural landscape and an unofficial art of the industrial society.

The article emphasizes the positive and negative impacts of advertisement on the formation of teenagers' values, as well as elaborates on commercials' content and thematic peculiarities as a media text.

**ՑԱՆՑԱՅԻՆ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԸ**

Տաթևիկ Ղազարյան՝

Բանալի բառեր՝ ցանցային պատրաստվածության ինդեքս, միջավայրի ենթա-ինդեքս, պատրաստվածության ենթաինդեքս, կիրառելիության ենթաինդեքս, ազդեցության ենթաինդեքս, տարածաշրջանային մրցունակություն:

Թվային տնտեսության վարկանիշային դասակարգումները հնարավորու-թյուն են ընձեռում գնահատելու տվյալ երկրի SՀՏ (տեղեկատվության և հեռա-հաղորդակցման տեխնոլոգիաներ) ենթակառուցվածքի որակը, այն սպառող-ների, գործարարության և կառավարության՝ SՀՏ-ն օգտավետ գործադրելու ունակությունը: Եթե երկիրը ցանկանում է, որ տնտեսությունը դառնա ավելի թափանցիկ և արդյունավետ, պետք է տեղեկատվական և հեռահաղորդակցա-կան տեխնոլոգիաներն օգտագործի գործունեության ավելի շատ ոլորտնե-րում: Միջազգային տարբեր ցուցանիշների հաշվարկների և դասակարգում-ների միջոցով այս կամ այն երկիրը հնարավորություն է ստանում գնահա-տելու սեփական հաջողությունները տեխնոլոգիական նախաձեռնություննե-րում՝ համեմատելով դրանք այլ երկրների հետ: Այս հաշվարկները միջազգա-յին առևտրի կամ ներդրումների ցանկություն ունեցող երկրներին ապահո-վում են այլ երկրների SՀՏ զարգացման ներուժի և հեռանկարների մասին տեղեկատվությամբ:

Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) և Բիզնես միջազգային դպրոցի (INSEAD) կողմից ամեն տարի հրապարակվում է Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկույցը, որի հիմքում ընկած է ցան-ցային պատրաստվածության ինդեքսը (ՅՊԻ)¹: Այն բնութագրում է տեղեկատ-

^{*} ՉՊՏՀ Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկությունների գործունեության կազմակերպման ամբիոնի հայցորդ:

¹ Այսուհետ ՅՊԻ-ն կօգտագործվի համարժեք իմաստով:

վական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման մակարդակն աշխարհում և դրա ազդեցությունը պետական մրցունակության վրա:


Այս ինդեքսը ցույց է տալիս, թե ինչպես են տեղեկատվական տեխնոլոգիաները փոխակերպում տնտեսությունն ու հասարակությունը: Ձևափոխումներից է նոր հմտությունների մշակումը, որը չափազանց կարևոր է գիտելիքահենք, տեղեկատվությամբ հարուստ հանրային միջավայրում: Այն նաև շրջադարձային նշանակություն ունի զբաղվածության կարգավորման հարցում: Թեպետ ՏՀՏ-ները դառնում են ունիվերսալ, տակավին լուծված չէ հասանելիության և կիրառության խնդիրը, հատկապես զարգացող երկրների համար՝ պայմանավորված թվային ճեղքվածքի փոքրացման անհրաժեշտությամբ: ՑՊԻ-ն ընդգրկում է հասանելիության և կիրառության առանձնահատկությունները՝ կապված ոչ միայն մատչելի ՏՀՏ ենթակառուցվածքի, այլ նաև թվային ռեսուրսների հետ (ծրագրակազմն ու հմտությունները՝ ներառյալ): Բացի դրանից, ՑՊԻ-ն ներառում է ՏՀՏ-ներից ծագող տնտեսական և սոցիալական որոշակի ազդեցությունների գնահատման հնարավորություն: Այսպիսով, ինդեքսը պարզեցնում է այն տարածաշրջանների նույնականացումը, որտեղ ներդրումների կարգավորման ու խթանման քաղաքականությունը կարող է բարձրացնել ՏՀՏ-ների ազդեցությունը զարգացման և աճի վրա¹:

Այլ բնորոշմամբ՝ կարող ենք ասել, որ ՑՊԻ-ն ցույց է տալիս երկրների տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումներին մասնակցելու և դրանցից օգտվելու պատրաստվածության աստիճանը, որն էլ նպաստում է մրցունակության բարձրացմանը: Այս տարի զեկույցը գնահատել է աշխարհում 143 տնտեսությունների ՏՏ մրցունակությունը: ՀՏՖ գնահատականներով՝ Սինգապուրը, Ֆինլանդիան և Շվեդիան շարունակում են առաջատար դիրքեր զբաղեցնել ցանցային պատրաստվածության վարկանիշով: Վարկանիշային առաջին հնգյակը եզրափակում են Նիդեռլանդները և Նորվեգիան: Հայաստանը Ցանցային պատրաստվածության ցուցիչով աշխարհում 58-րդն է 143 երկրների շարքում՝ նախորդ տարվա համեմատությամբ 17 տեղով իր դիրքի բարելավման շնորհիվ:

¹ Վ. Ա. Մարգարյան, Տեխնոլոգիական զարգացում և թվային տնտեսություն, ՀՀ տնտեսության տեխնոլոգիական ներուժի գնահատումը և զարգացման հիմնախնդիրները, «Ամբերդ» մատենաշար, Երևան, 2014թ., էջ 20-21:

ՑՊԻ-ն ներառում է 4 ենթաինդեքս՝ 10 հենասյուններով, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1-7 սանդղակով: Հենասյուններում խմբավորված է 53 ցուցանիշ, որի կեսը ձևավորվում է ղեկավարների կարծիքների հիման վրա, իսկ միավորը ստացվում է 4 ենթաինդեքսների միջին թվաբանականով: Այդ 4 ենթաինդեքսներն են՝ Միջավայր, Պատրաստվածություն, Կիրառելիություն և Ազդեցություն (*Գծապատկեր 1*).

Գծապատկեր 1



Վերջնական ՑՊԻ գնահատականը վերևում հաշվարկված չորս բաղկացուցիչ ենթաինդեքսների գնահատականների պարզ միջինն է, իսկ ամեն մի ենթաինդեքս՝ բաղկացուցիչ հենակետերի պարզ միջինը:


Հայաստանը 2015թ. ինդեքսում 4.2 միավորով զբաղեցնում է 58-րդ տեղը 143 երկրների շարքում (*Աղյուսակ 1*): Իր դիրքը բարելավել է 7 կետով, իսկ միավորը՝ 0.2-ով: Մեր երկիրը 2012-ից սկսած՝ դիրքի ամենամեծ բարելավում գրանցած երկիրն է՝ դիրքը բարելավվել է 36 կետով:

Հայաստանի ՑՊԻ ինդեքսի միավորներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է վերլուծել ենթաինդեքսների ցուցանիշները: Այսպիսով, 2015թ. Միջավայրի ենթաինդեքսը կազմել է 3.9 միավոր, որից Քաղաքական և կարգավորող

միջավայրի ինդեքսի միավորը 3.2 է, իսկ Գործարար և նորարարական միջավայրինը՝ 4.6, Պատրաստվածության ենթահինդեքսի միավորը 5.3 է, որից Ենթակառուցվածք և թվային բովանդակության միավորը 4.4 է, Մատչելիության միավորը 6.1 է, իսկ Հստություններինը՝ 5.3: Հաջորդ ենթահինդեքսի՝ Կիրառելիության միավորը 3.9 է, որից Անհատական կիրառելիության միավորը 3.8 է, Բիզնես կիրառելիության միավորը՝ 3.3, իսկ Կառավարության կիրառելիությունը՝ 4.5: Ազդեցության ենթահինդեքսի միավորը 3.9 է, որից Տնտեսական ազդեցության միավորը 3.5, իսկ Սոցիալական ազդեցության միավորը՝ 4.4: Վերը նշվածն առավել մանրամասն ներկայացնենք *Գծապատկեր 2*-ում:

Գծապատկեր 2

ՀՀ ցանցային պատրաստվածության ենթահինդեքսները¹



¹ Վերլուծությունը կատարվել է մեր ուսումնասիրությունների հիման վրա, աղյուսակի տվյալների համար հիմք է հանդիսացել «The Global Information Technology Report 2014»-ը, World Economic Forum, Geneva, 2014- թղ. 10-14, «The Global Information Technology Report 2015»-ը, World Economic Forum, Geneva, p. 8-12, 2015:

ՑՊԻ բոլոր 4 ենթահինդեքսների գծով Հայաստանն արձանագրել է ն՝ դիրքի, և՛ միավորի բարելավում, ամենամեծը Ազդեցություն ենթահինդեքսի գծով՝ պայմանավորված Սոցիալական ազդեցություն ենթահինդեքսով (+13 կետ):

10 հենաայուններից 4-ի գծով արձանագրվել է դիրքի առաջընթաց, 5-ի գծով՝ հետընթաց, և 1 հենաայան դիրք փոփոխության չի ենթարկվել: Նախորդ տարվա համեմատ 32 կետով առաջընթաց է գրանցվել Մատչելիություն հենաայունների գծով, 31 կետով՝ Կառավարության կիրառելիություն հենաայունների գծով, և 22 կետով՝ Սոցիալական ազդեցություն հենաայան մեջ: Ամենամեծ հետընթաց գրանցվել է Բիզնես կիրառելիություն հենաայան մեջ՝ 18 կետով:

Ըստ տարածաշրջանի մեր երկիրն ընդգրկված է ԱՊՀ երկրների խմբում, որտեղ զբաղեցնում է 4-րդ տեղը 9 երկրների շարքում:

Աղյուսակ 1

ԱՊՀ և տարածաշրջանի երկրների ցանցային պատրաստվածության ինդեքսը 2015թ. (143 երկրների շարքում)¹

Երկիր	Արժեք	Դիրք
ՀՀ	4.2	58
ՌԴ	4.5	41
Ադրբեջան	4.3	57
Թուրքիա	4.4	48
Վրաստան	4.2	60
ԻԻՀ	3.6	96
Ղազախստան	4.5	40
Մոլդովա	4.0	68
Ուկրաինա	4.0	71
Ղրղզստան	3.5	98
Տաջիկստան	3.2	117

ՑՊԻ ցուցանիշով ԱՊՀ երկրների ամենաբարձր դիրքն ունի Ղազախստանը՝ 40, այնուհետև Ռուսաստանը՝ 41: Մեր հարևան երկրներից Թուրքիան զբաղեցնում է 48-րդ դիրքը, Ադրբեջանը՝ 57-րդը, Վրաստանը՝ 60-րդը, Իրանը՝ 96-րդը:


¹ Վերլուծությունը կատարվել է մեր ուսումնասիրությունների հիման վրա, աղյուսակի տվյալների համար հիմք է հանդիսացել «The Global Information Technology Report 2015»-ը, World Economic Forum, Geneva, p. 8, 2015.

ԱՊՀ և տարածաշրջանի երկրներից Հայաստանը ՑՊԻ դիրքով առաջ է Իրանից և Վրաստանից՝ համապատասխանաբար 38 և 2 կետերով, Ադրբեջանին զիջում է 1 կետով, Թուրքիային՝ 10 կետով, Ռուսաստանին՝ 17 կետով: ԱՊՀ երկրներից ամենամեծ առավելությունն ունենք Տաջիկստանի նկատմամբ՝ 59 միավորով, Ղրղզստանից առաջ ենք 40 միավորով, Ուկրաինայից՝ 27 միավորով, Սուդանից՝ 10 միավորով:

Այժմ վերլուծենք ՑՊԻ ենթահինդեքսների ցուցանիշները՝ համեմատություններ կատարելով Հայաստանի և տարածաշրջանի երկրների միջև:

Գծապատկեր 3

Հայաստանի և տարածաշրջանի երկրների ՑՊԻ ենթահինդեքսների ցուցանիշները



Գծապատկեր 3-ից հստակ երևում է, որ շրջակա միջավայրի ենթահինդեքսի ցուցանիշով մեր երկիրը բավական ցածր ցուցանիշներ է գրանցել՝ 3.9 միավորով զբաղեցնելով 78-րդ դիրքը: Տարածաշրջանի երկրներից մենք առավելություն ունենք միայն Իրանի նկատմամբ, վերջինս զբաղեցնում է 93-րդ դիրքը՝ 3.7 միավորով: Հարևան երկրներից ամենաբարձր ցուցանիշը գրանցել է Թուրքիան՝ 44-րդ դիրք 4.4 միավորով:

Ինչ վերաբերում է պատրաստվածության ենթահինդեքսի ցուցանիշին, ապա կարող ենք նշել, որ մեր երկիրն այստեղ ավելի լավ դիրքում է գտնվում՝ 44-րդ դիրք 5.3 միավորով: Այն զիջում է միայն Ռուսաստանին, որը գտնվում է 27-րդ դիրքում՝ 5.6 միավորով, և Թուրքիային՝ 41-րդ դիրք 5.3 միավորով:

Վիրատելիության ենթաինդեքսի ցուցանիշով Հայաստանը հարևան երկրների ցանկում զիջում է Ռուսաստանին, որը տարածաշրջանում ամենաբարձր ցուցանիշ գրանցած երկիրն է՝ 39-րդ դիրք 4.4 միավորով: Հաջորդը Ադրբեջանն է, որը զբաղեցնում է 41-րդ դիրքը՝ 4.3 միավորով, այնուհետև Թուրքիան՝ 62-րդ դիրք 4.0 միավորով: Մեր երկիրն առավելություն ունի Վրաստանի և Իրանի նկատմամբ, որոնք զբաղեցնում են համապատասխանաբար 72-րդ դիրքը՝ 3.8 միավորով և 108-րդ դիրքը՝ 3.1 միավորով:

Բավական լավ ցուցանիշներ ենք արձանագրել Ազդեցություն ենթաինդեքսում: Այս մասին է վկայում այն փաստը, որ տարածաշրջանի երկրներից մենք զիջում ենք միայն Ռուսաստանին և Ադրբեջանին, համապատասխանաբար զբաղեցնելով 42-րդ դիրքը՝ 4.1 միավորով և 48-րդ դիրքը՝ 4.0 միավորով: Հայաստանը 54-րդ դիրքում է՝ 3.9 միավորով, հետևում թողնելով Թուրքիային 9-րդ դիրքում՝ 3.9 միավորով, Վրաստանին 64-րդ դիրքում՝ 3.8 միավորով, իսկ ամենավերջում Իրանն է՝ 116-րդ դիրքում՝ 3.0 միավորով:

Իսկ թե ինչ արդյունքներ ենք գրանցել ՅՊԻ հենասյունների ցուցանիշների մասով՝ կարող ենք դիտարկել *Աղյուսակ 2-ում*:

Դիտարկվող տարածաշրջանի երկրների համեմատ (բացառությամբ Իրանի Իսլամական Հանրապետության) ՀՀ ենթաինդեքսների գրեթե բոլոր արժեքներն ամենացածրն են:

Այս ենթաինդեքսները գնահատում են ՏՀՏ միջավայրը, ՏՀՏ օգտագործելու հասարակության պատրաստվածությունը, դրանց փաստացի կիրառությունը և ՏՀՏ՝ հասարակության և տնտեսության վրա ազդեցությունները: Առաջին երեք ենթաինդեքսները կարող են համարվել ուղղորդող ուժ, որ ստեղծում են չորրորդ ենթաինդեքսի արդյունքները՝ ՏՀՏ ազդեցությունները: Այս ենթաինդեքսների հիման վրա հաշվարկվում է Ցանցային պատրաստվածության ինդեքսը:

Քաղաքական և կարգավորող միջավայրի ցուցանիշով Հայաստանը հետընթաց է գրանցել 0.1 միավորով՝ զիջելով տարածաշրջանի բոլոր երկրներին: Ամենալավ ցուցանիշը գրանցել է Թուրքիան՝ 3.9 միավոր, գտնվում է 54-րդ դիրքում: Հաջորդը Ադրբեջանն է 69-րդ դիրքում՝ 3.9 միավոր: Տարածաշրջանի երկրներից Վրաստանը գտնվում է 76-րդ դիրքում՝ 3.6 միավորով, հաջորդը Ռուսաստանն է՝ 79-րդ դիրքում՝ 3.6 միավորով, իսկ Իրանը գտնվում է 100-րդ դիրքում՝ 3.4 միավորով:

Աղյուսակ 2

Հայաստանի և տարածաշրջանի երկրների ՑՊԻ հենասայունների ցուցանիշները 2015թ.¹

Ենթահնդեքսներ	Հայաստան	Միաստան	Ադրբեջան	Թուրքիա	Վրաստան	Իրան
Քաղաքական և կարգավորող միջավայր	3.2	3.6	3.9	3.9	3.6	3.4
Գործարար և նորարարական միջավայր	4.6	4.4	3.9	4.9	4.4	4.1
Ենթակառուցվածք և թվային բովանդակություն	4.4	5.0	4.3	4.6	4.3	3.0
Մատչելիություն	6.1	6.5	5.1	6.6	6.6	5.8
Հմտություններ	5.3	5.3	5.1	4.8	4.9	4.7
Անհատական կիրառելիություն	3.8	5.1	4.5	4.0	3.8	2.9
Բիզնես կիրառելիություն	3.3	3.6	3.7	3.8	3.3	3.0
Կառավարության կիրառելիություն	4.5	4.4	4.7	4.2	4.3	3.4
Տնտեսական ազդեցություն	3.5	3.7	3.5	3.3	3.0	2.7
Սոցիալական ազդեցություն	4.4	4.6	4.5	4.5	4.6	3.2

Գործարար և նորարարական միջավայրի հենասայան մեջ Հայաստանի ցուցանիշում դրական տեղաշարժ է եղել 0.3 միավորով, որն էլ մեր երկրին զգալի առավելություններ է տվել: Հայաստանը գտնվում է 57-րդ դիրքում՝ 4.6 միավորով, զիջելով միայն Թուրքիային, որը գտնվում է 34-րդ դիրքում՝ 4.9 միավորով:

¹ Վերլուծությունը կատարվել է մեր ուսումնասիրությունների հիման վրա, աղյուսակի տվյալների համար հիմք է հանդիսացել «The Global Information Technology Report 2014-2015»-ը, World Economic Forum, Geneva, p. 8-12, 2015.

Ենթակառուցվածք և թվային բովանդակություն հենասյան մեջ Հայաստանի ցուցանիշում բացասական տեղաշարժ է եղել 0.2 միավորով, որի արդյունքում մեր երկիրը տարածաշրջանի երկրներից զիջում է Ռուսաստանին և Թուրքիային:

Մեծ աճ է գրանցվել Մատչելիություն հենասյան մեջ՝ 0.7 միավորով, որի արդյունքում Հայաստանը զբաղեցրել է 31-րդ դիրքը՝ 61 միավորով: Այս հենասյան մեջ ամենամեծ ցուցանիշ գրանցվել է Վրաստանում: Վերջինս զբաղեցնում է 7-րդ դիրքը՝ 6.6 միավորով: Հաջորդը Թուրքիան է՝ նույն միավորով, և զբաղեցնում է 8-րդ դիրքը, այնուհետև՝ Ռուսաստանը, որը զբաղեցնում է 15-րդ դիրքը՝ 6.5 միավորով: Այս հենասյան մեջ Իրանը և Ադրբեջանը զիջում են Հայաստանին՝ զբաղեցնելով 46-րդ դիրքը՝ 5.8 միավորով և 77-րդ դիրքը՝ 5.1 միավորով:

Չնայած այն հանգամանքին, որ Հմտություններ հենասյան մեջ բացասական տեղաշարժ է եղել 0.1 միավորով, այնուամենայնիվ, տարածաշրջանի երկրներից մենք զիջում ենք միայն Ռուսաստանին: Սակայն հարկ է նշել, որ երկու երկրներում էլ գրանցվել է միևնույն 5.3 միավորը:

Թեև Անհատական կիրառելիություն հենասյան մեջ աճ է գրանցվել 0.3 միավորով, այնուհանդերձ, մենք տարածաշրջանի երկրներից զիջում ենք Ռուսաստանին, Ադրբեջանին և Թուրքիային:

Բիզնես կիրառելիություն հենասյան մեջ բացասական տեղաշարժ է գրանցվել 0.2 միավորով, և առավելություն ունենք միայն Վրաստանի ու Իրանի նկատմամբ:

Ինչ վերաբերում է Կառավարության կիրառելիություն հենասյանը, ապա այստեղ դրական տեղաշարժ է եղել 0.5 միավորով, և տարածաշրջանի երկրներից մենք զիջում ենք միայն Ադրբեջանին:

Տնտեսական ազդեցություն հենասյան մեջ ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել: Մեր երկիրը 3.5 միավորով գտնվում է 50-րդ դիրքում՝ զիջելով միայն Ռուսաստանին և Ադրբեջանին:

Ամենամեծ դրական տեղաշարժը տեղի է ունեցել Սոցիալական ազդեցություն հենասյան մեջ՝ 0.8 միավորով, որի շնորհիվ Հայաստանը 80-րդ դիրքից տեղափոխվել է 58-րդ դիրք:

Հայաստանի դիրքերը ցածրից միջին եկամուտներ ունեցող երկրների արդյունքների համեմատ բավական բարձր են: Հայաստանը հիմնականում

բարելավել է դիրքերը Պետական օգտագործման հենասյունով, հատկապես պետության՝ էլեկտրոնային մասնակցության ցուցիչով, որը նախորդ տարիներին ամենաէական թերությունների շարքին է դասվել: Հայաստանի առավելություններից են նաև կառավարության էլեկտրոնային ծառայությունների, հեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցության, ինչպես նաև լայնաշերտ ինտերնետի սակագների ենթացուցիչները:

Այժմ *Աղյուսակ 3*-ի միջոցով ներկայացնենք Հայաստանի ամենալավ և ամենավատ դիրքերը և այդ ցուցանիշները համեմատենք տարածաշրջանի երկրների նույն ցուցանիշների հետ:

Եթե համեմատենք հարևան երկրների նույն ցուցանիշները, ապա կտեսնենք, որ Հայաստանը հեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցության ցուցիչով Վրաստանի և Թուրքիայի հետ գտնվում է հավասար դիրքերում: Սա մեր երկրի ամենամեծ առավելությունն է, և մյուս երկրները՝ Ռուսաստանը, Ադրբեջանը և Իրանը, զգալիորեն զիջում են Հայաստանին:

Հաջորդ առավելությունը բջջային ծառայությունների հասանելիությունն է: Այս ցուցանիշը մեր երկրում 100% է, այսպիսի ցուցանիշ գրանցել են նաև Ադրբեջանը և Թուրքիան: Վրաստանը, Ռուսաստանը և Իրանն այս ոլորտում բարեփոխումների լուրջ կարիք ունեն:

Հայաստանի հիմնական ուժեղ կողմերից է մնում ձեռնարկությունների գրանցման հետ կապված հիմնական գործընթացների դյուրինությունը: Ձեռնարկության հիմնման գործընթացների ցուցիչով Հայաստանը զբաղեցնում է 3-րդ տեղը 2 միավորով, հարևան երկրներից նման ցուցանիշ գրանցվել է միայն Վրաստանի ցուցանիշում, մնացած երկրները զգալիորեն զիջում են: Եթե համեմատենք, ապա ըստ ՀՏՖ տեղեկատվական տեխնոլոգիաներ 2015թ. զեկույցի՝ Ռուսաստանը ձեռնարկության հիմնման գործընթացների ցուցիչով զբաղեցնում է 37-րդ տեղը՝ 4 միավորով, Ադրբեջանը 9-րդն է՝ 3 միավորով, Իրանը՝ 58-րդն է 6 միավորով, իսկ Թուրքիան 78-րդը՝ 7 միավորով:

Կարևոր առավելություն է համարվում նաև մեծահասակների գրագիտության ցուցանիշը: Զեկույցում Հայաստանի բնակչության թվաքանակում մեծահասակների գրագիտության ցուցանիշը կազմում է 99.7%, նման ցուցանիշ գրանցվել է նաև Ռուսաստանում: Հարևան երկրներից Ադրբեջանին մենք զիջում են 9 միավորով, Վրաստանին՝ 3 միավորով: Իրանի և Թուրքիայի նկատմամբ ունենք առավելություն՝ համապատասխանաբար 65 և 38 միավորներով:

Աղյուսակ 3

ՅՊԻ ցուցանիշներով Հայաստանի և տարածաշրջանի երկրների
ամենալավ և ամենավատ դիրքերը

	ՀՀ	ԵՄ	Ալյրբեջան	Թուրքիա	Վրաստան	ԻԻՀ
Ամենալավ դիրքեր						
Հեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցություն	1	99	103	1	1	129
Բջջային ծառայությունների հասանելիություն, % բնակչությունից	1	103	1	1	65	97
Ձեռնարկության հիմնման գործընթացներ, քանակ	3	37	9	78	3	58
Ձեռնարկության հիմնման տևողություն, օր	8	66	17	36	2	69
Մեծահասակների գրագիտություն, %	12	10	3	50	9	77
Հարկի ընդհանուր դրույթաչափ, % շահույթից	14	111	80	83	10	98
Ամենավատ դիրքեր						
Պայմանագրերի կիրարկման գործընթացներ, քանակ	137	48	96	48	34	96
Առաջատար տեխնոլոգիաների պետական գնումներ	120	37	18	17	69	91
Աշխատակազմի վերապատրաստման մակարդակ	118	89	94	91	113	134
Կառավարման դպրոցների քանակ	116	104	124	100	98	103
Ընկերությունների կողմից տեխնոլոգիաների յուրացում	113	98	64	37	103	131
Դատախիրավական համակարգի անկախություն	107	109	99	101	65	89

Էական նշանակություն ունի նաև հարկի ընդհանուր դրույքաչափի ցուցիչի փոփոխությունը: Մեր երկիրն այս ցուցիչում գրավում է 14-րդ դիրքը՝ 20.4 միավորով: Հարևան երկրներից զիջում ենք միայն Վրաստանին, որը գտնվում է 10-րդ տեղում՝ 16.4 միավորով: Սա մեզ համար կարևոր մրցակցային առավելություն է, քանի որ մյուս երկրների ցուցանիշները ցածր են, օրինակ՝ ՌԴ-ն այդ ցուցանիշով գտնվում է 111-րդ դիրքում, Իրանը՝ 98-րդ, Թուրքիան՝ 83-րդ, իսկ Ադրբեջանը՝ 80-րդ դիրքում:

Խնդրահարույց ոլորտներից են դատախիրավական համակարգը, պայմանագրերի կիրարկումը, առաջատար տեխնոլոգիաների պետական գնումների գործընթացը, աշխատակազմի վերապատրաստման մակարդակը, ինչպես նաև ընկերությունների կողմից տեխնոլոգիաների յուրացումը:

Ամենացածր ցուցանիշը Հայաստանը գրանցել է պայմանագրերի կիրարկման պարագայում՝ զբաղեցնելով 137-րդ դիրքը՝ 49 միավորով: Հարևան երկրներն ունեն մեծ առավելություններ Հայաստանի նկատմամբ: Այս ցուցանիշով ամենալավ դիրքն ունի Վրաստանը՝ 34-րդ տեղ 33 միավորով: Ռուսաստանն ու Թուրքիան գրանցել են նույն ցուցանիշը՝ զբաղեցնելով 48-րդ տեղը 35 միավորով: Իսկ Ադրբեջանն ու Իրանը գտնվում են 96-րդ դիրքում, յուրաքանչյուրը՝ 40-ական միավորով:

Հաջորդ թույլ կողմը կապված է առաջատար տեխնոլոգիաների պետական գնումների հետ: Այս ցուցանիշով մենք գտնվում ենք 120-րդ դիրքում՝ 2.9 միավորով: Հարևան երկրներից ամենամեծ առավելությունն ունի Թուրքիան, որը գտնվում է 17-րդ դիրքում՝ 4.2 միավորով, այնուհետև Ադրբեջանը՝ 18-րդ դիրքում՝ 4.2 միավորով: Մյուս երկրներից Ռուսաստանը գտնվում է 37-րդ դիրքում՝ 4 միավորով, Վրաստանը՝ 69-րդ դիրքում՝ 3.5 միավորով, իսկ Իրանը 91-րդ դիրքում՝ 3.2 միավորով:

Հարկ է նշել, որ բավական ցածր դիրքեր ենք գրավում աշխատակազմի վերապատրաստման մակարդակի ցուցանիշում, որտեղ մեր երկիրը զբաղեցնում է 118-րդ դիրքը՝ 3.4 միավորով: Այս ցուցանիշով մենք առավելություն ունենք միայն Իրանի նկատմամբ, որը գտնվում է 131-րդ դիրքում՝ 3.7 միավորով: Մյուս երկրներից Ռուսաստանը գտնվում է 89-րդ դիրքում՝ 3.8 միավորով, Թուրքիան՝ 91-րդ դիրքում՝ 3.8 միավորով, Ադրբեջանը՝ 94-րդ դիրքում, իսկ Վրաստանը և Իրանը համապատասխանաբար 113-րդ և 134-րդ դիրքերում են:

Կառավարման դպրոցների քանակի ցուցանիշով տարածաշրջանի երկրներից մենք առավելություն ունենք միայն Ադրբեջանի նկատմամբ, վերջինս գտնվում է 124-րդ դիրքում, իսկ մեր երկիրը՝ 116-րդ: Հարևան երկրներից ամենալավ ցուցանիշն ունի Վրաստանը՝ 98-րդ դիրք, այնուհետև՝ Թուրքիան՝ 100-րդ դիրք, Իրանը՝ 103-րդ դիրք, իսկ Ռուսաստանը գտնվում է 104-րդ դիրքում:

Մեր կարծիքով՝ շատ կարևոր թերությունն է ընկերությունների կողմից տեխնոլոգիաների յուրացման խնդիրը: Համեմատություններ անցկացնելով տարածաշրջանի մյուս երկրների հետ՝ տեսնում ենք, որ այս ոլորտում շատ անելիքներ ունենք: Այս ցուցանիշի մեջ ամենաբարձր դիրք գրանցել է Թուրքիան՝ 37-րդ դիրք 5.2 միավորով: Մեր կարծիքով՝ սա վատ ցուցանիշ չէ, եթե համեմատենք մեր երկրի հետ, որը գտնվում է 113-դիրքում՝ 4.1 միավորով: Փաստ է նաև այն, որ Ադրբեջանը նույնպես խնդրին լուրջ է վերաբերվում, քանի որ գտնվում է 64-րդ դիրքում՝ 4.7 միավորով, այնուհետև 98-րդ դիրքում Ռուսաստանն է՝ 4.2 միավորով: Վրաստանը գտնվում է 103-րդ դիրքում՝ 4.2 միավորով:

Հաջորդ թերությունը դատախարակական համակարգի անկախության հետ կապված խնդիրն է: Այս ցուցանիշով տարածաշրջանի երկրներից առավելություն ունենք միայն Ռուսաստանի նկատմամբ, որը գտնվում է 109-րդ դիրքում՝ 2.9 միավորով: Հայաստանը նույն միավորով գտնվում է 107-րդ դիրքում:


Այսպիսով, պարզելով Հայաստանի ՅՊԻ ցուցանիշի ամենալավ և ամենավատ դիրքերը՝ մենք հստակ պատկերացում կազմեցինք, թե մեր երկիրն ինչ խնդիրներ ունի և որ ոլորտներին պետք է ուշադրություն դարձնել՝ տարածաշրջանի երկրների համեմատ մրցակցային առավելություններ ունենալու համար:

Հայաստանն ամեն տարի բարելավում է իր դիրքերը: Այդ մասին վկայում է ստորև բերված *Գծապատկեր 4*-ը:

Գծապատկեր 4 ից պարզ երևում է, որ եթե Հայաստանը 2007թ. զբաղեցնում էր 96-րդ տեղը 3.1 միավորով, ապա 2015թ. դիրքերը բարելավել է 38 կետով և զբաղեցրել 58-րդ տեղը 4.2 միավորով: Ամենավատ ցուցանիշ գրանցվել է 2009թ., երբ զբաղեցրել է 114-րդ դիրքը, այնուհետև տարեցտարի դրական տեղաշարժ է գրանցվել, և ամենալավ դիրքը ներկայիս դիրքն է:

Գծապատկեր 4

Հայաստանի ՑՊԻ դիրքը և միավորը 2007-2015թթ.¹



Այսպիսով, ՑՊԻ-ն հնարավորություն կընձեռի մեր երկրի կարևոր քաղաքական որոշումներ կայացնողներին՝ ազգային մրցունակության բարձրացման նպատակով, իրականացնել երկրի ռազմավարական ուղղվածության նախագծում: Այն հնարավորություն կտա մեր երկրին համադրել իր ՏՀՏ գործունեությունը և որոշել քաղաքականության արդյունավետությունը, կոգնի ընդգծել և բացահայտել այն ոլորտները, որոնք լավ կամ վատ են գործում այլ երկրների համեմատ և, ինչ խոսք, տրամադրում է նաև լավագույն փորձի օրինակներ:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ մեր երկիրը հստակ քայլերով գնում է դեպի բարեփոխություններ և փորձում է բարելավել իր դիրքերը:

Նոյեմբեր, 2015թ.

¹ «The Global Information Technology Report 2008-2009»-ը, World Economic Forum, Geneva, p.10-14, 2009, «The Global Information Technology Report 2010-2011»-ը, World Economic Forum, Geneva, p. 12-16, 2011 «The Global Information Technology Report 2012-2013»-ը, World Economic Forum, Geneva, p. 11-15, 2013, «The Global Information Technology Report 2014-2015»-ը, World Economic Forum, Geneva, p. 8-12, 2015.

**ՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԸ**

Տաթևիկ Ղազարյան

Ամփոփագիր

Հողվածում ուսումնասիրվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող ցանցային պատրաստվածության ինդեքսը, որը բնութագրում է տեղեկատվության և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման մակարդակն աշխարհում, ինչպես նաև դրա ազդեցությունը պետական մրցունակության վրա: Քանակական մեթոդի միջոցով իրականացվել է ցանցային պատրաստվածության ինդեքսի վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտել և հիմնավորել ՀՀ հեռահաղորդակցության զարգացման միտումները, դիրքն ու տեղը տարածաշրջանի երկրների շարքում: Վերլուծության ընթացքում պարզ է դարձել, որ Հայաստանը տարեցտարի բարելավում է իր ՑՊԻ դիրքն ու միավորները՝ դառնալով մրցունակ երկիր տարածաշրջանի երկրների նկատմամբ: Այդ մասին է վկայում այն, որ ԱՊՀ երկրների խմբում ՑՊԻ ցուցանիշով Հայաստանը 2015թ. զբաղեցրել է 4-րդ տեղը 9 երկրների շարքում: ՑՊԻ-ն հնարավորություն կընձեռի մեր երկրի կարևոր քաղաքական որոշումներ կայացնողներին՝ ազգային մրցունակության բարձրացման նպատակով, իրականացնել երկրի ռազմավարական ուղղվածության նախագծում:

**РЕГИОНАЛЬНЫЙ ИНДЕКС
СЕТЕВОЙ ГОТОВНОСТИ**

Татевик Казарян

Резюме

В статье исследован Индекс сетевой готовности, опубликованный на Всемирном экономическом форуме, который характеризует уровень развития информационно-коммуникационных технологий (ИКТ) в мире и его влияние на государственную конкурентоспособность. Индекс сетевой готовности проанализирован по количественному методу. Цель анализа – выявить и обосновать тенденции развития телекоммуникации РА, ранг и положение в странах региона. Анализ показывает, что Армения постоянно совершенствует свою позицию показатели по ИКТ, становясь конкурентоспособной в регионе. Об этом свидетельствует то, что в 2015г. РА заняла 4-е место среди 9 стран СНГ по *NRI*. В то же время следует отметить, что Индекс сетевой готовности даст широкие возможности лицам, принимающим важные политические решения в нашей стране, для повышения конкурентоспособности в плане дизайна стратегического направления страны.

**THE NETWORKED READINESS
REGIONAL INDEX**

Tatevik Ghazaryan

Resume

The article presents the World Economic Forum's Networked Readiness Index (NRI), which measures the propensity for countries to exploit the opportunities offered by information and communications technology (ICT). The index seeks to understand better the impact of ICT on the competitiveness of nations. The Network Readiness Index has been analyzed in the article using a quantitative method. The objective of the analysis is to identify and substantiate the development of telecommunication in the Republic of Armenia (RoA), along with its features, ranking and position in the region. The analysis shows that Armenia is improving its position and scores each year, becoming a competitive country in the region. This is evidenced by the fact that on NRI RoA was rated 4th among 9 countries in the CIS Group in 2015. At the same time, it can be stated, that NRI will give an opportunity for our country's most important political decision makers to enhance the competitiveness in terms of designing the strategic direction of the country.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 - *Шарипова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, շ. 15, М., 1986.
 - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ԸՂ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 18.03.2016թ.
Թիվ 1 (65), 2016թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՄԿ» ՍՊԸ տպարանում